



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 108 2018

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Երևան քաղաքի դատախազ, իրավ. գիտ. թեկնածու

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սյրեվանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ջրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 30.10.2018թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4,25 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2018թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ

Արթուր Դավթյանը Դուշանբեում ներկայացրել է կոռուպցիայի դեմ պայքարում Հայաստանի փորձը 3

ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ

ՀՀ զլխավոր դատախազ Արթուր Դավթյանը պարզևատրել է դատախազության համակարգի մի խումբ վետերանների 4

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում Ռուսաստանի Դաշնության արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինին 5

ՀՀ զլխավոր դատախազի տեղակալները հանդիպել են Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դուլյա Միլատովիչին 6

ՀՀ զլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանն ընդունել է Համաշխարհային բանկի և Եվրոպական հանձնաժողովի ներկայացուցիչներից կազմված պատվիրակությանը 7

ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հայկ Մկրտչյան Անձի անվտանգության ապահովումը որպես քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի առաջնահերթություն 9

Զարուհի Հարությունյան Անձի պաշտպանական մեխանիզմները՝ որպես կոռուպցիոն վարքագծի պատճառ 14

Երեմիա Ասատրյան, Արմեն Դուկասյան Կանանց հանցավորության վիճակը, մակարդակը, շարժընթացը և կառուցվածքը Հայաստանի Հանրապետությունում (պաշտոնական վիճակագրության հիման վրա) 21

Պարզև Օհանյան Պատիժը պայմանականորեն չկիրառելու օրենսդրական և դատական հիմնախնդիրները 29

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հովսեփ Քոչարյան Ձեռքբերման վաղեմությունն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման պետական համակարգի պայմաններում 34

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Արմինե Զոբանյան Մեդիացիայի իրավական կարգավորման խնդիրները՝ որպես անհատական աշխատանքային վեճերի լուծման այլընտրանքային միջոց Հայաստանի Հանրապետությունում 39

ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Աբրահամ Աբրահամյան Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերաբերականության հարաբերակցության հիմնախնդիրները սահմանադրական նոր կարգավորումների համատեքստում 44

Անդրանիկ Գևորգյան Ազգային անվտանգության «պետական» բնույթի սպառնալիքների տեսական հիմնահարցերը 48

Ներսես Զեյնալյան «Սահմանադրական կարգը տապալելը»՝ ՀՀ քրեական օրենսգրքում 53

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts 60

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները 68

ՀՀ ՂԵՏՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱՆԱԶՆԵՐԻ ԿՈՐԴԻՆԱՑԻՈՆ ԽՈՐՀՐԴԻ 28-ՐԴ ՆԻՍՏԻՆ

Նիստում համակողմանի քննարկման առարկա են դարձել ահաբեկչության և ծայրահեղականության այլ դրսևորումների, թմրանյութերի և հոգեներգործուն միջոցների ապօրինի շրջանառության, մարդկանց առևտրի, անօրինական միգրացիայի, կիբերհանցագործությունների, կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտներում իրականացվող համատեղ ծրագրերի



կատարման ընթացքն ու արդյունավետությունը, առկա մարտահրավերներն ու դրանց հակազդման համատեղ նոր միջոցառումների ձեռնարկման հեռանկարները:

Նիստի շրջանակներում ՀՀ գլխավոր դատախազը հանդես է եկել կոռուպցիայի դեմ համակարգային և քրեաիրավական պայքարի հայաստանյան փորձին և արդյունքներին վերաբերող ելույթով: Ներկայացվել են այս ուղղությամբ Հայաստանում վերջին տարիներին իրականացված հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ բարեփոխումները, դրանցից բխող օրենսդրական լուծումները, վերջիններիս գործադրման առկա պրակտիկան:

«Այդ բարեփոխումների, ինչպես նաև վերջին ժամանակաշրջանում քաղաքացիների աննախադեպ նախաձեռնողականության, իրավապահ մարմինների հետ համագործակցության շնորհիվ արձանագրվել են կոռուպցիայի

դեմ քրեաիրավական պայքարի բացառիկ ցուցանիշներ:

2018թ. առաջին կիսամյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, քննվող կոռուպցիոն բնույթի քրեական գործերի թիվն ավելացել է 55,4 տոկոսով, քննվող կոռուպցիոն բնույթի քրեական գործերով քրեական հետապնդման ենթարկված անձանց թիվը՝ 105 տոկոսով, դատարաններում քննվող գործերի թիվը՝ 50 տոկոսով: Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունավետության բարձրացման, դատավարական գործողությունների և դատախազական հսկողության միջոցների կիրառման շնորհիվ մի քանի անգամ բարձրացել է այնպիսի լատենտային հանցագործությունների բացահայտման ցուցանիշը, ինչպիսիք են պաշտոնեական դիրքի չարաշահումը, կաշառք տալը և ստանալը», - իր ելույթում նշել է Արթուր Դավթյանը:

Նա գործընկերներին տեղեկացրել է, որ նաև դատախազական ներգործության միջոցների ակտիվ և հետևողական կիրառման շնորհիվ 2018թ. ընթացքում բացահայտված՝ կոռուպցիոն հանցագործություններով պետությանը հասցված ընդհանուր վնասից արդեն իսկ հատուցվել է 5 մլն դոլարից ավելի գումար, իսկ 14 մլն դոլարի չափով վնասի գումար ապահովագրված է անհրաժեշտ քրեադատավարական գործիքակազմի, մասնավորապես՝ կոռուպցիոն հանցագործություններ կատարելու մեջ մեղադրվող անձանց անշարժ և շարժական գույքի, ֆինանսական հաշիվների նկատմամբ կալանքի կիրառմամբ:

Արթուր Դավթյանը համոզմունք է հայտնել, որ Հայաստանում իրականացվող այս ծավալուն միջոցառումները և կոռուպցիայի հանդեպ իրավապահ մարմինների կողմից դրսևորվող բացարձակ անհանդուրժողական մոտեցումը նպաստելու է կոռուպցիայի մակարդակի

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

և տարածվածության նվազմանը, խթանելու է կոռուպցիայի դեմ պայքարում հանրության կող-



մից իրավապահ մարմինների հանդեպ վստահության մեծացումը և ցուցաբերվող ներկայիս աննախադեպ աջակցության առավել ընդլայնումը:

«Վստահությունը հաստատվել է ԱՊՀ

անդամ երկրների գլխավոր դատախազների կողորդինացիոն խորհրդի դերն ԱՊՀ տարածքում կոռուպցիայի դեմ պայքարի ընդհանուր ուղենիշեր ստեղծելու, իրավական փոխօգնության ոլորտում գործակցության արդյունավետությունը բարձրացնելու, առաջացող խնդիրներին ընդհանուր ըմբռնողականության մթնոլորտում օպերատիվ լուծումներ տալու առումով:

Նիստի ընթացքում Կոորդինացիոն խորհրդի 20-ամյա հորելյանի կապակցությամբ «Վստահությունը հաստատվել է ԱՊՀ ԳԴԿԻՍ 20-ամյակը» մեղալով՝ ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազների կողորդինացիոն խորհրդի զարգացման, նրա գործունեության կատարելագործման, այդ նպատակներով ԱՊՀ երկրների դատախազությունների միջև համագործակցության ամրապնդման մեջ ներդրած ավանդի և արժանիքների համար:

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻ

«Վստահությունը հաստատվել է ԱՊՀ ԳԴԿԻՍ 20-ամյակը» օրինակականության և իրավակարգի ամ-



րապնդման գործում ներդրած ավանդի և «Վստահությունը հաստատվել է ԱՊՀ ԳԴԿԻՍ 20-ամյակը» մարմիններում երկարամյա աշխատանքի համար դատախազության մի խումբ վետերանների պարգևատրել է Հայաս-

տանի դատախազության կազմավորման 100-ամյակին նվիրված հուշամեդալով:

«Վստահությունը հաստատվել է ԱՊՀ ԳԴԿԻՍ 20-ամյակը» մեղալով՝ ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազությունում այդ առթիվ կազմակերպված ընդունելությանը ողջունելով ներկա մոտ երեք տասնյակ վետերանի և հանձնելով պարգևները՝ Արթուր Դավթյանը նրանց շնորհակալություն է հայտնել երկարամյա գործունեության ընթացքում կատարած օրինակելի, բարեխիղճ և պատվախնդիր աշխատանքի, այդպիսով նաև՝ պետականության ամրապնդման գործում ունեցած վաստակի համար:

«Վստահությունը հաստատվել է ԱՊՀ ԳԴԿԻՍ 20-ամյակը» մեղալով՝ ԱՊՀ անդամ երկրների գլխավոր դատախազներին ավագ սերնդի կուտակած փորձը, լավագույն արժեքները կարևոր նախադրյալ են ժամանակակից հասարակության պահանջներին և ներկայիս մարտահրավերներին համահունչ դատախազության ֆունկցիոնալ դերակատարության վերարժևորման համար: Հա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

մակարգի հետ շփումների սերտացման, կուտակած փորձառությունը դատախազների նոր սերնդին փոխանցելու գործունե կառուցակարգերի ստեղծման տեսանկյունից՝ Արթուր Դավթյանը կարևորեց Դատախազության վետերանների միության ստեղծումն ու ակտիվ գործունեությունը: ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ միությունն ուրույն դերակատարություն է ունեցել Դատախազության կազմավորման 100-ամյակին նվիրված միջոցառումները բարձր մակարդակով անցկացնելու աշխատանքներում, որոնց շնորհիվ հաջողվեց Հայաստանի 100-ամյա դատախազությունն արժանապատիվ կերպով ներկայացնել հոբելյանական միջոցառումներին մասնակցելու համար Հայաստան ժամանած արտերկրյա պատվիրակություններին ու միջազգային գործընկերներին:

Շնորհակալություն հայտնելով գնահատանքի համար՝ վետերանները շեշտել են, որ ուշադրությամբ հետևում են դատախազության

ներկայիս գործունեությանը, հանցավորության դեմ պայքարում, իրավակարգի ամրապնդման



գործում ստանձնած նշանակալի դերակատարմանը՝ պատրաստակամություն հայտնելով իրենց ուժերի սահմաններում օժանդակելու համակարգին:

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՏԱՆՈՒՄ ՌՈՒՍԱՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆ ՍԵՐԳԵՅ ԿՈՊԻՐԿԻՆԻՆ

Քննարկվել են երկու երկրների միջև քրեա-իրավական ոլորտում փոխհարաբերությունների զարգացման նոր հնարավորություններին վերաբերող հարցեր:

Պարոն Կոպիրկինը շեշտել է երկու երկրների իրավապահ համակարգերի միջև կապե-

րի առավել ամրապնդման անհրաժեշտությունը և այդ հարցում ՌԴ դեսպանության օժանդակության պատրաստակամությունը:

ՀՀ գլխավոր դատախազը բարձր է գնահատել ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև առկա գործակցությունը, որը լիարժեք համապատասխանում է երկու պետության դաշնակցային, բարեկամական հարաբերությունների բարձր մակարդակին և ոգուն:

Արթուր Դավթյանն ընդգծել է, որ 2006թ. առ այսօր գլխավոր դատախազների մակարդակով ՀՀ և ՌԴ դատախազությունների միջև հաստատվող համագործակցության ծրագրերը լայն հնարավորություններ են տալիս համատեղ միջոցառումներով կատարելագործելու մասնագիտական ռեսուրսները, ձևավորելու ի-



THE PROSECUTOR GENERAL'S OFFICE OF THE RA

րավական փոխօգնության արդյունավետությունը բարձրացնելու առավել անմիջական միջավայր, նախանշելու համագործակցության շրջանակներն ընդլայնելու նոր ուղղություններ:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև բարեկամ երկրների միջև քաղաքացիների և ծառայությունների տեղաշարժի ակտիվացմանը զուգահեռ միմյանց երկրներում քաղաքացիների իրավունքների քրեաիրավական պաշտպանության առավել գործուն մեխանիզմների կիրառմանը, արդարադատությունից խուսափող անձանց հայտնաբերելուն, անդրազգային բնույթի հանցագործությունների դեմ պայքարում համատեղ ջանքերն ավելացնելուն առնչվող խնդիրներին:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել օրակարգային խնդիրներն ավելի օպերատիվ

լուծելու նպատակով հաճախակի դարձնել նմանատիպ հանդիպումները:

«Վախճանի դատախազը նաև ցավակցություն է հայտնել դեսպանին՝ ՌԴ վախճանի դատախազի տեղակալ Սահակ Կարապետյանի ողբերգական մահվան կապակցությամբ: Արթուր Դավթյանը նշել է, որ դա մեծ կորուստ էր նաև Հայաստանի դատախազության համակարգի համար, քանի որ բարձր մասնագիտական հատկանիշներով օժտված հայազգի գործիչն իր բազմափուլ աշխատանքով, հատկապես՝ վերջին տասնամյակում նաև գործունեության բնույթով պայմանավորված, առանձնահատուկ սրտացավությամբ և ջանասիրությամբ մեծապես նպաստել է երկու երկրների դատախազական կառույցների միջև հարաբերությունների զարգացմանը:

ՀՀ ՎԱՃԱՆԻ ԴԱՏԱՊԱՐԿԱՆ ԵՎ ԿԱՊԱՆԱԿԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԴԵՍՊԱՆԻ ԵՎ ՎԱՃԱՆԻ ԴԱՏԱՊԱՐԿԱՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԳԻ ԿԱՐԿԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՐԿԱՆՈՒՄԸ

«Վախճանի դատախազությունում կայացել է հանդիպում Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Դունյա Միլատովիչի գլխավորած պատվիրակության հետ,



հայկական կողմից մասնակցել են «Վախճանի դատախազի տեղակալներ Արմեն Հարությունյանը, Հայկ Ասլանյանը և Դավիթ Մելքոնյանը:

Քննարկվել են Հայաստանում ընտանեկան բռնության դեպքերին առնչվող քրեական գործերով իրականացվող քննությունների օրի-

նականության նկատմամբ դատախազական հսկողության և ներգործության միջոցների արդյունավետությանը, կանանց և խոցելի այլ խմբերի քրեաիրավական պաշտպանության իրավիճակին, կառուցակարգերին առնչվող հարցեր:

«Վախճանի դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը ներկայացրել է ընտանեկան բռնությունների դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կատարված և այս տարվա հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները, որոնցով, տուժողի կողմից բողոք ներկայացնելուց անկախ՝ ընտանիքում բռնության հանցագործության դեպքերում դատախազին տրվել է իրավասություն հարուցելու քրեական գործ, եթե անձն իր անօգնական վիճակի կամ ենթադրյալ հանցանք կատարողից կախվածության մեջ լինելու փաստի ուժով չի կարող պաշտպանել իր իրավաչափ շահերը: Բացի այդ՝ շեշտվել է, որ «Վախճանի դատախազի հանձնարարությամբ մշակվել և ներկայումս լայնորեն գործադրվում են ընտանեկան բռնության հանցագործությունների հատկանիշների գնահատման և քրեա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

կան գործ հարուցելու հիմքերի պարզման չափորոշիչներ, ինչն էապես նպաստում է նման դեպքերով քննությունների որակի և արդյունավետության բարձրացմանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաև 2008թ. մարտի 1-2-ի դեպքերի առթիվ քննվող քրեական գործի և ՀՀ ՀՔԾ պետի և ՀՀ ԱԱԾ տնօրենի հեռախոսագրույցի գաղտնալսման և հրապարակման դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանության խնդրին:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հայկ Ասլանյանը նշել է, որ 2008թ. մարտի 1-2-ի դեպքերի առթիվ քննվող քրեական գործով որպես մեղադրյալներ են ներգրավվել նախկին բարձրաստիճան պաշտոնատար անձինք, ներկայումս իրականացվում է ակտիվ նախաքննություն՝ այդ դեպքերի բոլոր հանգամանքների լրիվ օբյեկտիվ և բազմակողմանի բացահայտման նպատակով: Նախաքննության օրինականության նկատմամբ իրականացվում է պատշաճ դատախազական հսկողություն, ինչի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ստեղծվել է դատախազական խումբ:

Անդրադառնալով ՀՀ ՀՔԾ պետի և ՀՀ ԱԱԾ տնօրենի հեռախոսագրույցի գաղտնալսմանը և հրապարակմանը՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալն ավելացրեց, որ հարուցվել է երկու քրեական գործ, և ներկայումս իրականացվում է նախաքննություն ինչպես առերևույթ հեռախոսային խոսակցությունների գաղտնիությունը խախտելու հանգամանքների բացահայտման, այնպես էլ պաշտոնատար անձանց կողմից հնարավոր պաշտոնական լիազորություններն անցնելու, այդ թվում նաև պաշտոնական դիրքի օգտագործմամբ արդարադատության իրականացումը խոչընդոտելու և պաշտոնական հանցագործությունների այլ մասնավոր դրսևորումները պարզելու ուղղություններով:

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարն իր հերթին նշել է, որ հատկապես անպատժելիության մթնոլորտ չստեղծելու նպատակով չափազանց կարևոր է հանցագործություններ կատարած բոլոր անձանց քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովումը՝ դատավարության ողջ ընթացքում օրինականության և դատավարության բոլոր մասնակիցների իրավունքների լիարժեք ապահովմամբ:

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՄԵԼԵՈՆՅԱՆԸ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՄԱՆԽԱՐՀԱՅԻՆ �ԱՆԿԻ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐԻՅ ԿԱԶՄՎԱԾ ԴԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել Հայաստանի դատաիրավական հա-



մակարգի արդիականացմանն ուղղված բարեփոխումների շրջանակներում ՀՀ դատախազության հետ համագործակցության ընդլայնմանը, համատեղ ծրագրերի իրականացմանը: Մասնավորապես՝ քննարկվել է ՀԲ-ի աջակցությամբ Եվրոպական հանձնաժողովի կողմից նախաձեռնված ԵՄ Արևելյան գործընկերության մաս կազմող, ինչպես նաև բալկանյան 12 երկրի մասնակցությամբ տարածաշրջանային ընդգրկման նոր ծրագրում ՀՀ դատախազության մասնակցության հնարավորությունների վերաբերող հարցեր:

Ծրագիրն ուղղված է մասնակից երկրներում դատաիրավական համակարգի բարեփոխումների ռազմավարության մշակմանը, արդարադատության մատչելիության, անկախության, արդյունավետության բարձրացմանը, համակարգում բարեվարքության նորմերի կիրառությանը, դրանց վերաբերյալ շահագրգիռ շրջանակների իրազեկվածության և մասնակցայնության ապահովմանը, դատաիրավական համակարգի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությանը:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Դավիթ Մելքոնյանը նման ծրագրի իրականացումը կարևորեց հատկապես դատախազական համակարգում առկա խնդիրների համակող-

մանի վերհանման և վերլուծման շնորհիվ թիրախային լուծումներ գտնելու, ինչպես նաև քրեական դատավարության մասնակիցների մեջ դատախազական գործունեության վերաբերյալ անաչառ պատկերացումների ձևավորման տեսանկյունից:

Դավիթ Մելքոնյանը հյուրերին փոխանցեց այդ նախաձեռնությանը ՀՀ գլխավոր դատախազության մասնակցության և հնարավոր բոլոր միջոցներով աջակցելու պատրաստակամությունը՝ հիմնված ինչպես եվրոպական կառույցների, այնպես էլ ՀԲ-ի հետ տևական արդյունավետ համագործակցության ընթացքում ձեռք բերված փոխվստահության և փորձի վրա:



ՀԱՅԿ ՄԿՐՏՉՅԱԼ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՋՆԱԶԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Գլոբալացումը դառնում է ժամանակակից աշխարհի կարևորագույն թեմաներից մեկը: Արդի դարաշրջանի իրավական գլոբալացումն իր հետ բերում է բազմաթիվ քրեականորեն նշանավոր հետևանքներ՝ ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային նշանակությամբ: Ռուսաստանում, Հայաստանում և հետխորհրդային տարածության այլ երկրներում հանցավորությունն ունի դինամիկ ու անմխիթար բնույթ:

Այս համայնապատկերում անձի, հասարակության ու պետության անվտանգությունն արդյունավետ կերպով և ժամանակին ապահովելը դառնում է համաշխարհային մասշտաբով հիմնարար հիմնախնդիր¹:

Իրավաբանական գրականության մեջ արդարացիորեն նշվում է. «Գիտական մոտեցումների հիման վրա քրեական քաղաքականության հայեցակարգային պարամետրերի մշակման պահանջը պայմանավորված է հասարակության, համաշխարհային ընկերակցության ու պետության այսօրվա իրավիճակով, իրավակարգի ու ազգային անվտանգության ապահովման համակարգի ձևավորմամբ ու գործառնությամբ»²: Անվտանգության հայեցակարգի ժամանակակից հասկացական-կատեգորիալ ապարատը բավականաչափ հարուստ է: Կարելի է մեջբերել անվտանգության հետևյալ սահմանումը. «Անվտանգությունը հասարակության կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության զարգացման վիճակն ու միտումն է, դրա ներքին կառույցների պաշտ-

պանումը ներքին ու արտաքին սպառնալիքներից»³:

Մարդու անվտանգության ապահովման խնդիրը լուծելու համար բացառիկ նշանակություն ունի ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը:

Տվյալ նորմատիվ ակտերում սահմանվում են անձի, հասարակության ու պետության՝ արտաքին ու ներքին սպառնալիքներից կենսական կարևորություն ունեցող շահերի պաշտպանվածության ապահովման առավել ընդհանուր ճանապարհները: Հատուկ ուշադրության են արժանանում ազգային անվտանգության օբյեկտի բոլոր երեք բաղադրիչի իրավական ապահովման գաղափարները:

Մարդու, հասարակության ու պետության անվտանգության ապահովումը հարկավոր է դիտարկել իբրև քրեական քաղաքականության նոր ուղղություն: Քրեական քաղաքականության ժամանակակից տեսության, գործող քրեական օրենսդրության և իրավակիրառական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանցավոր ոտնձգություններից քրեաիրավական պաշտպանության օբյեկտների նշված եռյակի անվտանգության առավելագույն ապահովումը մեկն է քրեական քաղաքականության առաջնահերթություններից, որոնք հաշվարկված են ինչպես ժամանակակից ժամանակաշրջանի, այնպես էլ՝ ապագայի համար: Այդ առաջնահերթությունը որոշակի մարմնավորում է գտել 2003թ. ՀՀ ՔՕ-ում, որում իրավապաշտպանվող հարաբերությունների հիե-

¹ Տե՛ս Աветисян С.С. Проблемы уголовно-правовой охраны личности, общества и государства. Избранные труды. Ереван, 2016, էջ 215:
² Տե՛ս Энциклопедия уголовного права. Т. 1. Понятие уголовного права. Глава 1. Понятие уголовной политики, ее содержание и принципы. Издание профессора Малинина. СПб., 2005: էջ 119: Автор главы – Лесников Г.Ю. 2. Экономическая и национальная безопасность: Учебник /Под ред. Е.А. Олейникова. М.: Изд-во “Экзамен”, 2005: էջ 14:
³ Տե՛ս Ազգային անվտանգության մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Երևան, 2016, էջ 77:

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

րարխիան հիմնվում է արժեքների ընդհանուր համակարգի՝ անձ – ընտանիք – հասարակություն – պետություն, վրա:

Քանի որ ընդհանուր առմամբ անվտանգության ապահովումը պետության առաջնություն է, իսկ պետությունը գործում է, օգտագործելով իր իշխանական-իրավական մեխանիզմը, ակնհայտ է, որ իրավաբանական կողմը կարևոր տեղ է զբաղեցնում կենսականորեն կարևոր շահերի ու ազգային արժեքների անվտանգության ապահովման համակարգում:

Հիմնարար մարդկային արժեքների անվտանգության իրավաբանական ապահովումն ունի բազմաթիվ ուղղություններ:

Այդ ուղղությունների շարքում հատուկ տեղ է պատկանում քրեաքաղաքական ապահովմանը, որը ներառում է քրեաիրավական, քրեադատավարական, քրեաբանական, քրեական, քրեակատարողական ուղղությունները: Բոլոր ուղղություններում կարևորվում է մարդու անվտանգության հիմնախնդիրը, քանի որ հասարակության ու պետության անվտանգությունը պետք է սկսվի մարդու անվտանգությունից: Այլ կերպ ասած՝ անձի անվտանգության հիմնախնդիրը պետք է լինի գերիշխող, ուստի դա պետք է լուծել այնպես, որ բոլոր հարցերի լուծումը չխոչընդոտի մարդու իրավունքներն ու օրինական շահերի իրականացումը:

Տվյալ եզրակացությունը բխում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածից, որի համաձայն. «1. Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է: 2. Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգումն ու պաշտպանությունը հանրային իշխանության պարտականություններն են: 3. Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»:

Անձի, հասարակության ու պետության անվտանգության քրեաիրավական պաշտպանությունն առանցքային տեղ է զբաղեցնում ընդ-

հանուր իրավական և քրեաիրավական քաղաքականությունում:

Պետության քրեական քաղաքականության իրավական հիմք է քրեական օրենսդրությունը: Հատկանշական է, որ ՀՀ Քրեական օրենսգիրքն զգալիորեն մեծացրել է անձի անվտանգության ապահովման նկատմամբ ուշադրությունը:

Առաջինը՝ ՀՀ ՔՕ հոդ. 1-ի մ. 1-ում ամրագրվել է ոչ միայն որոշակի օրենքների քրեաիրավական պաշտպանության և հանցագործությունների կանխարգելման, այլև՝ խաղաղության ու մարդու անվտանգության ապահովման մասին:

Իրավաբանական գրականության մեջ գոյություն չունի «պաշտպանություն» ու «ապահովում» հասկացությունների հարաբերակցության նկատմամբ կարծիքների միասնություն⁴: Այնուհանդերձ՝ այդ բառերի ստուգաբանական և տրամաբանական մեկնաբանումը թույլ է տալիս պնդել, որ մարդկության խաղաղության ու անվտանգության ապահովումը քրեական օրենսդրության խնդիրներից մեկն է: Կան բոլոր հիմքերը ենթադրելու, թե ողջ քրեական օրենսդրությունն ու դրա նորմերի կիրառման պրակտիկան պետք է ուղղված լինեն անձի անվտանգության ապահովմանը: Միայն այդ հիմքի վրա հնարավոր է ազգային անվտանգության իրական ապահովումը:

Նշված դիրքորոշումը համապատասխանում է Ազգային անվտանգության ռազմավարության հիմնական դրույթներին, որոնց համաձայն՝ անձի շահերը սահմանադրական իրավունքների ու ազատությունների իրագործման, անձնական անվտանգության ապահովման, կյանքի որակի ու մակարդակի բարձրացման, մարդու և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր ու մտավոր զարգացման մեջ են:

Երկրորդը՝ անձի անվտանգության ապահովումը դարձել է քրեական օրենսդրության ու քրեական պատասխանատվության սկզբունք:

ՀՀ ՔՕ հոդ. 11-ում նշվում է, որ Քրեական օրենսգիրքն ապահովում է մարդու ֆիզիկական, հոգեբանական, նյութական, բնապահպանական և անվտանգության այլ տեսակները:

⁴ Сѣн Новоселов Г.П. Учение об объекте преступления. Методологические аспекты. М.: Изд-во НОРМА, 2001: էջ 61-62:

Երրորդը՝ Հատուկ մասը լրացվել է քրեական պատասխանատվության հիմնավորվածության ու արդարության երաշխիք-նորմերի զգալի թվով: Դրանց թվին հարկավոր է դասել՝

1) սահմանադրության ու միջազգային իրավունքի նորմերի առաջնայնությունը սովորական, այդ թվում՝ քրեական օրենսդրության նկատմամբ, ինչը պարտավորում է դիմել դրանց՝ մարդու իրավունքների ու ազատությունների հարցերը լուծելիս,

2) անձի անվտանգության ապահովման՝ իբրև քրեական իրավունքի հիմնական սկզբունքներից ու խնդիրներից մեկը.

3) քրեական օրենքի հետադարձ ուժի արգելումը՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

4) ՀՀ ՔՕ-ում արդարության սկզբունքի ամրագրումը,

5) միևնույն հանցագործության համար կրկնակի քրեական պատասխանատվությանը ենթարկելն ու մեղադրանքի բացառումը,

6) սահմանափակ մեղսունակության ինստիտուտի ներմուծումը,

7) հանցագործությունը նախապատրաստելու համար պատասխանատվության սահմանափակումը միայն ծանր ու առանձնապես ծանր կատեգորիաներով,

8) արարքի հանցավորությունը բացառող հանգամանքների ընդարձակումը,

9) պատիժ նշանակելիս մեղադրյալի կյանքի պայմանների հաշվառումը (հոդ. 60, մ. 3),

10) անչափահասների նկատմամբ օրենսդրության մարդասիրացումը:

Չորրորդը՝ ՀՀ ՔՕ-ի Հատուկ մասը կառուցված է հիմնականում ըստ մարդու, հասարակության ու պետության անվտանգության տեսակների:

Այդտեղ հստակորեն առանձնացվում է անձի կենսական ու ֆիզիկական անվտանգության նկատմամբ ոտնձգություն գործող հանցագործությունների մասին (սպանություն, առողջությանը տարբեր տեսակի վնաս հասցնելը), սեռական, քաղաքական, նյութական անվտանգություն, մասնավորապես՝ սեփականության դեմ ուղղված հանցագործությունները և այլն:

Հատուկ մասի համակարգը լրացված է տնտեսության, բնապահպանական և տեղե-

կատվական անվտանգության դեմ ուղղված նոր հանցակազմերով և այլն:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Հայաստանի գործող քրեական օրենսդրությունը մարդու անվտանգության հարցերը ոչ լրիվ, հատվածային է լուծում:

1. Կան բոլոր հիմքերը և օբյեկտիվ պահանջ համակարգի գիտական շրջանառության մեջ ներմուծելու անձի հոգեբանական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համակարգը:

Հոգեբանական անվտանգության հանդեպ ոտնձգությանն առնչվող հանցագործությունների համակարգը կարելի է դիտարկել իբրև զանազան օբյեկտներին ուղղված արարքների ամբողջություն.

ա) անձի բնականոն հոգեկան գործունեություն ապահովող հարաբերություններ (դրանք են՝ շորթումը, ինտիմ կյանքի մասին տեղեկությունները տարածելու նպատակով հավաքելը և այլն),

բ) հարաբերություններ, որոնք կազմում են սոցիալ-հոգեբանական անվտանգության հիմքը: Այդպիսի հանցագործությունները ներառում են հոգեկանի վրա զանգվածային ազդեցություն (օրինակ՝ հեռուստատեսային հոգեթերապիայի չարտոնված անցկացում, մարդկանց կուտակումների վրա չարտոնված միջոցներով ներգործություն՝ նպատակ ունենալով դադարեցնել որևէ զանգվածային միջոցառումները, մասնավորապես՝ հանրահավաքները, ժողովները, ցույցերը, զանգվածային անկարգությունների կազմակերպումները և այլն, առանց տուժողի համաձայնության, խաբեությամբ առողջության զանգվածային խանգարում առաջացնող հոգեբանական փորձերի անցկացում և այլն), բնական միջավայրի նկատմամբ ազդեցություն՝ իբրև մարդկանց հոգեկանի նկատմամբ ոտնձգության եղանակ, նախապես հայտնի կեղծ գիտական գաղափարների տարածումը, որոնք առաջացնում են վախ, տազնապ, զանգվածային անկարգություններ և հակահասարակական այլ գործողություններ,

գ) քրեական օրենքով պաշտպանվող այլ հարաբերություններ: (Այստեղ հնարավոր են հանցագործություններ, որոնցում հոգեբանական առողջության նկատմամբ ոտնձգությունը հանդես է գալիս իբրև հստակ հակահասարա-

կական նպատակներին հասնելու միջոց: Սովորաբար դա նվաճվում է անձի գիտակցության նկատմամբ վերահսկում իրականացնելու ճանապարհով: Այդպիսի եղանակների օգնությամբ հնարավորություն է առաջանում օգտագործելու մարդուն՝ իբրև հանցագործության գործիք այլ շահերին վնաս հասցնելու համար՝ սպանություններ, առողջությանը վնաս պատճառում, կողոպուտներ, պետական և այլ գաղտնիք հանդիսացող տեղեկությունների հավաքում, փոխանցում և այլն):

2. ՀՀ Քրեական օրենսգրքում ոչ պատշաճ մակարդակով են կարգավորվում տեղեկատվական անվտանգության համար քրեական պատասխանատվության հարցերը:

Մեր կարծիքով՝ տեղեկատվական անվտանգությունը հարկավոր է դիտարկել իբրև քրեաիրավական պաշտպանության ինքնուրույն տեսակային օբյեկտ: Տեղեկատվական անվտանգության նկատմամբ ոտնձգությունները կարող են կատարվել ոչ միայն համակարգչային տեխնիկայի օգտագործման միջոցով:

Տեղեկատվական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների համար քրեական պատասխանատվության իրավական կարգավորման ընթացքում կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ տեղեկատվությունը կարող է լինել ոչ միայն հանցագործությունների կատարման միջոց, այլև՝ քրեական ոտնձգություններից պաշտպանության առարկա:

3. Մարդու անվտանգության՝ իբրև քրեական օրենսդրության սկզբունքի բուն հռչակումը, անձի՝ իբրև ոտնձգության օբյեկտի ՔՕ Հատուկ մասի նորմերում առանձնացումը չեն ստացել իրենց պատշաճ զարգացումը: Հատուկ մասի ողջ համակարգը կառուցված է ավանդական եղանակով, որի համաձայն՝ մարդու կյանքն ու առողջությունը բազմաթիվ հանցակազմերում հանդես են գալիս իբրև քրեաիրավական պաշտպանության ֆակուլտատիվ (լրացուցիչ) օբյեկտներ՝ զիջելով որոշակի հասարակական հարաբերություններին: Օրենսդրական այդպի-

սի մոտեցումը չի համապատասխանում մարդուն, նրա իրավունքներն ու ազատությունները գերագույն սոցիալական արժեք ճանաչելու մասին սահմանադրական մոտեցմանը:

Գ. Պ. Նովոսելովը, ով մշակել է «հանցագործության օբյեկտը միշտ մարդիկ են» հայեցակարգը, տեղին նկատում է. «Ոչ թե մարդիկ գոյություն ունեն հանուն հասարակական հարաբերությունների, այլ՝ հասարակական հարաբերություններն առաջանում են մարդկանց շահերի իրականացման համար, և ուստի պարզ չէ գլխավորը. ինչո՞ւ անձին, հասարակության անդամներին վնաս պատճառելու գործում պետք է տեսնել իրենց միջև առկա հարաբերությունների նկատմամբ ոտնձգությունները, այլ ոչ թե հակառակը, հասարակական հարաբերությունների խախտման մեջ տեսնել դրանց մասնակիցներին վնաս պատճառելը: Տվյալ դեպքում հեղինակների տրամաբանությունը թելադրված է այն հանգամանքով, որ, հնարավորություն չունենալով նշելու վնասի արտահայտման հստակ հատկություններն ու ձևերը, որն իբր հասցվում է հանցագործությամբ հասարակական վերաբերմունքին, իրենք ստիպված են փոխարինել այդ վնասը այն վնասով, որն իրականում հասցվում է կամ կարող է հասցվել մարդկանց կամ, ինչպես ասում են՝ հասարակական հարաբերությունների մասնակիցներին (սուբյեկտներին): Չհամոզելով զբաղեցրած դիրքորոշման հիմնավորվածության մեջ, հեղինակի ստանձնած տրամաբանությունը հաստատում է մի փաստ. ոչ մի այլ վնաս, բացի մարդկանց հասցվող վնասից, հանցագործությունը հասցնել չի կարող»⁵:

Պրոֆեսոր Ս. Ավետիսյանը հիմնավորել է ՔՕ-ի Հատուկ մասի ողջ համակարգի վերանայման անհրաժեշտությունը՝ այնպես, որ մարդու կյանքն ու առողջությունը միշտ հանդես գան որպես ոտնձգությունների հիմնական օբյեկտներ⁶:

Նոր մոտեցման իմաստն այն է, որ այդ ուղղությամբ քրեական օրենսդրության զարգացումը թույլ կտա հիմնվել միայն անձի, հա-

⁵ Տե՛ս Новоселов Г. П. նշված աշխ. էջ 63:

⁶ Տե՛ս Аветисян С.С. Актуальные проблемы развития уголовного права России и Армении в контексте обеспечения юридической безопасности человека. Уголовно-правовая защита конституционных прав человека (к 15-летию Конституции России) // Сборник материалов международной научно-практической конференции 26-27 мая, 2009 г.: БИЭПП-БИИЯМС, СПб, 2009, էջ 5-7:

սարակության ու պետության անվտանգության վրա:

Քրեականացում են պահանջում նաև հասարակայնորեն վտանգավոր այլ արարքներ, որոնք ոտնձգություն են իրականացնում մարդու հոգևոր, մտավոր, վերարտադրողական, բնապահպանական, տնտեսական անվտանգության նկատմամբ:

Ընդ որում՝ հարկավոր է ընդգծել, որ դեպի մարդկային գործոնը շրջադարձը, որն սկսվել էր սոցիալական, իրավական ու ժողովրդավարական հասարակության կառուցման ընթացքում, ստիպում է քրեական իրավունքի տեսանկյունից մարդուն դիտարկել իբրև ինքնուրույն արժեհամակարգ, որը քրեական օրենսդրությամբ պաշտպանվող առավել կարևոր սոցիալական արժեք է:

Ի տարբերություն սոցիալական (ազգային, պետական) անվտանգությունից՝ անձի

անվտանգությունը բնութագրում է այն պայմանները, որոնք պաշտպանում են անձի օրինական և կենսական շահերը՝ բոլոր դրսևորումներում: Առարկան ոչ թե հասարակությունն է, այլ՝ անհատը, իր բոլոր հատկություններով, որակներով ու հարաբերություններով հանդերձ: Ուստի հիմքեր կան պնդելու, որ պետության (ազգային) անվտանգությունը պետք է սկսվի անձի անվտանգության ապահովմամբ: «Անձի անվտանգության շահերը հաշվի առնելու վրա չհիմնվող պետության անվտանգության հայեցակարգի կառուցման յուրաքանչյուր փորձեր դատապարտված են անհաջողության»⁷:

Այսպիսով՝ անձի անվտանգության ապահովումը հարկավոր է դիտարկել արդի քրեական իրավունքի տեսության, պրակտիկայի ու քրեաիրավական քաղաքականության հրատապ ուղղություններից և առաջնահերթություններից մեկը:



⁷ Стѹ Тер-Акопов А.А. Безопасность человека (теоретические основы социально-правовой концепции). М.: Изд-во МНЭПУ, 1998, էջ 5:

ԶԱՐՈՒՎ ԿԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«Այնտեղ» կառավարման ակադեմիայի
պայմանագրային դասախոս

**ԱՆՁԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ՝
ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՌ**

Կոռուպցիոն վարքագիծը շատ վաղ ժամանակներից է հայտնի մարդկությանը, այդ մասին հիշատակվում է դեռևս Աստվածաշնչում:

Աստվածաշնչում նշվում է, որ այն ժամանակ, երբ Սամուելը ծերացավ, նա իր որդիներին նշանակեց դատավորներ Իսրայելում, բայց նրա որդիները չգնացին հոր ճանապարհով, այլ, ազահության հետևից ընկնելով, վերցնում էին կաշառք և խախտում իրավունքը (Թագավորաց 8:1-3):

Նշվում է Փելիքսի պատմությունը, ով հույս ուներ, որ Պողոս Առաքյալը իրեն կաշառք կտա ազատման դիմաց: Մինչդեռ Պողոս Առաքյալը կաշառք չտվեց ու մնաց անազատության մեջ կապված (Գործք Առաքելոց 24:26): Մեկ այլ հատվածում նշվում է, որ Սիմոնն առաջարկում է առաքյալներին կաշառք, որպեսզի այն իշխանությունը, որն առաքյալներն ունեին Սուրբ Հոգու մկրտության համար, տրվեր նաև իրեն, մինչդեռ Պետրոս Առաքյալը պատասխանեց, թե Աստծո պարգևը արծաթով չեն գնում (Գործք Առաքելոց 8:18-20): Աստվածաշնչում գրված է նաև, որ կաշառքն ասքը բաց մարդուն կկուրացնի և արդարների դատը կծռի (Ելից 23:8):

Հիշատակենք նաև գրեթե բոլորին հայտնի Հուդայի օրինակը, ով, կաշառվելով 30 սիկլ արծաթով, մատնեց Քրիստոսին:

Կոռուպցիան, ուղեկցելով մարդկությանը հազարամյակներ շարունակ, եղել է ու ներկայումս շարունակում է մնալ պետության և հասարակության ուշադրության կիզակետում: Պետք է նշել, որ կոռուպցիային նպաստող տնտեսական, սոցիալական, իրավական, քաղաքական գործոնները բավականաչափ խորությամբ ուսումնասիրվել ու բացահայտվել են: Վերջիններիս վերաբերյալ առկա են բազմաթիվ գրքեր, գիտական հոդվածներ, ուսումնա-

սիրություններ, սակայն այդքան բազմազանության մեջ կոռուպցիոն վարքագծի հոգեբանական գործոնների ուսումնասիրությունը, կարծես թե, հետնաբեմ է մղվել: Մինչդեռ կարծում ենք, որ կոռուպցիոն վարքագծի մոտիվացիոն առանձնահատկությունների, այդ վարքագծի հոգեբանական, սուբյեկտիվ գործոնների բացահայտումը կարող է նպաստել կոռուպցիոն վարքագծի պատճառական համալիրի ավելի խոր ըմբռնմանը և կանխարգելիչ միջոցառումների արդյունավետությանը: Իսկ արդեն անձի վարքագծի դրդապատճառներն ուսումնասիրում են այնպիսի գիտությունները, ինչպիսին են քրեաբանությունը և հոգեբանությունը: Ուստի այս խնդրի լուծման համար էական կարևորություն ունի կոռուպցիայի առաջացման հոգեբանական պատճառների բացահայտումը, որոնց փորձենք անդրադառնալ սույն հոդվածում:

Այսպես, կարծում ենք՝ մարդու հոգեկանի պաշտպանական մեխանիզմները կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Դիտարկենք, թե ինչպես:

Նախ՝ ներկայացնենք, թե ինչ ենք հասկանում՝ պաշտպանական մեխանիզմ ասելով: Պաշտպանական մեխանիզմներն անձի ես-ի համապատասխան հնարքներն են տագնապայնությունը, լարվածությունը թոթափելու համար:¹

Այսինքն՝ երբ մարդուն անհանգստացնում է որևէ խնդիր, պաշտպանական մեխանիզմները տարբեր ձևերով օգնում են անձին թոթափելու անհանգստությունը: Եվ, քանի որ պաշտպանական մեխանիզմները գործադրվում են անձի ենթագիտակցության կողմից, ուստի մարդու կողմից դրանք չեն գիտակցվում որպես այդպիսին:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

¹ Карвасарский Б.Д. Клиническая психология. Издательский дом «Пите», 2011. 861 с. С. 546.

Կարծում ենք՝ պաշտպանական մեխանիզմները կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ երկու տարբերակով՝ ուղղակի և անուղղակի:

Պաշտպանական մեխանիզմները, լինելով կոռուպցիոն վարքագծի ուղղակի պատճառ, հանդես են գալիս անմիջականորեն՝ կոռուպցիոն վարքագծի միջոցով: Այսինքն՝ իր ես-ը պաշտպանելու համար անձը դիմում է կոռուպցիոն վարքագծի:

Օրինակ՝ անձն ընկճվել է նյութական ծանր դրության պատճառով և այդ իրավիճակից պաշտպանվելու համար սկսում է կաշառք վերցնել:

Տվյալ դեպքում պաշտպանությունն անմիջականորեն իրականացվում է կոռուպցիոն վարքագծի միջոցով, և այստեղ կոռուպցիոն վարքագիծն ինքնին կդառնա եսի պաշտպանություն:

Պաշտպանական մեխանիզմները, լինելով կոռուպցիոն վարքագծի անուղղակի պատճառ, հանդես կարող են գալ նաև անուղղակիորեն:

Տվյալ դեպքում անձը, կոռուպցիոն որոշում կայացնելու գործընթացում, որպեսզի պաշտպանի իրեն մեղքի, պատասխանատվության զգացողությունից, կարող է գործի դնել իր պաշտպանական մեխանիզմները, որոնք կաջակցեն ամրապնդելու կոռուպցիային դիմելու իր գաղափարը:

Փորձենք առանձին անդրադառնալ անձի հոգեկանի պաշտպանական մեխանիզմներին և տեսնենք, թե ինչպես վերջիններս կարող են հանգեցնել կոռուպցիոն վարքագծի:

Այսպես՝ պաշտպանական մեխանիզմներից է արտամղումը: Զիգմունդ Ֆրոյդն արտամղումը դիտում էր որպես ես-ի առաջնային պաշտպանություն ոչ միայն այն պատճառով, որ վերջինս ավելի բարդ պաշտպանական մեխանիզմների առաջացման հիմք է, այլև՝ որ ապահովում է տագնապից հեռանալու ավելի ուղիղ և պարզ ճանապարհ:

Արտամղումը, որը երբեմն նկարագրվում է որպես «կանխամտածված մոռացում», ցավ պատճառող մտքերի և զգացմունքների հեռացում է գիտակցությունից: Որպես արդյունք՝ ան-

հատները չեն գիտակցում իրենց տագնապահարույց կոնֆլիկտները և չեն հիշում տրավմատիկ իրադարձություններ:²

Այսինքն՝ անձն արտամղում է իրեն հուզող տհաճ, անցանկալի և անընդունելի մտքերն ու զգացումները, թույլ չի տալիս ճանաչել և գնահատել դրանք: Իսկ այն դեպքում արդեն, երբ կաշառք վերցնելու համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վախը կամ կոռուպցիոն վարքագծի համար առաջացող մեղքի զգացողության առկայությունն անձն արտամղում է իր գիտակցությունից, ստացվում է, որ սույն պաշտպանական մեխանիզմը նման իրավիճակում կարող է հանգեցնել կոռուպցիոն վարքագծի: Նման հոգեվիճակը կթոթափի տագնապի կամ հոգեկան անհանգստության զգացողությունը՝ կապված քրեական պատասխանատվության ենթարկվելու վախի, մեղքի զգացողության առաջացման խնդիրների հետ, և անձը պատրաստ կլինի իրականացնելու կոռուպցիոն գործարքներ:

Այլ կերպ ասած՝ երբ սույն պաշտպանական մեխանիզմն ակտիվանա, մարդն ավելի համարձակ կդառնա ու կարող է ցուցաբերել կոռուպցիոն վարքագիծ: Մինչդեռ, եթե պաշտպանական այդ մեխանիզմը չաշխատեր, հնարավոր է՝ մարդը չդիմեր նման քայլի, քանի որ իրեն հուզող անցանկալի մտքերը՝ հանցավոր վարքագծի համար պատժվելու վախը, մեղքի զգացողության առաջացումը, չէին արտամղվի անձի գիտակցությունից և, մնալով գիտակցության մեջ՝ կարող էին հետ պահել կոռուպցիոն վարքագծից:

Ուստի կարծում ենք, որ արտամղումը՝ որպես պաշտպանական մեխանիզմ, երբեմն կարող է հանգեցնել կոռուպցիոն վարքագծի:

Արտամղումը նման է նաև հերքմանը, որը նույնպես անձի պաշտպանական մեխանիզմներից է, սակայն, ի տարբերություն վերջինիս՝ ոչ թե արտամղում է խնդիրը, այլ՝ լիովին բացառում:

Հայտնի է, որ կանխամտածված հակաօրինական արարք կատարելուց առաջ, որպես կանոն, մարդը մինչ որոշում կայացնելը մտածում է հետևանքների մասին, մասնավորապես՝

² Хьелл Л., Зиглер Д. Теории личности. Основные положения, исследования и применение. С-Пб: Издательский дом «Питер», 2009, 607 с. С. 129.

արդյոք պատասխանատվության չի ենթարկվի:

Այս մասով հերքումը՝ որպես պաշտպանական մեխանիզմ, եթե սկսի գործել, ապա անձը, բացառելով քրեական պատասխանատվության ենթարկվելու հնարավորությունը, կարող է դիմել կոռուպցիոն վարքագծի:

Հոգեբանական հետազոտությունների համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտված ներքին գործերի նախկին աշխատակիցներն օժտված են այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են ոչ շատ անձանց հետ շփվելու միտումը, զգուշավորությունը մտերիմ հարաբերություններ հաստատելիս, ինչպես նաև կոռուպցիայի զոհերի նկատմամբ խղճի բացակայությունը: Իրենց թվում է, թե հատուցման ժամը երբեք չի գալու: Սա Ի. Լամմերսոմն անվանել է «բարոյական կարճատեսություն»:

Նմանատիպ արդյունքներ են ցույց տվել նաև արտասահմանյան հետազոտությունները:

Նման անձանց բնորոշ են այնպիսի հոգեբանական պաշտպանական մեխանիզմները, ինչպիսիք են հերքումը և փոխհատուցումը: Իրենք համոզված են, որ կոռուպցիոն հանցագործությունների զոհերը հաճախ իրենք են կատարում նման հանցագործություն: Դրանով փորձում են արդարացնել իրենց կողմից ցուցաբերվող կոռուպցիոն վարքագիծը:³

Անձի պաշտպանական մեխանիզմներից է նաև պրոյեկցիան:

Պրոյեկցիան՝ որպես պաշտպանական մեխանիզմ, իր նշանակությամբ հետևում է արտամղմանը: Պրոյեկցիան մի գործընթաց է, որի միջոցով անհատը սեփական անընդունելի մտքերը, զգացմունքները և վարքը վերագրում է այլ մարդկանց կամ շրջապատին: Դա թույլ է տալիս մարդուն սեփական անլիարժեքության կամ սխալների մեղքը բարդել ինչ-որ մեկի կամ ինչ-որ բանի վրա:⁴

Կարծում ենք, որ պրոյեկցիան կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ հետևյալ կերպ. մարդն իր անհաջողությունների և խնդիրների պատճառը պրոյեկտում է պե-

տությանը, օրենքներին, պետական այրերին: Նման դեպքում նա ունենում է, այսպես ասած, պետությանը դեմ դիրքորոշում և հակված չի լինում հարգելու վերջինիս օրենքները: Բնականաբար, նման պայմանները պարարտ հող են կոռուպցիոն վարքագիծ ցուցաբերելու համար: Անձն արդեն առավել խաղաղ հոգեվիճակ է ձեռք բերում. չի կարծում, թե իրականացնում է հանցավոր վարքագիծ պետության և օրենքի դեմ: Պրոյեկցիայի շնորհիվ մարդը ձերբազատվում է մեղքի ու պատասխանատվության զգացումից, քանի որ իր հանցավոր՝ կոռուպցիոն վարքագծի մեջ մեղավոր է տեսնում բոլորին՝ պետությանը, օրենքին և այլոց՝ բացի իրենից:

Ուստի կարծում ենք՝ պրոյեկցիան, որպես՝ պաշտպանական մեխանիզմ, կարող է հանդիսանալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Հաջորդ պաշտպանական մեխանիզմներից է ռացիոնալիզացիան՝ ինքնաարդարացումը: Դրսևորվում է այն դեպքերում, երբ մարդը դիմում է տրամաբանությանը՝ ինքն իրեն արդարացնելու համար: Օրինակ՝ անձը, ազատվելով աշխատանքից, սկսում է հիշել իր աշխատանքի բացասական հատկությունները, մինչդեռ մինչ աշխատանքից ազատվելը երբեք չէր անդարադարձել այդ խնդիրներին: Նույնը կարող է տեղի ունենալ սիրած էակից բաժանվելու դեպքում:

Իրականության աղավաղումը՝ ֆրուստրացիայի և տագնապի դեմ պայքարի մեթոդ է, որի միջոցով անձը փորձում է պահպանել իր ինքնազնահատականը: Ռացիոնալիզացիան վերաբերում է այն կեղծ փաստարկներին, որոնց միջոցով իռացիոնալ վարքը ներկայացվում է այնպես, որ շրջապատի աչքերում երևում է ամբողջովին տրամաբանական և արդարացի:⁵

Այժմ դիտարկենք, թե ինչպես ռացիոնալիզացիան՝ որպես պաշտպանական մեխանիզմ, ըստ մեզ՝ կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Սպանություն կատարած անձն իրեն արդարացնելու համար կարող է մտածել, որ այն

³ <http://www.ulan-ude-eg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 10.

⁴ <http://www.ulan-ude-eg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 130

⁵ <http://www.ulan-ude-eg.ru/information/anticorruption/komissiya/Psih%20faktori.pdf> C. 130

անձը, ում նա սպանել է, արժանի է եղել դրան: Ինքնարդարացման հետևանքով հավանական է, որ նա կփորձի ազատվել քրեական պատասխանատվությունից: Բացի դրանից՝ չի բացառվում, որ ցանկություն առաջանա արդարանալու նաև շրջապատի աչքերում: Նման իրավիճակում անձը պատրաստ կարող է լինել կաշառելու քրեական վարույթն իրականացնող մարմնին՝ իր «անմեղությունն» արդարացնելու համար: Ռացիոնալիզացիայի հետևանքով անձն իր կոռուպցիոն վարքագծի համար կունենա միշտ տարբեր «արդարացումներ»: Բայց, եթե սույն պաշտպանական մեխանիզմը չգործի այդ մասով, ապա անձը չի տեսնի որևէ արդարացում կոռուպցիոն վարքագծի համար և կարող է զերծ մնալ կոռուպցիայից: Ինքնարդարացման արդյունքով անձն իր կոռուպցիոն վարքագիծը ամեն կերպ կարդարացնի:

Ուստի կարծում ենք նաև, թե այս պաշտպանական մեխանիզմի ակտիվացման որոշ դեպքերում անձը կարող է ցուցաբերել կոռուպցիոն վարքագիծ:

Ռացիոնալիզացիան նման է մյուս պաշտպանական մեխանիզմներից ինտելեկտուալիզացիային, որը նույնպես, մեր կարծիքով, կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ և նույն պատճառով, ինչ ռացիոնալիզացիան: Ինտելեկտուալիզացիայի դեպքում մարդը փորձում է հեռանալ սթրեսային իրավիճակից՝ դիտարկելով վերջինս ինտելեկտուալ տեսանկյունից:⁶

Այս մասով սթրեսային կարող է համարվել այն իրավիճակը, երբ մարդը, ցուցաբերելով կոռուպցիոն վարքագիծ, գիտակցի, որ ինքը կաշառակեր է, քանզի հաճախ նման մարդիկ չեն համարում, թե իրենց արարքը հանցավոր է, հակառակ դեպքում, եթե գիտակցեն իրենք (խոսքն այստեղ վերաբերում է բարոյական հատկանիշներով օժտված անձանց), այդ փաստից կարող են սթրեսի ենթարկվել: Եվ որպեսզի վերջինս տեղի չունենա, փորձում են ինտելեկտուալ որակումներ տալ իրենց գործած արարքին՝ բացատրելով, որ իրենց հանցավոր վարքագիծը հանցավոր չէ: Տվյալ դեպքում անձը կաշառքը համարում է ոչ թե կա-

շառք, այլ՝ շնորհակալության նշան, կամ՝ թեյավճար, կամ էլ, ինչպես հենց իրենք են երբեմն անվանում՝ «մաղարիչ»: Մեր իրականացրած հետազոտության ընթացքում պարզել ենք, որ մարդկանցից շատերը չեն տարբերում կամ չեն ուզում տարբերել կաշառքը շնորհակալությունից և իրենց հանցավոր արարքները չեն կոչում իրենց անուններով, այլ տալիս են այլ անվանումներ ու որակումներ՝ պաշտպանելու համար իրենց եսը՝ իրենց իսկ աչքերում: Այսինքն՝ իրենք ամեն կերպ փորձում են խեղաթյուրել իրականությունը, որպեսզի հանգիստ խղճով իրականացնեն այդ հանցավոր արարքը:

Հաշվի առնելով այդ ամենը՝ առաջարկում ենք կաշառակերներին անվանել հենց իրենց անվամբ՝ կաշառակեր: Վերջինս ավելի է բնորոշ իրենց էությանը, քան կոռուպցիոն անվանումը, որն սկսել են վերջին ժամանակներում օգտագործել: Դա առավել լայն հասկացություն է, ինչպես նաև առավել մեղմ և զուսպ է՝ կաշառակեր պիտակի հետ համեմատած:

Վերադառնալով ինտելեկտուալիզացիային՝ որպես պաշտպանական մեխանիզմի, ներկայացնենք այլ տարբերակ, թե ինչպես դա կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Մեր հետազոտության ընթացքում հարցված 200 քաղաքացուց 29-ը՝ այն հարցին, թե ինչն է մարդիկ դիմում կոռուպցիայի, պատասխանել են՝ «դեպրեսիայի պատճառով»: Իրականում այդ անձինք ընկճախտ՝ դեպրեսիա, բառի վերաբերյալ ամբողջական պատկերացում չունեին, իսկ արդեն նման բառերի օգտագործումը վկայում էր, որ իրենք կիրառել են ինտելեկտուալիզացիան՝ որպես պաշտպանական մեխանիզմ, որն էլ դարձել էր կամ կարող էր դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառը:

Հաջորդ պաշտպանական մեխանիզմը, որը, ըստ մեզ, կարող է երբեմն դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ, տեղակալումն է:

Այս պաշտպանական մեխանիզմի էությունն այն է, որ զգացումները շեղվում են իսկական

⁶ Зинченко В.П. Введение в психологию / Учебник для студентов университетов. С-ПБ: ОЛМА Медиа Групп, 2003, 672 с. С. 486.

կրողներից դեպի ավելի ընդունելի կամ ավելի քիչ վտանգավոր փոխարինողը:

Տարածված օրինակ է. երբ պահանջկոտ գործատուն քննադատում է աշխատակցին, վերջինս՝ իր կնոջը, կինը քննադատում է երեխային, իսկ երեխան հրում է իր փոքր քույրիկին կամ ջարդում իր խաղալիքը:⁷

Ընդ որում՝ մարդը չի գիտակցում, թե որն է իր բարկության հիմնական օբյեկտը:

Մեր հետազոտության շրջանակներում իրականացված հարցազրույցներից մեկում անձը պատմեց, որ, լինելով պետական պաշտոնյա՝ ստացել է նկատողություն վերադաս մարմինից, որովհետև չի կազմակերպել ինչ-որ միջոցառում: Անձը բացատրում էր, որ չի կատարել դա՝ բյուջեում բավարար գումար չլինելու պատճառով: Զայրացած լինելով՝ նա լուծումը գտել է հետևյալում՝ անհիմն պահանջել է իրեն ենթակա աշխատակիցներից հավաքել գումար ու հանձնել իրեն, որ կազմակերպի այդ միջոցառումը: Այսինքն՝ նա դրանով չարաշահել է իր լիազորությունները, ինչը պարունակում է կոռուպցիոն ռիսկ:

Մեր դիտարկումների համաձայն՝ այստեղ առկա է եղել վերադաս մարմնի նկատմամբ զայրույթի տեղակալումն աշխատակիցների նկատմամբ: Կարծում ենք՝ տեղակալումը՝ որպես պաշտպանական մեխանիզմ, կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Ճիշտ է՝ ոչ հաճախ, սակայն կոռուպցիա ծնած մեկ դեպքն անգամ իրավունք է տալիս ասելու, թե դա կարող է լինել կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Ռեգրեսիան՝ որպես պաշտպանական մեխանիզմ, նույնպես կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Նախ՝ հասկանանք, թե ինչ է դա: Ռեգրեսիան՝ հետադիմությունը, այնպիսի պաշտպանական մեխանիզմ է, երբ մարդը, գտնվելով հոգեպես վատ, լարված հոգեվիճակում, պաշտպանում է իրեն հետևյալ կերպ. նա ենթագիտակցորեն հետ է գնում իր կյանքի այն ժամանակաշրջանը, երբ երջանիկ է եղել կամ պար-

զապես իրեն լավ է զգացել: Նա կարող է սկսել այնպես հագնվել, ինչպես իր կյանքի այդ ժամանակաշրջանում էր հագնվում, կարող է սկսել զբաղվել այն գործողություններով, ինչով այդ ժամանակաշրջանում էր զբաղվում, գուցե այդ ժամանակաշրջանի երաժշտություններն սկսի կրկին լսել կամ նույն գրքերը կարդալ, ինչ այդ ժամանակահատվածում էր կարդում, կամ նույն ֆիլմերը դիտել, ինչ այդ ժամանակահատվածում էր դիտում: Շատերի համար կյանքի լավագույն այդ ժամանակաշրջանը մանկությունն է: Ուստի ռեգրեսիային բնորոշ է վերադարձը վարքի երեխայական մոդելներին: Սա տագնապի թեթևացման միջոց է՝ վերադառնալով վաղ մանկության տարիքին, որն ավելի անվտանգ ու հաճելի է:⁸

Օրինակ՝ երբեմն կարող ենք ականատես լինել մարդկանց, ովքեր երեխաների ծայնով են փորձում խոսել, երեխաների պես մազակալներ կամ այլ արքեսուարներ են դնում: Երբեմն կարող է հանդիպել նաև ծայրահեղ իրավիճակ՝ երբ հասուն մարդն սկսում է արդեն տիկնիկներով կամ այլ խաղալիքներով խաղալ:

Մինչդեռ պարտադիր չէ, որ անձը հետադիմի մանկություն, քանի որ ոչ բոլորի դեպքում է, որ դա կյանքի լավագույն փուլն է: Յուրաքանչյուրի կյանքում այդ փուլը տարբեր կարող է լինել:

Այժմ դիտարկենք, թե ինչպես ռեգրեսիան կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Եթե անձը նախկինում ունեցել է կոռուպցիոն ճանապարհով իր խնդիրները հարթելու հաջողված փորձ, ապա հետագա իր կյանքում, ունենալով նմանատիպ խնդիրներ, որպես լուծման տարբերակ նա կարող է հետադիմել իր կյանքի այն ժամանակահատվածը, երբ իր խնդիրների հաղթահարման գործում օգնել է կոռուպցիան, և կրկին կոռուպցիոն վարքագիծ ցուցաբերի: Այսինքն՝ տվյալ անձի ենթագիտակցությունը կարող է այդ կացությունից դուրս գալու ուղի ընտրել հետադիմությունը՝ որպես

⁷ Зинченко В.П. Введение в психологию / Учебник для студентов университетов. С-ПБ: ОЛМА Медиа Групп, 2003, 672 с. С. 130.

⁸ Зинченко В.П. Введение в психологию / Учебник для студентов университетов. С-ПБ: ОЛМА Медиа Групп, 2003, 672 с. С. 132

ես-ի պաշտպանական մեխանիզմ, և արդեն այն դեպքում, երբ անձի համար բարվոք շրջանն է եղել իր կյանքի այն ժամանակահատվածը, երբ մեծ գումարներ է ստացել կոռուպցիոն եղանակով, ռեգրեսիայի հետևանքով անձը կունենա կոռուպցիոն վարքագիծ:

Բացի դրանից՝ ռեգրեսիային բնորոշ է անզսպությունը, իսկ վերջինս կոռուպցիոն վարքագծի անհրաժեշտ հատկանիշներից է:

Ուստի կարծում ենք, թե տվյալ պաշտպանական մեխանիզմը նույնպես կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Կարծում ենք նաև, թե կոռուպցիոն վարքագծի պատճառ կարող է հանդիսանալ սուբլիմացիան:

Ֆրոյդի համաձայն՝ սուբլիմացիան պաշտպանական այն մեխանիզմն է, որը մարդուն հնարավորություն է տալիս փոխելու իր ցանկություններն այնպես, որ հնարավոր լինի վերջիններս բավարարելու հասարակության կողմից ընդունելի տարբերակով: Սուբլիմացիան դիտվում է որպես անցանկալի ցանկությունների, գրգիռների սանձահարման միակ առողջ և կառուցողական ռազմավարությունը, քանի որ թույլ է տալիս փոխել գրգիռների նպատակը կամ օբյեկտը՝ առանց դրանց դրսևորումը զսպելու:

Օրինակ՝ այրի կինը, ով ցանկանում է ամուսնանալ, սակայն համարում է, թե դա իր շրջապատի մարդկանց համար ընդունելի չէ, իր համապատասխան ցանկության էներգիան ճնշում է: Եվ քանի որ, էներգիայի պահպանման օրենքի համաձայն՝ էներգիան չունի վերանալու հատկություն, ուստի այդ էներգիան վերափոխվում է այլ բանի, օրինակ՝ զայրույթի, և այդ տարբերակով է դուրս գալիս անձի հոգեկանից: Սուբլիմացիայի ընթացքում սեռական էներգիան կարող է փոխակերպվել այլ էներգիայի:⁹ Նման մարդիկ կարող են դառնալ սառցազնացներ, ստեղծագործողներ: Իրենք, որպես կանոն, կարող են լինել խիստ դատավորներ կամ խիստ պետական այլ աշխատակիցներ, ովքեր ամեն կերպ փորձում են դրսևո-

րել իրենց զայրույթը նաև աշխատանքային գործունեության ընթացքում: Մինչդեռ հայտնի է. ինչպես խստությունը, այնպես էլ մեղմությունն ազդում է անձի օբյեկտիվության և անաչառության վրա: Կարծում ենք՝ նման պաշտպանական մեխանիզմը կարող է դատավորի կամ պետական այլ պաշտոնյայի անաչառության վրա ազդեցություն ունենալ, որը կոռուպցիոն վարքագծի խթան կարող է հանդիսանալ: Բացի այդ՝ սուբլիմացիայի դեպքում անձը կարող է դառնալ ագրեսիվ, ինչը նույնպես կարող է դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառ:

Մյուս կողմից էլ՝ սուբլիմացիան, ապահովելով մարդու բնազդային ցանկությունների համապատասխանությունը սոցիալական արժեքներին և նորմերին, կարող է դառնալ հակակոռուպցիոն վարքագծի պատճառ:

Եթե ագրեսիան սուբլիմացվի, ապա կարող է վերափոխվել ոչ թե կոռուպցիայի, այլ՝ երաժշտության կամ կտավի:

Այսինքն՝ նման դեպքում մարդու ագրեսիվ մղումները չեն դրսևորվում ագրեսիայի ձևով, այլ վերափոխվում են հասարակության համար ընդունելի նորմերի, արժեքների:¹⁰ Ուստի սուբլիմացիան, վերափոխելով անձի գիտակցության համար անընդունելի ազդակն ընդունելի տարբերակի, կարող է դառնալ նաև հակակոռուպցիոն վարքագծի պատճառ, երբ, օրինակ՝ անձը ցանկանում է վերցնել կաշառք, սակայն դա սուբլիմացնում է մեկ այլ օրինական աշխատանքով:

Սակայն սուբլիմացիան չենք կարող դիտարկել միայն բացասական տեսանկյունից. վերջ ի վերջո՝ չմոռանանք, որ դա մշակույթի զարգացման հիմնական մղիչ ուժերից է:¹¹ Օրինակ՝ երբ մարդու գիտակցության համար անթույլատրելի կամ անհնարին է դառնում իր սիրած էակի կողքին լինելը, սիրո այդ էներգիան չի վերանում, այլ վերափոխվում է մեկ այլ բանի՝ կտավի, բանաստեղծության, երգի և այլի, կամ սուբլիմացիայի պատճառով անգիտակցական սադիստական մղումներով մարդը, չի

⁹ Гуревич П.С. Практическая психология для всех: Клинический психоанализ, М.: ОЛМА Медиа Групп, 2007, 512 с. С. 89.
¹⁰ Психология подростка // под ред. А.А. Реана, Психологическая энциклопедия, М.: Олма Пресс, 2003, 432 с. С. 105.
 Психология подростка // под ред. А.А. Реана, Психологическая энциклопедия, М.: Олма Пресс, 2003, 432 с. С. 105.
¹¹ Гуревич П.С. Практическая психология для всех: Клинический психоанализ, М.: ОЛМА Медиа Групп, 2007, 512 с. С. 132.

դառնա սադիստ մարդասպան, այլ կդառնա հիանալի վիրաբույժ:

Այսպիսով, կարծում ենք՝ սուբլիմացիան, մի կողմից՝ վերափոխելով բացասական էներգիան, կարող է դառնալ հակակոռուպցիոն վարքագծի պատճառ, իսկ մյուս կողմից, ճնշելով իր համար անթույլատրելի բնագոյային պահանջմունքները՝ կոռուպցիոն վարքագծի պատճառ: Ուստի այստեղ կարևոր է, թե անձն ինչն է համարում իր համար անթույլատրելի և ինչը՝ թույլատրելի:

Իսկ, ահա, անձի պաշտպանական մեխանիզմներից ռեակտիվ գոյացությունը, կարծում ենք՝ կարող է դառնալ հակառակը՝ անձի հակակոռուպցիոն վարքագծի պատճառ:

Սույն պաշտպանական մեխանիզմի գործողության դեպքում ես-ը արգելված գրգիռներից կարող է պաշտպանվել՝ վարքում և մտքերում ամբողջովին հակառակ ուղղվածություն ցուցաբերելով: Այստեղ գործ ունենք ռեակտիվ գոյացության հետ: Այս պաշտպանական մեխանիզմն իրագործվում է երկաստիճան ձևով՝ անընդունելի գրգիռը ճնշվում է, և հետո գիտակցական մակարդակում ի հայտ է գալիս ամբողջովին հակառակ գործողություն: Նմանատիպ օրինակ է այն, երբ, սեփական հոմո-

սեքսուալ մղումներից պաշտպանվելով, շատ տղամարդիկ ծաղրում են հոմոսեքսուալիստներին:¹²

Կոռուպցիոն վարքագծի մոտիվներով անձը կարող է զսպել իր կոռուպցիոն ցանկությունները, չգնալ կոռուպցիոն վարքագծի՝ սույն պաշտպանական մեխանիզմի շնորհիվ: Սկսելով ծաղրել, քննադատել կոռուպցիոններին՝ անձը կարող է զերծ պահել իրեն կոռուպցիոն վարքագծից՝ դիմելու ցանկությունից:

Ընդհանրացնելով պաշտպանական մեխանիզմների վերաբերյալ դիտարկումները՝ կարելի է նշել, որ անձի պաշտպանական մեխանիզմները նրան տազնապներից ազատելու նպատակ են հետապնդում:

Յուրաքանչյուր անհատ օգտվում է տարբեր պաշտպանական մեխանիզմներից և տարբեր չափերով: Պաշտպանական մեխանիզմները անհրաժեշտություն են, եթե դրանք չաջակցեն մարդուն, ապա անձը կարող է անգամ խելագարության հասնել: Այլ հարց է, թե դրանք կարող են կոռուպցիոն վարքագծի մղել: Ուստի անհրաժեշտ է միջոցներ մշակել պաշտպանական մեխանիզմների գործունեության սոցիալապես ընդունելի ուղղվածության ապահովման համար:



¹² <http://psychologist.com.ua/psychologist/index.php/statji/likbez/836-splitting-slovar?format=pdf> C. 131.

ԵՐԵՄԻԱ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի
քրեաբան

ԱՐՄԵՆ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական
կենտրոնի գիտական խորհրդատու,
ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՆԱՆՑ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ, ՄԱԿԱՐԴԱԿԸ, ՇԱՐՔԸՆԹԱՅԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՊԱՇՏՊԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Հանցավորության վերլուծությունը սովորաբար հիմնվում է տղամարդկանց հանցավորության ուսումնասիրության վրա, որոնց թիվը գերակշռում է ընդհանուր հանցանք կատարած անձանց զանգվածում: Այս առումով՝ կանանց հանցավորության ուսումնասիրումն ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ բացում է այնպիսի բարդ սոցիալական երևույթի, այսպես ասած, նոր սահմաններ, ինչպիսին հանցավորությունն է:

Կանանց հանցավորությունը տղամարդկանց հանցավորությունից տարբերվում է իր քանակական ցուցանիշներով, կատարված հանցագործությունների բնույթով, հանցագործության կատարման միջոցներով և եղանակներով, հանցանքի կատարման մեջ դերով, հանցագործության զոհի ընտրությամբ, նրանց կատարած իրավախախտումների վրա իրենց ուղեկցող ընտանեկան, կենցաղային, ինտիմ և այլ հանգամանքների ազդեցությամբ: Այս առանձնահատկությունները կապված են հասարակական հարաբերություններում պատմականորեն ձևավորված կնոջ զբաղեցրած դիրքով, նրա սոցիալական դերով, կենսաբանական և հոգեբանական առանձնահատկություններով: Եվ բնական է, որ, հասարակության մեջ կանանց կենսակերպի, սոցիալական պայմանների ու դերի փոփոխության հետ կապված, փոխվում են նաև նրանց հանցավոր վարքագծի բնույթն ու ձևերը և նրանց հանցավորության ցուցանիշները:

Ընդհանրապես՝ որքան բարձր է կին հանցագործների տեսակարար կշիռն ընդհանուր հանցավորության մեջ, այդքան բարձր է նրանց սոցիալական ակտիվությունը տվյալ երկրում:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կանանց հանցավորության մասնաբաժինն ընդհանուր հանցավորության մեջ տարբեր տարիներին տատանվում է մոտ 7-14%-ի սահմաններում:

Այսպես՝ 1999-2001թթ. կանայք հանցանք կատարած անձանց ընդհանուր զանգվածում կազմել են մոտ 8,2%, 2002թ.՝ 9,2%, 2003թ.՝ 7,7%, 2004թ.՝ 8,5%, 2005թ.՝ 7,9%, 2006թ.՝ 8,4%, 2007թ.՝ 9,7%, 2008թ.՝ 10,3%, 2009թ.՝ 12,7%, 2010թ.՝ 12,1%, 2011թ.՝ 13%, 2012թ.՝ 12,1%, 2013թ.՝ 14%, 2014թ.՝ 11,2%, 2015թ.՝ 12,1%, 2016թ.՝ 11,7%, իսկ 2017թ.՝ 11,9% (**Տես Գրաֆիկ 1**):


Ինչպես երևում է **Գրաֆիկ 1-ից**՝ կանանց թիվը հանցանք կատարած անձանց ընդհանուր զանգվածում արձանագրել է որոշակի աճ՝ 1999թ. արձանագրված 8,2%-ից 2017թ. հասնելով մոտ 12%-ի: Ճիշտ է՝ որոշակի տարիների նկատվում է նաև հանցանք կատարած կանանց թվի նվազում, ինչպես օրինակ՝ 2003թ.՝ 7,7%, այնուամենայնիվ, դա էականորեն չի ազդում ընդհանուր պատկերի վրա, քանի որ կանանց հանցավորությունը ավելի շատ դրսևորում է աճի միտում:

Բացի այդ՝ տարբեր տարիներին հանցանք կատարած կանանց տեսակարար կշռի աճը կամ նվազումը կարող է պայմանավորված լինել նաև հանցանք կատարած անձանց ընդհանուր թվի, մասնավորապես՝ տղամարդկանց տեսակարար կշռի աճով կամ նվազմամբ: Խոսքը, մասնավորապես, այն մասին է, որ որոշակի տարիներին հանցանք կատարած անձանց ընդհանուր զանգվածում տղամարդկանց թիվը նվազել է կամ աճել է, իսկ հանցանք կատարած

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

Գրաֆիկ 1

Կանանց հանցավորության մակարդակը ՀՀ-ում 1999-2017թթ.




րած կանանց մակարդակն էական փոփոխություններ չի ունեցել և, այդ իսկ պատճառով՝ արձանագրվել է կանանց հանցավորության որոշակի աճ կամ նվազում: Սակայն, ընդհանուր առմամբ՝ նկատելի է հետևյալ օրինաչափությունը. հանցանք կատարած անձանց ընդհանուր թվի աճին զուգահեռ՝ աճում է նաև կանանց տեսակարար կշիռը:

Կանանց հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության բացարձակ թվերով վերլուծությունը ևս վկայում է հանցանք կատարած կանանց թվի վերընթաց դինամիկայի մասին: Մասնավորապես՝ պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ վերջին տարիներին կանանց հանցավորությունը բացարձակ թվերով աճել է մոտ 2,5 անգամ: Այսպես՝ 1999թ.

քրեական պատասխանատվության է ենթարկվել 643 կին, 2000թ.՝ 667 կին, 2001թ.՝ 684 կին, 2002թ.՝ 695 կին, 2003թ.՝ 512 կին, 2004թ.՝ 584 կին, 2005թ.՝ 494 կին, 2006թ.՝ 583 կին, 2007թ.՝ 529 կին, 2008թ.՝ 585 կին, 2009թ.՝ 1385 կին, 2010թ. քրեական պատասխանատվության ենթարկված կանանց թիվը կազմել է 1476, 2011թ.՝ 1551, 2012թ.՝ 1420, 2013թ.՝ 1613, 2014թ.՝ 1227, 2015թ.՝ 1337, 2016թ.՝ 1310, իսկ 2017թ. այդ թիվը կազմել է 1419: Ինչպես երևում է պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծությունից՝ հանցանք կատարած կանանց ցուցանիշները որոշ տարիներին նույնիսկ եռապատկվել են, օրինակ՝ 2003թ. հանցանք կատարած կանանց թիվը կազմել է 512, իսկ 2013թ.՝ 1613 (**Տես Գրաֆիկ 2**):

Գրաֆիկ 2

Կանանց հանցավորության շարժընթացը ՀՀ-ում 1999-2017թթ.



Ինչպես երևում է գրաֆիկական պատկերից՝ հանցանք կատարած կանանց ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2005թ.՝ 494 կին, իսկ ամենաբարձրը՝ 2013թ.՝ 1613 կին:

Ընդհանրապես՝ կանանց և տղամարդկանց հանցավորության տարբերությունները պարզաբանելիս առաջ են քաշվում սոցիալական և կենսաբանական բնույթի գործոնները: Տղա-

մարդկանց հանցավորության համեմատ կանանց հանցավորության ցածր ցուցանիշները հիմնականում բացատրվում էին ոչ միայն կանանց ֆիզիկական թուլությամբ, այլ նաև հասարակական կյանքից նրանց «օտարվածությամբ», ընտանեկան պարտականությունների շրջանակներում մեկուսացմամբ և այլն¹:

Շատ հեղինակներ էլ, հիմնականում՝ անտրոպոլոգիական (մարդաբանական) դպրոցի ներկայացուցիչները, համարում էին, թե կանանց հանցավորության ցածր ինտենսիվությունը, ի տարբերություն տղամարդկանց հանցավորության, կապված է կանանց օրգանիզմի ու բնավորության առանձնահատկություններով, կնոջ բնույթով և նրա որոշակի աստիճանի «կենսաբանորեն ոչ բավարար զարգացմամբ»²:

Այնուամենայնիվ, գիտության հետագա զարգացումը ցույց տվեց, որ հանցավորության պատճառական համալիրում էական ազդեցություն ունեն, առաջին հերթին, այն գործոնները, որոնք հիմնականում ձևավորվում են սոցիալական կյանքի պայմաններում: Հենց դրանք են նշանակալի ազդեցություն ունենում կանանց ոչ միայն հանցավոր վարքագծի, այլև նրանց օրինավոր վարքագծի ձևավորման վրա:

Եթե կանանց հանցավորության փոփոխությունները դիտարկենք պատմական երկար ժամանակաշրջանում, ապա կարող ենք նշել, որ այդ հանցագործությունների կատարման վրա ազդող պատճառները պատմական տարբեր պայմաններում փոփոխվում են: Կյանքի պայմանների փոփոխումն անխուսափելիորեն ազդում է ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ անձնական արժեքների նկատմամբ վարքագծի կամ վերաբերմունքի փոփոխությունների վրա:

Վերջին ժամանակաշրջանում տարբեր երկրներում կանայք սկսել են ավելի շատ, քան նախկինում էր, ներգրավվել հասարակական կյանքի տարբեր բնագավառներում, արդյունաբերության մեջ, հանրային աշխատանքում և ավելի ակտիվ մասնակցություն ունենալ հասարակական կյանքում:

Այս ամենը նպաստել է հասարակության մեջ կանանց սոցիալական դերի ու դիրքի բարձրացմանը, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում նրանց ակտիվ մասնակցությանը, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ կանանց հանցավորության քանակական և որակական ցուցանիշների վրա:

Նմանատիպ գործընթացներից անմասն չի մնացել նաև մեր հասարակությունը: Եվ այս պարագայում պատահական չէ, որ մեր հանրապետությունում, 2009թ. սկսած, հանցանք կատարած կանանց թիվն արձանագրել է շեշտակի աճ: Այսպես՝ եթե 1999-2008թթ. հանցանք կատարած անձանց զանգվածում կանանց թիվը տատանվել է 494-695-ի սահմաններում, ապա, 2009թ. սկսած՝ հատել է հազարի շեմը՝ արձանագրելով մոտ 2,3 անգամ աճ: Կանանց նման հանցավոր ակտիվությունը պայմանավորված է ինչպես ընդհանուր հանցավորության զարգացման միտումներով, այնպես էլ, ինչպես արդեն նշվեց՝ հասարակության մեջ կանանց սոցիալական դերի ակտիվացմամբ, որը տարեցտարի ավելի ու ավելի է մեծանում:

Հանցանք կատարած կանանց գործակիցների վերլուծությունը ևս վկայում է նրանց թվի աճի կամ վերընթաց դինամիկայի մասին (**Տես Գրաֆիկ 3**):

Ինչպես երևում է գրաֆիկական պատկերից՝ հանցանք կատարած կանանց հանցավոր ակտիվության գործակիցը 100000 բնակչի հարաբերակցությամբ 2000-ական թվականների համեմատ շեշտակի աճ է գրանցել՝ աճելով մոտ 2,5 անգամ:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կանանց հանցավորության կառուցվածքը³:


Կանանց հանցավորության կառուցվածքի ուսումնասիրությունը վկայում է, որ, պաշտոնական վիճակագրության համաձայն՝ կանանց կողմից առավել հաճախ կատարվում են շա-

¹ Криминология: Учебник для вузов/Под общ. ред. д. ю. н., К82 проф. А. И. Долговой.– 3-е изд., перераб. и доп.– М.: Норма, 2005. с. 807.

² См.: Ломброзо Ч., Ферреро Э. Женщины-преступницы и проститутки. С. 50; Ломброзо Ч., Ласки Л. Политическая преступность и революция. Пб., 1906. С. 112; Тарновская П. Н. Женщины-убийцы.

³ Հանցանք կատարած կանանց կառուցվածքին վերաբերող պաշտոնական վիճակագրության տվյալները վերլուծելիս օգտվել ենք 2010-2017թթ. վիճակագրական տվյալներից:

Կանանց հանցավորության գործակցային պատկերը ՀՀ-ում 1999-2017թթ.



հադիտական բնույթի ու այնուհետև բռնությամբ կամ բռնի-ագրեսիվ մոտիվացիայով կատարվող հանցագործություններ⁴:

Այնուամենայնիվ, կարող ենք ֆիքսել, որ կանանց կողմից կատարվող բռնի հանցագործությունները, ի տարբերություն տղամարդկանց, այդքան էլ մեծ հանրային վտանգավորությամբ աչքի չեն ընկնում:

Այսպես, պաշտոնական վիճակագրության համաձայն՝ կանանց կողմից շատ ավելի քիչ են կատարվում սպանություններ, առողջությանը ծանր վնաս հասցնելու դեպքեր և այլ ծանր բռնի հանցագործություններ, քան տղամարդկանց կողմից: Փոխարենը՝ կանանց շրջանում լայն տարածում ունի ծեծը:

Ծեծն իր տեսակարար կշռով գերակայում է կանանց հանցավորության ամբողջ կառուցվածքում՝ տարբեր տարիներին կազմելով մոտ 31-47%: Ընդ որում՝ կանանց կողմից կատարվող հանցավոր արարքների շարքում ծեծը դրսևորում է աճի միտում՝ 2010թ. արձանագրված 32,5%-ից 2017թ. հասնելով 39,1%-ի: 2014թ. կանանց հանցավորության կառուցվածքում նկատվել է ծեծի մասնաբաժնի կտրուկ աճ՝ 47,1%:

Առողջությանը ծանր, միջին ծանրության

և թեթև վնաս (ՀՀ քրեական օրենսգրքի 112-117 հոդ.) պատճառած կանայք հանցանք կատարած կանանց զանգվածում կազմում են մոտ 5-10%: Պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առողջությանը վնաս պատճառելու դեպքերը մոտ երկու անգամ նվազել են: Այսպես՝ 2010թ. կանանց հանցավորության կառուցվածքում նշված արարքները կազմել են 9,7%, 2011թ.՝ 10%, այնուհետև գնալով նվազել են՝ 2017թ. կազմելով 4,5%:

Այստեղ որոշակի հետաքրքրություն է ներկայացնում այն հանգամանքը, որ հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում, առողջությանը վնաս պատճառած կանանց մասնաբաժնի նվազմանը զուգահեռ, աճել է ծեծի մասնաբաժինը: Այս առումով հարկ է նշել, որ, նախ՝ առողջությանը վնաս պատճառելու դեպքերի մեծ մասը բաժին է ընկնում թեթև վնաս պատճառելու դեպքերին: Իսկ շատ դեպքերում էլ, տարբեր օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, առողջությանը թեթև վնաս պատճառելը կարող էր գրանցվել որպես ծեծ: Բացի այդ՝ պետք է հաշվի առնել, որ պաշտոնական վիճակագրությունը ոչ միշտ է ամբողջությամբ արտացոլում օբյեկտիվ և իրական


⁴ Կանանց հանցավորության կառուցվածքը վերլուծելիս ուսումնասիրվել և հիմք են ընդունվել պաշտոնական վիճակագրության տվյալները հանցանք կատարած իգական սեռի անձանց վերաբերյալ՝ ըստ հանցատեսակների, քանի որ կանանց կողմից կատարված հանցագործությունների քանակի վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալները վիճակագրության վարման առանձնահատկությունների հետ կապված, որոշակիորեն թերի են, և վաղ տարիների տվյալները արժանահավատ չեն: Այսինքն՝ վերլուծվել են այս կամ այն տեսակի հանցագործություններ կատարած կանանց քանակի, այլ ոչ թե կանանց կողմից կատարված հանցագործությունների քանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները:

պատկերը, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել նաև լատենտայնության գործոնը: Կանանց կողմից առողջությանը վնաս պատճառելու և ծեծի դեպքերի լատենտայնությանը նպաստող գործոններից է նաև հետևյալ հանգամանքը. կանայք հաճախ են ընտանիքում կամ շրջապատում ենթարկվում որոշակի բռնության ու վատ վերաբերմունքի, ինչը կարող է նպաստել նրանց ագրեսիվ վարքագծի ձևավորմանը⁵: Նմանատիպ իրավիճակներում էլ շատ կանայք դիմում են, այսպես ասած, հակազդող գործողությունների, ինչն էլ ի վերջո կարող է հանգեցնել ծեծի կամ առողջությանը վնասի պատճառման: Եվ

քանի որ նման արարքները հաճախ կատարվում են ընտանիքի ներսում կամ նեղ շրջապատում, ուստի մնում են լատենտային և չեն գրանցվում կամ բացահայտվում: Հետևաբար, խոսելով կանանց կողմից առողջությանը վնաս պատճառելու դեպքերի մասին՝ անպայման պետք է հաշվի առնել, որ կանանց կողմից կատարվող այս հանցագործություններն ունեն լատենտայնության որոշակի մակարդակ:

Առողջությանը վնաս պատճառած և ծեծ կատարած կանանց հարաբերակցությունը կարելի է տեսնել **Գրաֆիկ 4-ում**:

Գրաֆիկ 4



Կին հանցագործների թվում սպանություն և սպանության փորձ կատարած կանայք բավականին քիչ թիվ են կազմում՝ 2010-2017թթ. յուրաքանչյուր տարի մինչև 4 հոգի: Եթե սպանություն և սպանության փորձ կատարած կանանց թվին գումարենք նաև ՀՀ քրեական օրենսգրքի 105-111-րդ հոդվածներով նախատեսված արարքները (**հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված սպանությունը, մոր կողմից նորածին երեխայի սպանությունը**, անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցմամբ սպանությունը, անզգուշյալ մահ պատճառելը, ինքնասպանության հասցնելը, ինքնասպանության հակելը) կատարած կանանց, ապա նրանց թիվը 2010-2017թթ. ընթացքում հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում կտատանվի 0,24-0,67%-ի սահմաններում:

Կանանց կողմից առավել հաճախ կատարվող հանցագործություններից են նաև շահադիտական բնույթի հանցագործությունները, որոնց մեջ գերակշռում են հափշտակությունները, մասնավորապես՝ գողությունները և խարդախությունները:

2010-2017թթ. պաշտոնական վիճակագրության տվյալները վկայում են, որ գողություններ կատարած կանանց թիվը հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում կազմում է 7-19%: Ընդ որում՝ հանցանք կատարած կանանց զանգվածում գողություն կատարած կանանց թիվն արձանագրում է աճի միտում: Այսպես՝ եթե 2010թ. այդ թիվը կազմել է 8%,

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 108 2018

⁵ Варчук Т. В., Вишневецкий К. В. «Виктимология». 2-е изд., М.: ЮНИТИ-ДАНА: Закон и право, 2010. М., էջ 74-75:

իսկ 2011թ.՝ 7,1%, ապա 2012թ. կազմել է 10%, 2013թ.՝ 11,5%, 2014թ.՝ 14,1%, 2015թ.՝ 15,4%, 2016թ.՝ 18,3%՝ 2017թ. հասնելով 19,3%-ի:


Փոքր-ինչ այլ է պատկերը խարդախությունների պարագայում: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ հանցանք կատարած կանանց զանգվածում խարդախություններ կատարած կանանց տեսակարար կշիռը տատան-

վում է մոտ 3-9%-ի սահմաններում: Ընդ որում՝ խարդախությունների պարագայում նկատվում է որոշակի նվազում՝ 2010թ. 8,9%-ի փոխարեն 2017թ. արձանագրվել է 4,9%:

Գողություններ և խարդախություններ կատարած կանանց հարաբերակցությունը կարելի է տեսնել **Գրաֆիկ 5-ում**:

Գրաֆիկ 5

Գողություն և խարդախություն կատարած կանանց տեսակարար կշռի հարաբերակցությունը << կանանց հանցավորությունում 2010-2017թթ.



Ավագակությունները և կողոպուտները կանանց կողմից ավելի հազվադեպ են կատարվում՝ տարեկան մինչև 7-8 դեպք:

Կանանց կողմից հաճախ են կատարվում նաև տնտեսական բնույթի հանցագործություններ: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործություններ (<< քրեական օրենսգրքի 187-216-րդ հոդվածներ) կատարած կանանց տեսակարար կշիռը հանցանք կատարած կանանց զանգվածում 2010-2017թթ. տատանվում է մոտ 2-10%-ի սահմաններում: Տնտեսական բնույթի հանցագործությունները կանանց կողմից հիմնականում կատարվում են այն ոլորտներում, որտեղ կանայք ավելի շատ են ընդգրկված: Կանայք, օրինակ՝ ավելի շատ են ընդգրկված սպասարկման, առողջապահության, կրթության, առևտրի, սննդի սպասարկման և այլ ոլորտներում: Այդ պատճառով պատահական չէ, որ կանանց կողմից ավելի հաճախ են կատարվում այնպիսի հանցագործություններ, ինչպիսիք են, օրինակ՝ սպառողներին խաբելը, հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը, մաքսանենգությունը և այլն:

Կարելի է ասել՝ կանանց «հատուկ» է կամ «բնորոշ» նաև շահադիտական նպատակով այլ անձի պոռնկությամբ զբաղվելուն ներգրավելը, պոռնկությամբ զբաղվելուն նպաստելը (<< քրեական օրենսգրքի 261-263-րդ հոդվածներ): Նշված արարքները կատարած կանայք կազմում են հանցանք կատարած կանանց ընդհանուր թվի 1-2,5%-ը: Նշված արարքները կատարած կանանց թիվը ևս վերջին տարիներին որոշակիորեն նվազել է, այսպես՝ 2010թ. կազմել է 1,1%, 2011թ.՝ 2,5%, իսկ արդեն 2017թ.՝ 0,9%:

Այս համատեքստում կարելի է քննարկել նաև << քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսված արարքը (մարդու թրաֆիքինգը կամ շահագործումը): Պետք է նշել, սակայն, որ այս հանցատեսակը կատարած կանայք մեծ թիվ չեն կազմում հանցանք կատարած կանանց զանգվածում: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2010-2017թթ. քննարկվող հանցագործությունը կատարած կանանց թիվը հանցանք կատարած կանանց զանգվածում չի հասնում 1%-ի: Սակայն պետք է հաշվի առնել նշված հանցատեսակի լատենտայնության բարձր մակարդակը, քանի որ շատ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

դեպքերում այս հանցագործությունից տուժածները չեն բարձրաձայնում կատարված հանցագործությունների մասին:

Վերջին տարիներին որոշակի ակտիվություն է նկատվում թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններին կանանց մասնակցության առումով:

Այսպես՝ պաշտոնական վիճակագրության համաձայն՝ 2010-2017թթ. թմրանյութերի ապօրինի շրջանառության (ՀՀ քրեական օրենսգրքի 266-274-րդ հոդվածներ) հետ կապված հանցագործություններ կատարած կանանց թիվը հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում կազմել է 0,8-6,4%: Ընդ որում՝ ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2013թ.՝ 6,4%, այնուհետև գնալով նվազել է՝ 2017թ. հասնելով 1,4%-ի:

Հարկ է նշել նաև, որ վերը նշված հանցագործությունների խմբում ներառվող արարքներից առավել հաճախ կանանց կողմից կատարվում են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ, 267.1-րդ և 268-րդ հոդվածներով նախատեսված արարքները:

Կանանց կողմից կատարվում են նաև այլ հանցագործություններ, որոնք, պաշտոնական վիճակագրության համաձայն, սակայն մեծ թիվ չեն կազմում:

Ընդհանուր առմամբ՝ պաշտոնական վիճակագրության ուսումնասիրությունից կարելի է փաստել, որ կանանց հանցավորության կառուցվածքին բնորոշ առանձնահատկություններից է որոշակի կայունությունը: Ճիշտ է՝ թեև որոշ հանցատեսակների պարագայում տարբեր տարիներին կարող են նկատվել աճի կամ նվազման միտումներ, սակայն, ընդհանուր առմամբ՝ շատ հանցագործությունների պարագայում նկատվում է որոշակի կայուն վիճակ: Այդ կայունությունն առավել նկատելի է պաշտոնական վիճակագրության տվյալները բացարձակ թվերով վերլուծելիս:

Պետք է նկատի ունենալ նաև, որ դատապարտված և ազատազրկման ձևով պատիժ կրող կանանց մեծ մասը դատապարտվել է սպանության, առողջությանը ծանր վնաս հասց-

նելու, գողության, խարդախության համար: Եվ դա պատահական չէ, քանի որ կանայք հիմնականում ազատազրկման են դատապարտվում ծանր հանցագործությունների համար:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ որոշակի դրական միտումներ են նկատվում նախկինում դատապարտված կանանց կողմից հանցանք կատարելու առումով: Ընդհանրապես, ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք ավելի հազվադեպ են պատիժը կրելուց հետո կրկին հանցանք կատարում:

Վերջին տարիներին կանանց հանցավորության կառուցվածքում նկատվում է հանցանք կատարած կանանց զանգվածում նախկինում դատապարտված կանանց թվի նվազում: Եթե նախկինում դատապարտված կանայք 1999թ. կազմել են հանցանք կատարած կանանց ընդհանուր թվի 9,1%-ը, ապա 2017թ.՝ 1,2%-ը:

Նախկինում դատապարտված կանանց թվի նվազումը տեղի է ունեցել նաև բացարձակ թվերով, և դա այն պարագայում, երբ, 2009թ. սկսած, հանցանք կատարած կանանց թիվն աճել է մոտ 2-3 անգամ:

Որպես նման պատկերի առավել իրատեսական բացատրություն՝ թերևս՝ կարող է լինել այն, որ, ի տարբերություն տղամարդկանց՝ կանայք պատժի կրման ընթացքում ավելի սուր են ընկալում հասարակությունից մեկուսացված լինելու փաստը, և նրանց մեջ առավել վառ արտահայտված են այնպիսի հոգեկան վիճակներ, ինչպիսիք են անտարբերությունը, ֆրուստրացիան, ծանձրոյթն ու հուսահատությունը⁶: Բացի այդ՝ զսպող գործոն կարող է լինել ընտանիքի և երեխաների առկայությունը, որոնցից պատժի կրման ընթացքում մեկուսացված լինելու փաստը հետագայում զերծ է պահում նրանց կրկին հանցանք կատարելուց:

Նախկինում դատապարտվածների թվի նվազումը հանցանք կատարած կանանց զանգվածում, մի կողմից, կարելի է գնահատել որպես դրական՝ ռեցիդիվային հանցավորության նվազման առումով, սակայն, մյուս կողմից էլ՝ դա վկայում է առաջնային հանցավորության աճի մասին, այսինքն՝ տարեցտարի նոր կա-

⁶ Основы психологии исполнения уголовных наказаний: Учебное пособие / Под ред. кандидата психологических наук Е.Н. Казаковой.– Вологда: ВИПЭ Минюста России, 2001.– էջ 347:

նայք են ներգրավվում այդ հանցագործությունների կատարմանը:

Ի տարբերություն տղամարդկանց հանցավորության՝ կանանց հանցավորության կառուցվածքում համեմատաբար ցածր տոկոս են կազմում հանցանքը խմբի կազմով կատարելու դեպքերը:

Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում 1999-2017թթ. խմբի կազմով հանցանք կատարած կանանց տեսակարար կշիռը տատանվել է մոտ 2-12%-ի միջակայքում: Ընդ որում՝ խմբի կազմում հանցանք կատարած կանանց տեսակարար կշռում դրսևորվել է վարընթաց դինամիկա՝ ամենաբարձր ցուցանիշը գրանցվելով 2000թ.՝ մոտ 12%, իսկ 2017թ. նվազել է՝ հասնելով 2,1%-ի:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հանցանք կատարած կանանց սոցիալ-ժողովրդագրական տվյալները, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել կանանց հանցավորության զարգացման միտումների մասին:

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ մեր հանրապետությունում հանցավոր ակտիվությամբ առավել հաճախ աչքի են ընկնում 30-49 տարիքային խմբի ներկայացուցիչները, այնուհետև՝ 50 և ավելի, 25-29 և 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչները:

Այսպես, օրինակ՝ 2007թ. 30-49 տարիքային խմբի ներկայացուցիչների տեսակարար կշիռը հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում կազմել է մոտ 53%, 50 և ավելի տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 28%, 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 9%, իսկ 25-29 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 7,5%: 2017թ. 30-49 տարիքային խմբի

ներկայացուցիչների տեսակարար կշիռը հանցանք կատարած կանանց ընդհանուր զանգվածում կազմել է մոտ 45%, 50 և ավելի տարեկան տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ կրկին մոտ 28%, 18-24 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 12,5%, իսկ 25-29 տարիքային խմբի ներկայացուցիչներինը՝ մոտ 11,5%:

Ինչպես տեսնում ենք՝ վերջին տարիներին որոշակիորեն աճել է 18-24 և 25-29 տարիքային խմբերի ներկայացուցիչների տեսակարար կշիռը, սակայն, այնուամենայնիվ, հանցանք կատարած կանանց զանգվածում գերակշռում է 30-49 և 50 և ավելի տարիքային խմբի ներկայացուցիչների թիվը:

Ընդհանրապես՝ մեր երկրում հանցավորությանը նպաստող գործոնների մեջ էական տեղ և դեր ունեն հասարակության սոցիալական մակարդակը և նյութական վիճակը:

Այս առումով հետաքրքիր էր նաև պարզել հանցանք կատարած կանանց սոցիալական առանձնահատկությունները:

Պաշտոնական վիճակագրության վերլուծությունը ցույց տվեց, որ հանցանք կատարած կանանց մեջ գերակշռում են գործազուրկները և մշտական եկամուտ չունեցողները:

Այսպես՝ 2007թ. հանցանք կատարած կանանց զանգվածում գործազուրկների տեսակարար կշիռը կազմել է մոտ 80% իսկ 2017թ. այդ թիվը հասել է մոտ 87%-ի: Եթե հաշվի առնենք, որ կանանց կողմից առավել հաճախ կատարվում են շահադիտական բնույթի հանցագործություններ, ապա վերոշարադրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ գործազրկությունը, աղքատությունը նպաստող պայման են կանանց կողմից կատարվող որոշ հանցատեսակների համար:



ՊԱՐԳԵՎ ՕՇԱՆՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԱՏԻՇԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ԶԿԻՐԱՌԵԼՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ՂԱՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախ՝ պետք է արձանագրենք, որ գործող քրեական օրենսդրության՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը քիչ է տարբերվում նախկին՝ ՀԽՍՀ քրեական օրենսդրությունից:

Գործող քրեական օրենսդրությանը համապատասխան՝ պատիժը պայմանականորեն չկիրառելը կատարվում է դատարանի հայեցողությամբ. հաշվի են առնվում հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը, բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքները. էությունը դատավճիռն ի կատար չածելն է՝ պայմանով, որ դատապարտյալը դատարանի կողմից սահմանված փորձաշրջանի ընթացքում իր վարքագծով կապացուցի, որ ուղղվել է¹:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու՝ թե՛ տեսական և թե՛ գործնական ամենաառանցքային հիմնախնդիրը դրա հիմնավորման մեջ է:

Խորհրդային քրեագետներից Մ. Գրիգորյանի կարծիքով. «Պատիժը պայմանականորեն չկիրառելը կարող է իրականացվել այն պայմանով, որ դատարանը հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Միայն այդ դեպքում դատարանը կարող է որոշում կայացնել նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Բնական է, որ այդպիսի հետևության դատարանը հանգում է՝ միայն հաշվի առնելով կատարված արարքի բոլոր փաստական ու քրեաիրավական բնութագրերը, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծան-

րացնող հանգամանքները, հանցավորի անձը բնութագրող տվյալները»²:

Ստանդակու կարծիքով՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ երկու՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքները՝

1) որպես օբյեկտիվ՝ հանցագործության բնույթը, վտանգավորությունը և դրա պատճառահետևանքային կապը,

2) որպես սուբյեկտիվ՝ մեղքի ձևը, կատարված հանցագործության շարժառիթները և նպատակները, հանցավորի կողմից այդ հանցագործության հանրորեն վտանգավոր հետևանքները նախատեսելու բնույթը և աստիճանը, արարքի կատարման մեջ նրա երկրորդական դերը³:

Շարգորոդսկին պնդում էր, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար անհրաժեշտ չեն հատուկ մեղմացուցիչ հանգամանքներ, այլ կարելի է սահմանափակվել պարզապես հասարակ մեղմացուցիչ հանգամանքների առկայությամբ, օրինակ՝ դատապարտյալի դրական բնութագիրը, առաջին անգամ հանցանք կատարած լինելը, խնամքին մանկահասակ երեխաների առկայությունը: «Չի կարելի սահմանափակել դատարանին այն հանցագործությունների շրջանակով, որոնց դեպքում կարելի կլինի պատիժը պայմանականորեն չկիրառել... Դատարանի որոշմամբ պետք է նշված լինեն այն բոլոր հանգամանքները, որոնք, դատարանի կարծիքով, նվազեցնում են դատապարտյալի հանրային վտանգավորությունը», - նշում էր Շարգորոդսկին⁴:

Շնեյդերը համարում էր, թե պատիժը պայ-

¹ Մ. Գրիգորյան, Քրեական իրավունք, ուսումնական ձեռնարկ, Ե. 2003. էջ 554:
² Сборник постановлений Пленумов Верховного Суда СССР. 1924-1986. М., 1987. С. 489.
³ Становский М.Н. Назначение наказания при совокупности преступлений: Автореф. дис. ... канд. юрид. наук. СПб., 1995. С. .3
⁴ Шаргородский М.Д. Наказание по советскому уголовному праву. М. 1958г. С. 157- 188.

մանականորեն չկիրառելու ինստիտուտի համար անհրաժեշտ է որոշակի, կոնկրետ մեղմացուցիչ հանգամանքների առկայություն⁵:

Գիտնականներ Մուզենիկը, Ուտկինը և Ֆիլիմոնովը համակարծիք են եղել, որ՝ «փաստացի հանգամանքների առկայությունն իսկ՝ անհրաժեշտ և բավարար հիմք է դատարանի կողմից անձի նկատմամբ ազատազրկման հետ չկապված պատիժ նշանակելու համար» և, փաստորեն, հիմք՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

Գորյանովան պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է համարել այնպիսի փաստերի ու հանգամանքների առկայությունը, որոնք հնարավորություն են տալիս ենթադրելու, թե անձի ուղղումը հնարավոր է առանց ազատազրկման ձևով նշանակված պատիժը կիրառելու, բայց և՛ դատապարտյալի նկատմամբ որոշակի պարտավորությունների սահմանման և համապատասխան պետական մարմնի հսկողության պայմաններում⁶:

Տկաչևսկին սահմանել է, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու համար անհրաժեշտ են այնպիսի պայմաններ, որոնք կվկայեն, որ արարքը կատարած անձը, արարքի հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը և արարքում հանցավորի դերը չեն պահանջում ազատազրկման հետ կապված պատժի կիրառում⁷:

Լոմակոն խնդրի լուծումը տեսնում էր այն պայմանում, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմնավորվածության համար անհրաժեշտ է հաշվի առնել դատապարտյալի կողմից կատարած հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը, հանցավորի անձը բնութագրող տվյալները, որոնց ընդհանրության մեջ միայն հնարավորություն կլինի պատիժը պայմանականորեն չկիրառելու⁸:

Կրիգերը այնպես էր, որ պատիժը պայմանականորեն կարող է չկիրառվել, եթե դատարանը, հաշվի առնելով հանցագործության բնույթը, գործի հանգամանքները և հանցավորի անձը, հանգում է հետևության, որ տվյալ անձը հասարակության համար վտանգ չի ներկայացնում և, միևնույն ժամանակ՝ նրա բարոյական հատկանիշների և պետության ու հասարակության առջև ունեցած պատասխանատվության զգացմամբ, վստահելի է ու կարող է ուղղվել՝ առանց իրական պատիժ կրելու⁹:

Ոչ որոշակի դիրքորոշում ունեն Մարցևը և Լիեդը, ըստ որոնց՝ պատիժը պայմանականորեն չպետք է կիրառել, երբ ազատազրկման ձևով պատիժ նշանակելը նպատակահարմար չէ¹⁰:

Ինչպես տեսանք՝ քրեաիրավական գրականության մեջ չկա մեկ ընդհանուր կարծիք՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի վերաբերյալ: Մեր կարծիքով՝ դատարանը պետք է պատիժն անհատականեցնելու սկզբունքի կիրառման հնարավորություն ունենա՝ իր ինքնուրույն կարծիքն արտահայտելով և ընդգծելով յուրաքանչյուր դատապարտյալի անհատականությունը: Միայն օրենքով նախատեսված որոշակի մեղմացուցիչ հանգամանքների առկայությունը, կարծում ենք, կազդի դատարանի օբյեկտիվության վրա:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կայացման ու հիմնավորման հարցում մեծ են դատական պրակտիկայի դերն ու նշանակությունը: Սակայն թողնել միայն դատարանի հայեցողությանը, կարծում ենք, ճիշտ չի լինի: Այստեղ պետք է համաձայնել Կոնդալովի այն կարծիքին, թե դատարանների կողմից պատիժը պայմանականորեն չկիրառելու հարցի սուբյեկտիվ քննարկումը, առանց օբյեկտիվ փաստերի առկայության, կհանգեցնի անօրինականության և դատական ամենաթողության¹¹:

⁵ Шнейдер М. Л. Назначение наказания по советскому уголовному праву. М. 1957 г. С. 96.

⁶ Горяйнова Е.Л. Условное осуждение по советскому уголовному праву. Автореферат дис. ... канд. наук. М. 1987 г. С. 8.

⁷ Ткачевский Ю.М. Условное осуждение. Применение наказания по советскому уголовному праву. М. 1958 г. С. 268.

⁸ Ломако В.Л. Применение условного осуждения. Харьков: Вини школа. 1976 г. С. 30.

⁹ Кригер Г. А. Условное осуждение и роль общественности в его применении. Изд-во МГУ. М, 1963 г. С. 12.

¹⁰ Лиезде А.Л. Социологические и психологические основы условного осуждения несовершеннолетних. Правоведение. 1966г. №4. С. 22. Бышевский Ю.В. Марцев А.И. Наказание и его назначение. Омск. Омская высшая школа милиции МВД СССР 1975 г. С. 67.

¹¹ Кондалов А. Н. Условное осуждение и механизмы его обеспечения. Дисс. канд. юр. наук. Казань. 2000 г.

Պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի վերաբերյալ իրավակիրառ պրակտիկայում առկա են որոշակի իրարամերժ մոտեցումներ՝ պայմանավորված ինչպես այն հանգամանքով, որ ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՔՕ) 70-րդ հոդվածի դրույթները դիսպոզիտիվ են, այսինքն՝ դատարանի հայեցողությանն է թողնված պատիժը պայմանականորեն կիրառելու կամ չկիրառելու հնարավորությունը, այնպես էլ, որ դատական իրավակիրառ պրակտիկան միասնական չէ:

ՀՀ ՔՕ 70 հոդվածի 1 և 2 մասերի համաձայն՝ եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին: Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները:

ՀՀ ՔՕ 70 հոդվածի ոչ այնքան հստակ, դատական հայեցողության մեծ հնարավորություններ պարունակող ձևակերպումը թույլ է տալիս դատարանին պատիժը պայմանականորեն չկիրառել ցանկացած քրեական գործով՝ հիմք ընդունելով իր սեփական (սուբյեկտիվ) համոզվածությունը, որ անձի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու:

Պատիժը պայմանականորեն չկիրառելու համար կարևոր նշանակություն ունեն նաև հանցագործության տեսակը, դրա հանրային վտանգավորության բնույթն ու աստիճանը: Վերջին հաշվով՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությանը մասնակցած անձը, մեր կարծիքով, բավականաչափ բարձր հանրային վտանգավորություն է ներկայացնում, և ճիշտ չի լինի նրա նկատմամբ պատիժը պայմանականորեն չկիրառել: Այլ հարց է, թե նման հանցանք կատարած անձի նկատմամբ, բացառիկ հանգամանքների առկայության դեպքում, կարող է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ

պատիժ նշանակվել ու պայմանականորեն չկիրառվել:

Համեմատելով պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի հայրենական փորձը Գերմանիայի, Ֆրանսիայի, Լեհաստանի, Ռուսաստանի (իր նմանություններով և տարբերություններով հանդերձ) և այլ երկրների հետ՝ փաստում ենք տարաբնույթ մոտեցումներ: Այն երկրներում, որտեղ ձևավորված են կայուն դատական համակարգեր, որտեղ դատավորներն անկախ են, դատական իշխանությունն ունի հնագույն ավանդույթներ, օրենսդիրը հստակորեն նշել է դատական քննության սահմանները՝ հնարավորություն տալով դատարաններին պատիժը պայմանականորեն չկիրառելու այն անձանց նկատմամբ, ովքեր առաջին անգամ են կատարում միջին ծանրության հանցագործություն և դատապարտվում են 1 տարուց ոչ ավելի ազատազրկման: Մեր երկրում (հետխորհրդային գրեթե բոլոր երկրների փորձը դա է ցույց տալիս), որտեղ դատական իշխանությունը գտնվում է կայացման ընթացքում, օրենսդիրը պատիժը պայմանականորեն չկիրառելու սահմանների լայն հնարավորություն է ընձեռել: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ նման օրենսդրական որոշման համար անհրաժեշտ են ծանրակշիռ փաստեր ու փաստարկներ, իսկ ՀՀ ՔՕ 70 հոդվածը ենթակա է լրացման:

ՀՀ Վճռաբեկ դատարանը քննարկվող ինստիտուտի կապակցությամբ դիրքորոշում է հայտնել իր մի շարք որոշումներում: Մասնավորապես՝ Հ. Բաղդասարյանի վերաբերյալ գործով որոշմամբ արձանագրվել է, որ. «(...) պատիժը կարող է պայմանականորեն չկիրառվել, եթե առկա է դատարանի համոզվածությունը՝ առանց իրական պատիժ նշանակելու ամբաստանյալի ուղղվելու հնարավորության մասին: Դատարանը նման հետևության հանգում է միայն օբյեկտիվ գոյություն ունեցող տվյալների վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին (...)»¹²:

Ակնհայտ է, որ միայն բոլոր գործոնների

¹² Հուսիկ Սուրենի Բաղդասարյանի վերաբերյալ գործով Վճռաբեկ դատարանի 2008 թվականի նոյեմբերի 28-ի թիվ ԱՎԴ2/0059/01/08 որոշման 24-րդ կետը:

համալիր գնահատականը դատարանին հնարավորություն կտա բավարար քրեաիրավական հիմնավորվածությամբ իրականացնելու պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտը:

Մի շարք գիտնականներ կարծում են, թե պատիժը պայմանականորեն չկիրառելու հողվածի դիսպոզիցիայում ուղղակի արգելք պետք է սահմանել՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ այն անձանց շրջանակի համար, ովքեր դատապարտվում են ծանր հանցագործություն կատարելու համար¹³:

Մ. Գրիգորյանը նշում էր, որ՝ «...օրենքը ձևականորեն չի արգելում պատիժը պայմանականորեն չկիրառել նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարած անձանց նկատմամբ: Դրա հետ մեկտեղ՝ ձևավորված դատական պրակտիկան այդպիսի հանցանք կատարած անձանց նկատմամբ պատիժը պայմանականորեն չէր կիրառում միայն բացառիկ դեպքերում»: Այդպիսի բնորոշում է տրված Գ.Ա. Կրիգերի և Է.Ա. Սարկիսովայի աշխատություններում¹⁴: Նմանատիպ դիրքորոշում է արտահայտում Վ.Վ. Սկիբիցկին, ըստ որի՝ «պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմք է դատապարտյալի հանրության համար նվազ վտանգավորությունը»: Սա ճիշտ մոտեցում է:

Կարծում ենք՝ անձի ու նրա կատարած արարքի հանրային վտանգավորության իրական չափանիշն այդ անձի նկատմամբ նշանակված պատիժն է: Ուստի առաջարկում ենք պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը սահմանափակել մինչև առավելագույնը երեք տարի ժամկետով ազատազրկում նշանակելու դեպքերով: Սա, մեր կարծիքով՝ այն ժամկետն է, որը վկայում է անձի ու նրա կատարած արարքի ոչ այնքան բարձր հանրային վտանգավորության մասին: Ընդգծենք, որ եվրոպական երկրների մեծ մասի քրեական օրենսդրություններով պակաս ժամկետ է նախատեսված: Բացի այդ՝ այս ժամկետն այն ժամկետն է, որը հավասարազոր է ոչ մեծ ծան-

րության հանցագործությունների համար նախատեսված պատիժի առավելագույն ժամկետին, իսկ որոշ դեպքերում՝ միջին ծանրության հանցագործությունների համար նախատեսված ժամկետներին:

Ի լրումն վերոգրյալի, ըստ Մ. Գրիգորյանի՝ դատարանը չպետք է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնի դատվածություն ունեցող անձանց և, առավել ևս՝ այնպիսի անձանց նկատմամբ, ովքեր արդեն իսկ նախկինում դատապարտվել են «պայմանականորեն»¹⁵:

Կարծում ենք, սակայն, որ պատիժը պայմանականորեն չկիրառելու այսպիսի միանշանակ սահմանափակում սահմանելը ճիշտ չէ: Հնարավոր են դեպքեր, երբ նախկինում դատապարտված կամ պայմանական դատապարտված անձն այնպիսի հանցանք կատարի, որը շատ ցածր հանրային վտանգավորություն ներկայացնի և չվկայի հանցանք կատարողի բարձր հանրային վտանգավորության մասին: Օրինակ՝ նոր հանցանքն անզգուշությամբ է կատարվել կամ կատարվել է կյանքի ծանր հանգամանքների զուգորդման հետևանքով կամ հարկադրանքի, սպառնալիքի ազդեցությամբ:

Մյուս կողմից՝ դատարանները չպետք է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնեն այն անձի նկատմամբ, ում պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող թեկուզ և մեկ հանգամանք կա, կամ դիտավորյալ հանցագործությունը կատարել է փորձաշրջանի ընթացքում:

Թ. Տեր-Գրիգորյանի վերաբերյալ որոշման մեջ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշում է հայտնել այն մասին, որ. «Պատիժ նշանակելիս և պատիժը կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Հան-

¹³ Уголовный закон: опыт теоретического моделирования. Отв. ред. В.Н. Кудрявцев, С.Г. Келина. М., 1987. С. 276; Нечипуренко А.А. Неотвратимость наказания как принцип уголовного права. Омск, 1996. С. 63; Ольховик Н.В. Режим испытания при условном осуждении. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Томск, 2003.

¹⁴ См.: Кригер Г.А. Условное осуждение и роль общественности в его применении. М. 1963. С. 101; Саркисова Э.А. Условное осуждение по советскому уголовному праву: Автореф. дисс. ...канд. юрид. наук. М. 1963. С. 20.

¹⁵ Մ. Գրիգորյան, Քրեական իրավունք, Ընդհանուր մաս, Ուսումնական ձեռնարկ, Եր. 2003. էջ 556

ցակազմի սահմաններից դուրս գտնվելով՝ դրանք բնութագրում են ինչպես կատարված հանցագործությունը, այնպես էլ հանցավորի անձը, հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու հանցավորի անձի և հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի մասին՝ վերջինս համապատասխանաբար բարձրացնելով կամ իջեցնելով: Դրանց գնահատմամբ է հնարավոր յուրաքանչյուր կոնկրետ գործով անհատական մոտեցում ցուցաբերել՝ ինչպես պատժի տեսակը և չափը որոշելիս, այնպես էլ պատիժը կրելու նպատակահարմարության հարցը լուծելիս»¹⁶:

Այսպիսով, ըստ մեզ՝ դատարանը, որպես կանոն, չպետք է պատիժը պայմանականորեն չկիրառի, եթե առկա չեն հանցավորի անձը բնութագրող «դրական» տվյալներ և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող գոնե մեկ հանգամանք:

Բացի այդ՝ չպետք է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացվի, եթե առկա են հանցավորի անձը բնութագրող «բացասական» տվյալներ և (կամ), առավել ևս՝ պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող թեկուզ և մեկ հանգամանք: Բնականաբար, թե՛ մեղմացնող և թե՛ ծանրացնող հանգամանքների առկայությունը պետք է գնահատի դատարանը, հատկապես՝ այն դեպքերում, երբ, ելնելով հանցագործության բնույթից, դատարանը կարող է հանգամանքը ծանրացնող չհամարել (ՀՀ ՔՕ 63 հոդվածի 10 և 14 մասեր):

ՀՀ ՔՕ 70 հոդվածի 3 մասի համաձայն՝ պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը սահմանում է փորձաշրջան՝ մեկից հինգ տարի ժամկետով:

Փորձաշրջանն այն ժամկետն է, որի ընթացքում, ըստ դատարանի համոզվածության՝ դատապարտյալը «պետք է ուղղվի»: Ինչո՞ւ չափերտների մեջ, որովհետև ուղղվելն ավելի լայն հասկացություն է, քան այն «արդյունքը», որը գործնականում ստանում ենք, առավել ևս՝ նկատի ունենալով նաև այն դեպքերը, երբ դատարանները, մեղադրական դատավճիռ կայացնելիս պատիժը պայմանականորեն չկիրառե-

լով, պարտականություն չեն դնում անձի վրա: Մինչդեռ, ըստ մեզ՝ պայմանականությունը պայման է նշանակում, իսկ պայմանն էլ պարտականություն է ենթադրում:

Կարծում ենք՝ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս, դատարանը պետք է պարտադիր պարտականություն սահմանի: Ուստի առաջարկում ենք՝ ՀՀ ՔՕ 70 հոդվածի 5-րդ մասը շարադրել մոտավորապես հետևյալ բովանդակությամբ.

«Պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս դատարանը դատապարտյալի վրա դնում է նրա ուղղմանը նպաստող որոշակի պարտականություններ՝ օրինապահ վարքագիծ դրսևորել հասարակությունում և ընտանիքում, դատարանի կողմից որոշված անձանց հետ հանդիպելուց խուսափել, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնին հայտնել մշտական բնակության վայրի փոփոխության վերաբերյալ, բուժման կուրս անցնել ավտոհոլամոլությունից, թմրամոլությունից, վեներական հիվանդությունից կամ թունամոլությունից, այցելել հոգեբանի, հատուցել տուժողին կամ նրա ընտանիքին պատճառված նյութական վնասը, հանրային աշխատանքով զբաղվել: Դատարանը, դատապարտյալի վարքագծի նկատմամբ վերահսկողություն իրականացնող իրավասու մարմնի միջնորդությամբ կամ առանց դրա, դատապարտյալի վրա կարող է դնել նաև նրա ուղղմանը նպաստող այլ պարտականություններ կամ փոխարինել դրանք»:

Կարծում ենք՝ նման պարտականություններ դնելը կարող է զգալիորեն բարձրացնել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի արդյունավետությունը, հատկապես՝ տուժողին պատճառված վնասի հատուցման պարտականություն սահմանելու մասով, որպիսի պահանջը, ինչպես նաև՝ դատապարտյալի վրա դրված այլ պարտականությունը չկատարվելու դեպքում՝ նշանակված պատիժը պետք է կիրառվի:

¹⁶ Թամարա Տեր-Գրիգորյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 2007 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ ՎԲ-192/07 որոշումը:

ՀՈՎԱՏՓ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի երկրորդ կուրսի մագիստրանտ

**Ձեռքբերման վաղեմությունն անհարժ գույքի նկատմամբ
իրավունքների գրանցման ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՄ**

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասով նշվում է, որ քաղաքացին կամ իրավաբանական անձը, ով անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն):

Նախադեպային իրավունքը բազմիցս անդրադարձել է ձեռքբերման վաղեմության ինստիտուտին: Այսպես՝ թիվ 3-184 (ՎԴ) գործով՝ դատարանը եզրակացրել է, որ ձեռքբերման վաղեմությունն օրենքով նախատեսված որոշակի ժամկետը լրանալու և որոշակի պայմանների վրա հասնելու ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի կողմից՝ այդ իրավունքի դադարման միջոց է: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար անհրաժեշտ է օրենքով նշված մի շարք վավերապայմանների միաժամանակյա առկայությունը:

Այսինքն՝ եթե օրենքում նշված վավերապայմանները առկա են, ապա անձը ձեռք է բերում սեփականության իրավունք, ուստի առաջին հայացքից թվում է, թե սեփականության իրավունքը ձեռք է բերվում առանց պետական գրանցման պայմանի: Սակայն նույն հոդվածի 4-րդ մասի նորմը հռչակում է, որ՝ «անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը վաղեմության ուժով գույքը ձեռք բերած անձի պարագայում ծագում է այդ իրավունքի պետական գրանցման պահից»: Նշված վիճակն ավելի քան հակասական է: Վերլուծությունից ստացվում է, որ գույքը կարող է ձեռք բերված

լինել, բայց սեփականության իրավունքը մինչև պետական գրանցումը գոյություն չունենա: Մի կողմից՝ ստացվում է, որ սեփականության իրավունքը ծագում է գրանցման պահից, մյուս կողմից՝ նշվում է, որ ծագում է գույքը ձեռք բերած անձի պարագայում: Սակայն, գույքի ձեռքբերում ասելով՝ հաշվի է առնվում դրա նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերումը, իսկ դա նշանակում է, թե իրավունքը ձեռք է բերվում պետական գրանցումից առաջ:

Նույնիսկ եթե ենթադրենք, թե վաղեմության ուժով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է պետական գրանցման պահից, գլխավոր հիմնախնդիրը կմնա ձեռքբերման վաղեմության ինստիտուտի կիրառման հարցը, քանի որ օրենքում ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման կարգը հստակ նշված չէ:

Վճռաբեկ դատարանի պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանը, քննարկելով ձեռքբերման վավերապայմանները, չի նշում, որ սեփականության իրավունքը ծագում է գրանցման պահից, այլ նշում է, որ սեփականության իրավունքը ծագում է վավերապայմանների առկայության դեպքում: Օրենսդիրն ուղղակիորեն հնարավորություն է տալիս որոշակի պայմանների միաժամանակյա առկայության դեպքում անշարժ գույքի նկատմամբ ձեռք բերելու սեփականության իրավունք՝ առանց դրա նախկին սեփականատիրոջ կամքի:

Ուստի ներկայումս գոյություն ունի հակասություն քաղաքացիական օրենսգրքի համապատասխան նորմերի ու իրավակիրառ պրակտիկայի միջև: Չնայած՝ հարկ է նշել, որ հենց այս հակասությունն է թույլ տալիս, որ վաղեմության ուժով տիրապետողը կարողանա վա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

ղեմության ժամկետը լրանալուց հետո իր իրավունքի ճանաչման հայց հարուցել: Այսպիսով՝ օրենսդիրը տարածում է ներառման սկզբունքը նաև ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման վրա:¹ Իսկ դատական պրակտիկան թույլ է տալիս, որ տիրապետման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերումը կատարվի գրանցամատյանից դուրս (ipso iure), նույնիսկ եթե դա վերաբերում է գրանցված անշարժ գույքին:

Ամփոփենք. մի կողմից՝ կան հողվածներ, որոնք հստակ սահմանում են, որ անձն այս կամ այն գույքի նկատմամբ իրավունք ունի՝ որևէ փաստի կամ հանգամանքի առաջացման պահից սկսած, օրինակ՝ անշարժ գույքի տասնամյա անընդմեջ, բացահայտ, բարեխիղճ տիրապետման դեպքում, իսկ մյուս կողմից՝ անշարժ գույքի նկատմամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը պետական գրանցման ռեժիմ է սահմանում, այսինքն՝ սահմանում է, որ գույքային իրավունքն առաջանում է պետական գրանցման պահից:

Հետևաբար՝ եթե այլ անձ պահանջի ճանաչել այդ նույն գույքի նկատմամբ իր իրավունքները, ապա հարց է առաջանում. ինչը սեփականության իրավունքի առաջացման պահ կհանդիսանա՝ տասնամյա անընդմեջ, բացահայտ, բարեխիղճ տիրապետելու փաստը, թե՛ պետական գրանցման փաստը: Կարող է գրանցումը ինքնին իրավունք առաջացնող փաստ լինել: Եթե՝ ոչ, ապա ինչու իրավունքների առաջացումը պայմանավորել գրանցման փաստով:

Այդպիսի իրավիճակն էապես հակասում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման համակարգի նպատակին, այն է՝ լինել յուրաքանչյուր անշարժ գույքի իրավական կարգավիճակի վերաբերյալ տեղեկատվության աղբյուր: Պետական գրանցման, այսպես կոչված, երկրորդական պայման լինելու

փաստը բխում է այն հանգամանքից, որ Վճռաբեկ դատարանը նշում է՝ ձեռքբերման վաղեմության ուժով գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելիս էական նշանակություն ունեն ոչ թե գույքի նկատմամբ այլ՝ գույքի իրավունքների վերաբերյալ ապացույցները, այլ դրա նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերողի կողմից տասը տարի և ավելի բարեխիղճորեն, անընդմեջ ու բացահայտ օգտագործելու և տիրապետելու հանգամանքները (տես 3-1229 ՎԴ, 3-537 ՎԴ):

Արդյոք պետք է, որ դատական պրակտիկայի մոտեցումն օրենսդրական ամրագրում ստանա: Ռուսաստանի Դաշնության օրենսդրության մեջ, որտեղ քննարկվող նորմը համանման է մեր օրենսդրությունում առկա նորմին, քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգը քննարկելիս Ռ.Ս. Բազենկոն կարծիք է հայտնում այն մասին, որ տիրապետման փաստը կարող են սահմանել միայն դատարանները, այլ ոչ թե՛ գրանցող մարմինները, այդ իսկ պատճառով չի կարելի գրանցումը համարել ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման պայման:² Հեղինակը նաև նշում է, որ ձեռքբերման վաղեմության կիրառումը ծագում է հիմնականում ներկայացված վինդիկացիոն հայցի շրջանակներում: Վճռաբեկ դատարանը նույնպես նշել է, որ գույքի բարեխիղճ ձեռք բերող լինելու հարցին անդրադառնում են, երբ սեփականատեր կողմը առարկության կամ պահանջի ձևով անդրադարձել է գույքը հետ պահանջելու հայցին:³ Սակայն անհրաժեշտ է նշել, որ գոյություն ունեն նաև հանգամանքներ, երբ ձեռքբերման վաղեմության կիրառման հարցը ծագում է նաև իրավունքի ճանաչման հայցը քննարկելիս, և սա ավելի հաճախ է պատահում:

Ձեռքբերման վաղեմության վերաբերյալ նորից սեփականության իրավունքի պետական

¹ Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման համար պետական գրանցման անհրաժեշտության մասին նշել են մի շարք գիտնականներ, օրինակ՝ Մ.Ի.Բրագինսկին: /Брагинский М.И., Комментарий к Закону РФ «О государственной регистрации прав на недвижимое имущество и сделок с ним». М., 1998. С. 7, Титова Т.С. Приобретение недвижимости по давности владения в современном праве России и Германии//Закон 2009 ном. 10. С.194, 195.

² Гражданское право: актуальные проблемы теории и практики / Под общ. ред. В. А. Белова. М., 2007. С. 560, 561; Бевзенко Р. С. Указ. соч. С. 26-28.

³ 3-438 ՎԴ 2007թ. մայիսի 18, ԵԱՔԴ 0275-0208 2009թ. և այլն:

գրանցման պայմանի բացառումը թույլ է տալիս վաղեմության ուժով տիրապետողներին ներկայացնել իրենց սեփականության իրավունքի ճանաչման հայցեր, այլապես՝ վաղեմության ուժով տիրապետողը կարող է միայն դիմում ներկայացնել վաղեմությամբ տիրապետման փաստը սահմանելու վերաբերյալ:⁴

Փաստենք, որ օրենսդիրի կողմից ձեռքբերման վաղեմության մասին կանոնների համապատասխանեցում գրանցման համակարգի պահանջներին չի կատարվել, ինչն անշարժ գույքի շրջանառության ոլորտում կարող է բացասական անզդեցություն ունենալ:

Ենթադրվում է, թե անշարժ գույքի գրանցամատյանից դուրս գոյություն ունեցող իրավունքների պաշտպանության եղանակները պետք է տարբերվեն գրանցված իրավունքների պաշտպանության եղանակներից՝ ելնելով հենց գրանցամատյանի առկայության պայմանից, մինչդեռ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունն այդ տարբերությունը հաշվի չի առնում:

Արտասահմանյան փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն գրանցման համակարգի և ձեռքբերման վաղեմության ինստիտուտի համակցության մի քանի տարբերակ: Տարբերակներից մեկն է, օրինակ, ձեռքբերման վաղեմության չկիրառելը գրանցված անշարժ գույքի նկատմամբ: Այսպիսին է «Անշարժ գույքի պետական գրանցման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքը, որը, գրանցումից անկախ, օրինական համարվող իրավունքների թիվն է դասում անշարժ գույքի առաջնահերթ օգտագործումը Ղազախստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 265 հոդվածով նախատեսված կարգով (ձեռքբերման վաղեմություն)՝ հստակ սահմանելով, որ ձեռքբերման վաղեմության վրա չի տարածվում ներառման սկզբունքը: Այդպիսի մոտեցում է ընդունված նաև Ավստրալիա-

յում:⁵ Սակայն ներկայումս այն երկրներում, որտեղ գրանցման համակարգի ու ձեռքբերման վաղեմության ինստիտուտի համապատասխանեցում չի կատարվել, իրավիճակի շտկման փորձեր են արվում:

Գերմանիայում գոյություն ունեցող «գրքային» վաղեմությունն օգտագործվում է այն դեպքերում, երբ ռեեստրում նշված սեփականատերն իրականում չունի իրավունք, քանի որ բացակայում են դրա ձեռքբերման հիմքերը: Այս ինստիտուտի նպատակն է իրավաբանական իրադրության և ռեեստրի տվյալների համապատասխանության հասնելը:⁶ Գերմանական իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ «գույքային վաղեմությունը» ձեռքբերման հատուկ տեսակ է: Այս ինստիտուտի կիրառումը կապված է նախորդ սեփականատիրոջ կողմից իր իրավունքից լուսկյաց հրաժարվելու հետ:⁷ Մինչդեռ իրականում չի կարելի ժխտել նաև, որ այդ ինստիտուտն ունի ձեռքբերման վաղեմությանը բնորոշ ավանդական գծեր, որը, սակայն, զրկված է տիտղոսից ու բարեխղճության հատկանիշից:⁸

Գրանցման համակարգի ու ձեռքբերման վաղեմության ինստիտուտի համապատասխանեցման փորձեր է արվել Անգլիայում: Այսպես՝ այնտեղ նախկինում գործում էր adverse possession-ը, որը հանգեցնում է իրավական հետևանքների տասներկու տարին լրանալուց հետո: Եթե գույքը գրանցված էր, ապա վաղեմության ուժով տիրապետողը դառնում էր շահառու ըստ վստահության:⁹ Չնայած նախկին սեփականատիրոջ անունը մնում էր գրանցամատյանում, սակայն դա ուներ էր զուտ ձևական բնույթ, քանի որ նոր սեփականատերը կարող էր ցանկացած պահի գրանցվել որպես այդպիսին: 2002 թվականին ընդունված Land Registration Act-ը դարձրեց պետական գրանցումը պայման արդեն իսկ գրանցված անշարժ գույքի նկատմամբ վաղեմության ուժով սեփականության ի-

⁴ Այսպիսի դիմում ներկայացնելը Ռուսաստանի Դաշնությունում հնարավոր է 10/22 որոշման ուժով:

⁵ Law.Com.No.254.Para.10.17.

⁶ Ельящевич В.Б., Комментарий Свода законов Российской империи //Законы гражданские. Практический и теоретический комментарий под ред. А.Э. Вормса и В.Б. Ельящевича. Вып. 2, М., 1913. С. 344-345.

⁷ Рудоквас А. Д. Спорные вопросы учения о приобретательной давности. М., 2011. С. 59-61.

⁸ Титова Т. С. Приобретение недвижимости по давности владения в современном праве России и Германии // Закон. 2009. N 10. С. 197, 198.

⁹ Cooke E. Adverse Possession – Problems of Title in Registered Land // Legal Studies. 1994. No. 1. P. 1-14.

րավունքի ձեռքբերման համար: Հետագայում իրավիճակը շտկվեց, և ներկայումս վաղեմության ուժով տիրապետողը դիմում է գրանցող մարմնին, որը գրանցված անձին ուղարկում է ծանուցում: Եթե սեփականատիրոջ կողմից սահմանված ժամկետում առարկություն չի ներկայացվում, ապա դիմումատուին գրանցում են որպես նոր սեփականատեր: Առարկություն ներկայացնելու դեպքում գրանցված սեփականատիրոջը տրվում է երեք տարի, որպեսզի նա իրեն վերադարձնի գույքի տիրապետումը, իսկ հայց չներկայացնելու դեպքում նոր սեփականատեր է գրանցվում վաղեմության ուժով տիրապետողը:

Այսպիսով՝ ժամանակակից Անգլիայում գրանցումն անհրաժեշտ պայման է ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման համար:

Պրակտիկայում լինում են դեպքեր, երբ վաղեմությամբ տիրապետողն արդեն իսկ գրանցված է իրավունքների պետական գրանցամատյանում որպես սեփականատեր, սակայն այդպիսին չի համարվում, քանի որ գույքը ձեռք է բերվել անվավեր գործարքի հիման վրա, սեփականատիրոջ կամքից անկախ և այլն: Այդպիսի դեպքերում մինչև ձեռքբերման վաղեմության ժամկետը լրանալը գրանցված տվյալները սխալ են լինում և միայն այդ ժամանակի ավարտից հետո դառնում են հավաստի:

Ա.Դ. Ռուդոկվասն արդարացիորեն նշում է ձեռքբերման վաղեմության ռետրոակտիվության մասին: Հեղինակը նշում է, որ, չնայած բարեխիղճ ձեռք բերողը կարող է իրավունքների գրանցամատյանում գրանցված լինել որպես սեփականատեր, սակայն սեփականության իրավունքի ձեռքբերման բարդ իրավաբանական կազմի այս կամ այն տարրի բացակայության դեպքում նա միայն վաղեմության ուժով տիրապետող է: Եթե ձեռքբերման վաղեմության ժամկետը լրացել է, ապա պետական գրանցման ենթակա անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագում է այն անձի նկատմամբ ով ձեռք է բերել գույքը

ձեռքբերման վաղեմության ուժով այդպիսի գրանցման պահից: Սակայն այդ իրավիճակի համար գործող օրենսդրությունը չի նախատեսում չեղարկման հատուկ կարգ, որով կչեղարկվեր անվավեր գործարքի հիման վրա կատարված գրանցումը, և կկատարվեր նոր գրանցում վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքով, հետևաբար՝ ենթադրվում է, թե, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալով, անձը, ով նախօրոք նշված է ռեեստրում որպես այդպիսին, ճանաչվում է սեփականատեր ex tunc, այսինքն՝ գրանցման գրառման պահից, այլ ոչ թե՝ ձեռքբերման վաղեմության ժամկետի ավարտման պահից:¹⁰

Այսպիսով՝ ձեռքբերման վաղեմության ներկայիս հայեցակարգը զրկում է համապատասխան երաշխիքներից ցանկացած գրանցված իրավունք: Այդ իսկ պատճառով ենթադրում ենք, թե ձեռքբերման վաղեմության ներկայիս մոտեցումը կիրառելի է միայն չգրանցված իրավունքների դեպքում: Ձեռքբերման վաղեմության պայմանները, սակայն, պետք է փոփոխության ենթարկվեն նաև անշարժ գույքի նկատմամբ գրանցված իրավունքի դեպքում: Խոսքը այն դեպքերի մասին է, երբ գրանցված սեփականատերը փաստացի չի տիրապետում անշարժ գույքը, այլ տիրապետում է այդպիսի տիրապետման համար իրավական հիմք չունեցող երրորդ անձը: Չնայած նշված դեպքում նույնպես կարելի է պահպանել իրավունքի ձեռքբերումը ձեռքբերման վաղեմության հիմքով, սակայն դրա պայմանները պետք է տարբերվեն, և դա պետք է հնարավոր լինի այն դեպքում, երբ գրանցված սեփականատերը շահագրգրված չէ իրեն պատկանող գույքը վերադարձնելու:

Վաղեմության տիրապետման ինստիտուտի հիմնական նպատակն ու նշանակությունն է տիրապետում-իրավունքի և տիրապետում-փաստի միջև տարանջատման իրավիճակում շրջանառության ոլորտում առկա հարաբերությունների անորոշության շտկումը:¹¹ Գրանց-

¹⁰ Рудоквас А.Д. Приобретательская давность и давностное владение. Автореферат диссертации доктора юридических наук. 2012. С. 19-20.

¹¹ Тужилова-Орданская Е.М. Гражданско-правовая защита фактического владения: проблема определения способов, Вестник Омского университета. Серия «Право», №2 (35) / 2013.

ված իրավունքների դեպքում իրավաբանական տիրապետումը գրանցում է ստանում իրավունքի գրանցման հետ մեկտեղ՝ որպես սեփականության իրավունքի բաղադրիչ մաս: Մինչդեռ անշարժ գույքի փաստացի տիրապետումը կարող է և չհամընկնել իրավաբանական տիրապետման հետ:

Նշենք, որ հռոմեական իրավունքում ձեռքբերման և հայցային վաղեմության ինստիտուտների հարաբերակցությունն այն է, որ ձեռքբերման վաղեմության ժամկետի ավարտից հետո բարեխիղճ տիրապետողները *iustus titulus* դառնում էին սեփականատեր, իսկ անբարեխիղճ տիրապետողն ընդհանրապես չէր կարող ձեռքբերել սեփականության իրավունք: Վաղեմության ուժով տիրապետման ժամկետն սկսվում էր ոչ թե վինդիկացիոն հայցով վաղեմության ժամկետի ավարտից, այլ՝ գույքի տիրապետման տակ անցնելուց հետո: Այստեղ նույնպես տիրապետման փաստն ուներ որոշիչ նշանակություն:

Փաստացի տիրապետման գրանցումը կօգնի, որպեսզի անշարժ գույքի սեփականատերը տեղեկանա այն մասին, որ իր գույքի նկատմամբ պետական գրանցամատյանում գրանցման հայտ է ներկայացրել այլ անձ, և ձեռնարկի համապատասխան միջոցներ: Բացի այդ՝ այսպիսի մոտեցումը թույլ կտա կրճատել վաղեմությամբ տիրապետման համար պահանջվող ժամկետը: Եթե օրենքով սահմանված ժամանակահատվածում գրանցված սեփականատերը չի առարկում ու չի ներկայացնում վինդիկացիոն հայց, ապա այդ ժամանակահատվածի ավարտից հետո տիրապետողը կարող է գրանցվել որպես նոր սեփականատեր: Գրանցումը կարող է կատարվել հատուկ վարույթի շրջանակներում դատարանի կողմից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեփականու-

թյունից կարելի է գրկել միայն դատական որոշման հիման վրա: Միաժամանակ, ցանկացած դեպքում օրենսդրությունը պետք է տիրապետման պաշտպանության միջոցներ տրամադրի փաստացի տիրապետողին տիրապետման գրանցման պահից: Պաշտպանությունը չի գործի սեփականատիրոջ դեմ, իսկ քննարկվող հիմքով սեփականության ձեռքբերումը հնարավոր չի լինի, եթե տիրապետումը հանցագործության հետևանք է:

Ենթադրվում է, թե վերը նշված մոտեցումը կօգնի, որպեսզի քննարկվող ինստիտուտն ավելի արդյունավետ ծառայի իր առջև դրված նպատակին: Իսկ ներկայումս միայն կարելի է փաստել, որ գոյություն ունեցող իրավունքների պետական գրանցման համակարգը չի արտացոլում ո՛չ օրինական և ո՛չ էլ անօրինական վաղեմությամբ տիրապետողների իրավունքները, իսկ դա նշանակում է, որ կամ նրանք ընդհանրապես որևէ իրավունք չունեն, կամ նրանց իրավունքները գործում են համակարգից դուրս:

Կարելի է հանգել այն եզրակացության, որ ավելի ճիշտ լուծում կլինի փաստացի տիրապետման գրանցման հնարավորության ընձեռումը, որը կարող է օգնության հասնել այն պարագայում, երբ գրանցված սեփականատերը և տիրապետող անձը չեն համընկնում: Քաղաքացիական իրավունքում փաստացի տիրապետումը համարվում է իրավաբանական փաստ: Տիրապետման փաստը հաստատելու համար կարելի է նախատեսել մոտեցում, որի համաձայն՝ փաստացի տիրապետողը հնարավորություն կունենա դիմելու նոտարին իր կողմից անշարժ գույքի անխոչընդոտ տիրապետման փաստը հաստատելու համար: Այդ պահից սկսած՝ կհոսի սեփականատիրոջ համար վինդիկացիոն հայց հարուցելու ժամկետը:



ՄԵԴԻԱՑԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական գործեր քննող դատարաններում անհատական աշխատանքային վեճերի թիվը տարեցտարի ավելանում է, և դրանց պատճառները կարող են լինել օբյեկտիվ և սուբյեկտիվ: Աշխատանքային վեճերը հիմնականում առաջանում են աշխատանքային տարածայնությունների պատճառով:

Աշխատանքային տարածայնություններն առաջանում են ինչպես աշխատանքային պայմանագրերի պայմանները փոփոխելու կամ դրանցում նոր պայմաններ ներառելու, այնպես էլ օրենսդրությունը կիրառելու կապակցությամբ¹: Այսինքն՝ աշխատանքային վեճերը կարող են առաջանալ աշխատողների կողմից աշխատանքային գործընթացում (պրոցեսում) ոչ բավարար գիտելիքներ դրսևորելու, առանձին աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների ոչ պատշաճ կատարման, գործատուի սխալ գործողությունների և աշխատանքային օրենսդրության սխալ մեկնաբանման ու կիրառման պարագայում:

Ըստ դատական դեպարտամենտի վիճակագրական տվյալների՝ «Վ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում աշխատանքային իրավահարաբերությունների, այն է՝ աշխատանքային պայմանագրերի, աշխատանքում վերականգնելու, գործադուլն անօրինական ճանաչելու, հարկադիր պարապուրդի հատուցման, չվճարված աշխատավարձի և/կամ այլ վճարների բռնագանձման վերաբերյալ գործերն ու աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված այլ վեճերը

2017 թվականից առ այսօր կազմել է թվով 2156 գործ, որոնցից 496-ը դեռևս գտնվում է դատական գործընթացում:

Ռուս իրավագետ Վ. Կամենկովը նշում է, որ դատական պրակտիկան նույնիսկ աշխատանքային հայցապահանջների բավարարմամբ չի կարող արդյունավետ ապահովել այդ ոլորտում կողմերի փոխհամաձայնությամբ ավարտված գործերը²:

Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական գործերով պալատը յուրաքանչյուր տարի քննում և բավարարում է քաղաքացիների աշխատանքային իրավունքների խախտման բազմաթիվ գործեր, ինչի պատճառով զգալի նյութական և բարոյական վնաս է հասցվում ոչ միայն աշխատողներին ու նրանց ընտանիքներին, այլ նաև գործատուներին ու պետությանը:

Գործատուի և աշխատողի տարածայնությունների լուծումը մեդիացիոն գործընթացի իրականացման պարագայում առավել արդյունավետ կարող է լինել, քան նման վեճերի դատական քննության ընթացքում³: Մեր կարծիքով՝ մեդիացիոն կարգով քննությամբ իրականացվող պայմաններում անհատական աշխատանքային վեճերը կարող են հանգուցալուծվել կողմերի փոխհամաձայնությամբ և այդպիսով՝ հանգեցնել նմանատիպ վեճերի կրճատմանն ու աշխատակիցներին, գործատուներին, պետությանը պատճառված վնասի չափի նվազեցմանը:

Սակայն միշտ չէ, որ մեդիացիան արդյունավետ կարող է լինել կողմերի համար, հատ-

¹ Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք, Երևան, 2014, էջ 566, Մ. Матненко, Третейское урегулирование разногласий в трудовых отношениях, дисс., Москва, 2009, էջ 88-90:

² Տե՛ս В. Каменков, Возможность медиации по индивидуальным трудовым спорам // КосультантПлюс Беларусь /ООО «ЮрСпектр», Нац. Центр правовой информ. Респ. Беларусь, Минск, 2016, N2, էջ 39:

³ Տե՛ս Л. Зайцева, Урегулирование трудовых споров с участием посредника //Вестник Тюменского государственного университета. Социально-экономические и правовые исследования, 2015, т. 1 N 2 (2), էջ 104-110:

կապես այն պարագայում, երբ գործատուի և աշխատողի միջև առաջացած վեճը փակուղի է մտել, և նորմալ մարդասիրական հարաբերությունները պահպանելու հույս չկա: Բացի այդ՝ աշխատողի համար դատավարությունն անվճար է, և եթե նա չի տեսնում աշխատանքային հարաբերությունները պահպանելու հեռանկարներ, ապա մեղիացիոն գործընթացը կարող է նրան թվալ խնդրի լուծման ձգձգման միջոց: Մինչդեռ մեղիացիան համարվում է աշխատանքային վեճերի լուծման քաղաքակիրթ լուծումներից մեկը և իր կիրառությամբ⁴ ու աշխարհի տարբեր երկրներում իր տարածվածությամբ⁵ դատարաններին այլընտրանք է, ինչը թույլ կտա դատարաններին բեռնաթափել աշխատանքային իրավահարաբերություններից բխող գործերի ծանրաբեռնվածությունից և վեճի հանգուցալուծումը գտնել խաղաղ ճանապարհով:

Պետք է ասել, որ Հայաստանում մեղիացիոն գործընթացով իրականացվել է նման պրակտիկա (աշխատանքային վեճերով), սակայն դա ԵՄ Պիլոտային ծրագրի շրջանակներում է տեղի ունեցել ու դեռևս շարունակական բնույթ չունի: ՀՀ նոր Քաղաքացիական դատավարության օրենսգրքում աշխատանքային վեճերի բաժինն «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը» վերտառությամբ 24-րդ գլուխն է, որը բաղկացած է հինգ հոդվածից: Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը: Վերջիններս առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայ-

ցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում⁶:

ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքում բացակայում են անհատական աշխատանքային վեճերին նվիրված մեղիացիոն նորմեր⁷: Աշխատանքային օրենսգիրքը սահմանում է անհատական աշխատանքային վեճերի լուծման բացառապես դատական կարգ, (բաժին 3, գլուխ 12) բայց, մյուս կողմից՝ չի արգելում կամ սահմանափակում դատարան դիմելուց առաջ փոխադարձ համաձայնությամբ առաջացած տարածայնությունները կարգավորելու իրավաբանական հնարավորությունը⁸:

Այդպիսի մեղիացիոն (հաշտարարական) գործընթացներ սահմանվում են ինչպես կոլեկտիվ, այնպես էլ անհատական աշխատանքային պայմանագրերով: Չնայած այդպիսի պահանջ օրենսդրորեն ամրագրված չէ, սակայն գրեթե բոլոր պայմանագրերում, մասնավորապես՝ անհատական աշխատանքային վեճերի պարագայում, կարելի է տեսնել հետևյալ կետը. «Աշխատանքային օրենսդրության կիրառման, պայմանագրային պարտականությունների և գործատուի այլ հանձնարարությունների կատարման, աշխատանքային պայմանագրի փոփոխման կամ դադարման (լուծման) առթիվ ծագող տարածայնությունները կարգավորվում են կողմերի անմիջական բանակցություններով՝ կողմին այդպիսի պահանջ ներկայացնելու պահից՝ 10-օրյա ժամկետում: Նշված ժամկետում կողմերի միջև համաձայնության բացակայության դեպքում վեճը կողմերից մեկի պահանջով ենթակա է քննարկման ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով»⁹:

Մեր կարծիքով՝ գործող աշխատանքային

⁴ Տե՛ս А. Зайцев, Н. Кузнецов, Т. Савельева, Негосударственные процедуры урегулирования правовых споров: учеб. пособие / Саратов, 2000; Լ. Шамликашвили, Медиация как метод внесудебного разрешения споров, Москва, 2006:

⁵ Տե՛ս Е. Носырева, Альтернативное разрешение гражданско-правовых споров в США, дисс. докт. юрид. наук, Воронеж, 2001, էջ 37:

⁶ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի հոդված 210-ը:

⁷ Խորհրդային ժամանակներում աշխատանքային օրենսգիրքը նախատեսում էր անհատական աշխատանքային վեճերի լուծման արտադատական կարգ, և աշխատանքային տարածայնությունները քննվում էին մինչև դատարան դիմելը, և այդ կարգը չպահպանելը հիմք էր դատարանի կողմից հայցադիմումը վարույթ չընդունելու և վերադարձնելու համար: Նպատակը դատարաններին աշխատանքային վեճերի որոշակի գործերից ազատելն էր, քանի որ արտադատական կարգով քննված վեճերի փուլում աշխատանքային վեճը հիմնականում հարթվում էր: Այս ընթացակարգը, թերևս, անհրաժեշտ է պահպանել նաև ներկայում՝ հաշվի առնելով դատական գործերի ծանրաբեռնվածության փաստը:

⁸ Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք, էջ 578:

⁹ Տե՛ս նույն տեղը:

օրենսագիրքը պետք է փոփոխել և նոր օրենք ընդունել՝ հստակեցնելով հողվածները և ավելացնելով մեդիացիայի մասին համապատասխան դրույթներ, իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած անհատական աշխատանքային վեճերին նվիրված գլուխը ներառել նոր օրենսգրքում:

Վ. Կուդրյավցևի կարծիքով՝ «աշխատանքային» հասկացությունը բովանդակային առումով «ավելի լայն» է, քան աշխատանքային վեճը, և ներառում է տարածայնություններ ոչ միայն աշխատանքի մասին օրենսդրության կիրառման, կոլեկտիվ պայմանագրի պայմանների, այլև այլ պայմանների վերաբերյալ, որոնք կապված են աշխատանքային իրավահարաբերությունների հետ կամ բխում են դրանցից¹⁰:

Ուստի աշխատանքային գործունեության կապակցությամբ ծագող խնդիրները, ներառյալ աշխատողների աշխատանքային իրավունքների ու կողմերի օրինական շահերի պաշտպանության կազմակերպումը, կարող են իրականացվել տարբեր եղանակներով¹¹:

ՀՀ աշխատանքային օրենսգրքի 38-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատողի իրավունքների պաշտպանությունը, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի ենթակայությանը համապատասխան, իրականացնում է դատարանը: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է աշխատանքային պայմանագրի փոփոխման, լուծման և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը: Ընդ որում՝ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում¹²:

Ակնհայտ է, որ աշխատանքային վեճի դեպքում դատական որոշումը ոչ միշտ կարող է լուծել բուն կոնֆլիկտը: Չէ՞ որ կոնֆլիկտի բովան-

դակությունը հաճախ կողմերի շահերն են, որոնք չեն համընկնում նրանց հակադիր իրավական դիրքորոշումների հետ: Ուստի աշխատանքային վեճի կարգավորման արդյունավետությունը կախված կլինի նաև այն հանգամանքից, թե արդյո՞ք հաշվի են առնվել կողմերի շահերը և պահանջները, այլ ոչ թե միայն նրանից, թե հիմնավորված է արդյո՞ք դիրքորոշումն իրավունքի նորմերով, թե՞ ոչ:

Մեր կարծիքով՝ մեդիացիան կարող է օգնել գործատուի և աշխատողի միջև ցանկացած կոնֆլիկտ լուծելիս՝ հիմնականում համաձայնության ուղիներ փնտրելով՝ երկխոսության միջոցով և հաշտությամբ հաստատելով ձեռք բերված համաձայնությունը:

Մեդիացիայի իրականացման գործընթացում կողմերը ազատ են և ղեկավարվում են իրենց միջև կնքված համաձայնագրերով: Նրանք կարող են փոխել պայմանագիրը, դրա մեջ ներառված պայմանները՝ հաշվի առնելով իրենց շահերը: Այսինքն՝ դատավարական փուլերի պարտադիր հաջորդականություն չի նախատեսվում, և դրանք չեն առնչվում, օրինակ, հայցի առարկայի բովանդակության ու հիմքի հետ:

Կցանկանայինք ուշադրություն դարձնել մեդիացիայի ևս մեկ առավելությանը: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ աշխատողներն օրենսդրական ակտերով նախատեսված դեպքերում կարող են դատարան դիմել երկու ամսվա ընթացքում այն օրվանից, երբ իմացել են կամ պետք է իմանային իրենց իրավունքների խախտման մասին: Իսկ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ աշխատանքային վեճերն առաջին ատյանի դատարանում քննվում և լուծվում են հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում: Մինչդեռ հայցային վաղեմության հետ կապված խնդիրների ժամկետային առումով աշխատանքային օրենսգիրքը հստակ ժամկետ չի նախատեսում, այլ սահմանում է, որ՝ «հայցային վաղեմության իրավունքը խախտված անձի հայցով իրավունքի

¹⁰ Տե՛ս Юридическая конфликтология, Отв. ред. В. Кудрявцев, Москва, 1995, էջ 316:

¹¹ Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք, էջ 578:

¹² Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդված, 2-րդ կետ:

պաշտպանության ժամանակահատվածն է»¹³: Այստեղ հնարավոր է մի իրավիճակ, երբ կողմերն անմիջական բանակցությունների համար սահմանեն պայմանագրային այնպիսի ժամկետ, որի ավարտին լրացած լինի դատական պաշտպանության երկամսյա ժամկետը, ինչը լուրջ բարդություններ կարող է առաջացնել խախտված իրավունքը պաշտպանելու գործընթացում¹⁴:

Աշխատանքային օրենսգրքում վեճերի համար, մեր կարծիքով, կարելի է սահմանել հայցային վաղեմության հստակ ժամկետներ, ինչը կողմին կամ կողմերին հնարավորություն կտար անգամ մեղիացիայի դիմելիս նշված ժամկետներով սահմանափակված չլինելու, սա էլ, իր հերթին, հնարավորություն կտա կարգավորելու կոնֆլիկտը նաև սահմանված ժամկետը լրանալուց հետո: Բացի դրանից՝ «Մեղիացիայի մասին» ՀՀ օրենքի ընդունման և կիրառման պարագայում առաջարկում ենք դրույթ սահմանել այն մասին, որ **հայցային վաղեմության ժամկետի ընթացքը կիրառվի այն պահանջների նկատմամբ, որոնք բխում են մեղիացիայի կիրառման մասին համաձայնագիր կնքելու օրվանից մինչև մեղիացիայի դադարման օրը**: Դա նշանակում է, որ մեղիացիայի ընթացակարգին դիմելը կողմերին չի զրկի ապագայում դատարան դիմելու իրավունքից:

Հաշվի առնելով աշխատանքային հարաբերությունների առանձնահատկությունները և պաշտպանվող իրավունքների կարևորությունը՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածը սահմանում է, որ հատուկ հայցային վարույթի կարգով քննվող աշխատանքային վեճերը պետք է քննվեն ոչ ուշ, քան դիմումն ընդունելու օրվանից երեք ամսվա ընթացքում: Իսկ նույն օրենսգրքի 185-րդ հոդվածի համաձայն՝ մեղիացիայի (հաշտարարության) սկզբնական ժամկետը նախատեսում է երեք ամիս (չի կարող գերազանցել երեք ամիսը): Սակայն կողմերի համա-

տեղ միջնորդությամբ կարող է երկարաձգվել միայն մեկ անգամ՝ մինչև վեց ամիս ժամկետով¹⁵:

Մեր կարծիքով՝ աշխատանքային վեճերով մեղիացիայի իրականացման առավելագույն ժամկետն անհրաժեշտ է կրճատել մինչև երկու ամիս՝ մոտեցնելով քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված գործերի քննման ժամկետին: Չէ՞ որ վեց ամիս կոնֆլիկտային իրավիճակում կողմերի գտնվելը կարող է նվազագույնի հասցնել դրա կարգավորման հեռանկարը: Ի վերջո՝ մեղիացիայի ժամկետը, որը սահմանված է քաղաքացիական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով, այն հանգամանքներից մեկն է, որի պատճառով յուրաքանչյուր աշխատողի կամ գործատուի մեջ կարող է մեղիացիայի դիմելու ցանկություն չառաջանալ: Այդ կապակցությամբ՝ աշխատանքային օրենսգրքում պետք է ամրագրված լինի տարբերակող նորմ, որը կսահմանի աշխատանքային վեճերով մեղիացիայի կրճատված ժամկետները:

Վերլուծելով այն պայմանները, որոնց առկայության դեպքում կողմերը կցանկանան դիմել մեղիացիայի՝ Լ. Չայցևան կարծիք է հայտնում, որ՝ «...կողմերը պետք է գտնվեն զգալի փոխկապվածության վիճակում: Սակայն անհատական աշխատանքային վեճերի վերաբերյալ այստեղ խնդիր գոյություն ունի: Մեղիացիան քիչ արդյունավետ է կողմերի փաստացի (նյութական, կազմակերպչական) խիստ անհավասարության դեպքում: Դրանում կարող է շահագրգռված չլինել այն աշխատողը, ով գործատուի հետ իր կոնֆլիկտում արդեն իսկ հասել է դատարան ու այլևս նորմալ միջանձնային հարաբերությունների պահպանման հույս չի փայփայում: Բացի դրանից՝ եթե աշխատողի դիմումով դատական քննությունն անվճար է, և, եթե նա չի տեսնում աշխատանքային հարաբերությունների պահպանման հեռանկարներ, մեղիացիան կարող է խնդրի լուծման ձգձգման եղանակ թվալ»¹⁶:

● ՕՐԻՆԱԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, № 108, 2018

¹³ Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգրքի 30-րդ հոդվածը:

¹⁴ Տե՛ս Գ. Պետրոսյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքային իրավունք, էջ 579:

¹⁵ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 19-րդ և 39-րդ գլուխներում տեղ գտած համապատասխան հոդվածները կարելի է ընդգրկել մեկ ընդհանուր օրենքում՝ «Մեղիացիայի մասին» ՀՀ օրենք ստեղծելով:

¹⁶ Л. Зайцева, Медиативные технологии в трудовых и непосредственно связанных с ними отношениях // Трудовое право в России и за рубежом, 2012, N 1, стр. 36-39.

Ենթադրում ենք՝ տվյալ դատողության հետ կարելի էր համաձայնել, եթե աշխատանքային օրենսսագրի ընդհանուր սահմաններ դրույթ, որի համաձայն՝ **անհատական աշխատանքային վեճերը քննելիս աշխատողներն ազատվել են դատական ծախսերի վճարումից**¹⁷: Միևնույն ժամանակ՝ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 184-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատարանն իր նախաձեռնությամբ մեկ անգամ կարող է նշանակել մինչև 4 ժամ անվճար հաշտարարություն: Նույն օրենսգրքի 187-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ հաշտության համաձայնություն կնքվելու հիմքով գործի վարույթը կարճելու դեպքում հաշտարարության հետ կապված ծախսերը կողմերը կրում են հավասարաչափ, եթե այլ բան նախատեսված չէ նրանց համաձայնությամբ: Նույն օրենսգրքի 187-րդ հոդվածի 2-րդ մասը նախատեսում է հետևյալն այն դեպքում, երբ հաշտարարությունը նշանակված է դատարանի կողմից, և կողմերը դատարանի կողմից հաշտարարության համար սահմանված ժամկետում կնքում են հաշտության համաձայնություն, վճարված պետական տուրքը վերադարձվում է «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով: Իսկ դա նշանակում է, որ աշխատողը, հանդիսանալով աշխատանքային իրավահարաբերության ավելի չպաշտպանված կողմ, ստիպված կլինի վճարել նույնքան, որքան գործատուն: Այդ պատճառով է իրավունքի պաշտպանության դատական ձևն աշխատողի համար ավելի նախընտրելի: Իսկ մեղիատորի (հաշտարարի) վարձատրությունը վճարելու չափի պարտականությունն ամբողջապես գործատուի վրա դնելը կարող է մեղիացիայի ընթացակարգը նրա համար անընդունելի դարձնել: Մեր կարծիքով՝ առանց այս խնդիրը լուծելու՝ հազիվ թե արժե ակնկալել մեղիատորի մասնակցությամբ կարգավորված աշխատանքային վեճերի քանակի զգալի աճ: Դրա լուծման հնարավոր տարբերակներից մեկը ճիշտ կառուցակարգի օգտագործումն է, որը նման է փատաբանների պալատում գործող իրավա-

բանական օգնության ցուցաբերմանը՝ փատաբանների կողմից միջոցների հաշվին կամ որևէ հիմնադրամի օգնությամբ: Ուստի, մեր կարծիքով՝ **առաջին ատյանի դատարաններում աշխատանքային իրավահարաբերությունների հետ կապված գործեր վարելիս հայցվորներին (աշխատողներին) իրավաբանական օգնության ցուցաբերումը կարող է լինել մեղիատորների միջոցների հաշվին, այսինքն՝ անվճար**: Կարծում ենք՝ մեղիատորները և մեղիացիայի իրականացումն ապահովող կազմակերպությունները նույնպես կարող են որոշակի սոցիալական ծանրաբեռնվածություն կրել անհատույց հիմունքներով մեղիացիա իրականացնելիս:

Վերը նշվածը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ կատարել: Այսպիսով՝

– **մեղիացիան ոչ միայն աշխատանքային վեճի՝ իր նեղ, աշխատանքային իրավական ըմբռնմամբ, այլև գործատուի և աշխատողի միջև ցանկացած կոնֆլիկտի կարգավորման արդյունավետ այլընտրանքային եղանակ է:**

– **Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի «Անհատական աշխատանքային հարաբերություններ» վերտառությամբ 12-րդ գլուխն անհրաժեշտ է լրացնել տարբերակված նորմերով, որոնք կսահմանեն աշխատանքային վեճերով մեղիացիայի իրականացման առանձնահատկությունները (մեղիացիայի իրականացման ժամկետների կրճատում, աշխատողի համար անհատույց հիմունքներով մեղիացիայի իրականացման հնարավորության ստեղծում):**

– **Հայաստանի Հանրապետությունում անհրաժեշտ է ընդունել «Մեղիացիայի մասին» մեկ ընդհանուր օրենք, որն իրավական հիմք կհանդիսանա միջնորդի հետ կապված վեճերի լուծման ու միջնորդության ձևավորման առումով, և որը կսահմանի ու կմեկնաբանի նաև մեղիատորների պատրաստման և որակավորման հստակ պահանջներ:**

¹⁷ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 266-րդ հոդվածը սահմանում է, որ աշխատանքային վեճերով դատական ծախսերը կատարվում են օրենքով սահմանված կարգով:

ԱՐՐԱՀԱՄ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՀԻՏԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏԵՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Ժամանակակից սահմանադրություն ունեցող պետությունների համար առանցքային նշանակություն ունեն պետության ինքնիշխանության և վերպետական միջազգային կազմակերպություններին պետության անդամակցության հարաբերակցության հիմնախնդիրներն ու դրանց լուծումները [1]: Ընդ որում՝ այս հիմնախնդիրների շրջանակում կարելի է առաջադրել հետևյալ հիմնական հարցադրումը. Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցությամբ սահմանափակվում է արդյոք պետության ինքնիշխանությունը, թե՞ ոչ:

Նախ՝ անդրադառնանք պետության ինքնիշխանությանը, որը սահմանադրական իրավունքի տեսանկյունից դիտարկվում է ոչ միայն պետության հիմնական բնութագրիչ, այլև սահմանադրական կարգի հիմունքների համակարգում՝ առաջինը մյուս հավասար բնութագրիչների նկատմամբ: Դա հավաստվում է գրեթե բոլոր երկրների սահմանադրական կարգավորումներով, այդ թվում նաև՝ ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված նորմի բովանդակությամբ, այն է՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետություն է: Միաժամանակ, պետության ինքնիշխանության սկզբունքի մասին ասվում է նույն Սահմանադրության նախաբանում և Հայաստանի անկախության մասին հռչակագրում:

Չնայած այն հանգամանքին, որ ժամանակակից հետազոտողների զգալի մասը պետության ինքնիշխանության իրավական ընկալումը շատ դեպքերում փոխառնչում են պետությունների տարածքային բաղադրիչի հետ [2, 96], այնուամենայնիվ, սահմանադրական կար-

գի նշված սկզբունքի ամրագրմանը զուգընթաց՝ «պետության ինքնիշխանություն» եզրույթի հետագա ամրապնդումը, ինչպես նաև դրա իրավական ու գործառույթային նշանակությունը որոշակի փոփոխությունների են ենթարկվում միջազգային ինտեգրացիայի գործընթացների համատեքստում:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը՝ իր 2014 թվականի նոյեմբերի 14-ի ՍԴՈ-1175 որոշմամբ անդրադառնալով «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցին, սահմանադրաիրավական տեսանկյունից պետության ինքնիշխանությունը դիտարկեց երեք հիմնական բնութագրիչների՝ ազգային, ժողովրդական և պետական ինքնիշխանությունների միանության համատեքստում [3]:

Միաժամանակ՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության էության իմաստավորման և իրավական բովանդակության սահմանման առումով առավել կարևորություն է ստանում հատկապես պետության արտաքին քաղաքականության արդյունավետության բարձրացման համար համապատասխան երաշխիքների ձևավորման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության հիմնախնդիրների գիտական հետազոտման նպատակով:

Այս հիմնախնդրի առանձնահատուկ կարևորությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետությունում սահմանադրական նոր կարգավորում-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 108, 2018

ների շրջանակում առաջին անգամ շրջանավոր միջազգային կազմակերպությունների վերապետականությունը որքանով է փոխկապակցվում պետության ինքնիշխանության հետ:

Այսպես՝ միջազգային իրավունքի տեսությունից հայտնի է, որ, եթե միջկառավարական միջազգային կազմակերպություններն ստեղծվում են պետությունների միջև որոշակի ոլորտներում կոոպերացիայի կամ փոխգործակցության որոշակի հարթակ ապահովելու համար, ինչն անհնարին է անել ազգային մակարդակում, ապա վերապետական միջազգային կազմակերպություններն առանձնահատուկ են իրենց գործառույթների ու լիազորությունների առումով [4, 71]:

Մասնավորապես՝ վերապետական միջազգային կազմակերպություններին բնորոշ են այնպիսի բացառիկ լիազորություններ, ինչպիսիք են ներքին անկախ մարմիններ ունենալը, պարտադիր կատարման այնպիսի ակտեր ընդունելու իրավասությունը, որոնք անմիջականորեն ենթակա են կիրառման պետությունների ու դրանց քաղաքացիների կողմից, ինչպես նաև հարկադրանքի մեխանիզմներ ընդունելը, որոնք ուղղակիորեն պարտավորեցնում են պետություններին ենթարկվել կազմակերպության որոշումներին՝ անկախ այն հանգամանքից, որ այդ որոշումների ընդունման պահին հաշվի առնվել է տվյալ պետության կամարտահայտությունը [5, 100]:

Անշուշտ, մասնագիտական գրականության մեջ շրջանառվում են բովանդակային առումով այլ տեսակետներ: Այսպես՝ պրոֆեսոր Լ.Մալոունը համարում է, թե վերապետական միջազգային կազմակերպություններն ստեղծվում են այն ժամանակ, երբ անդամ պետությունների ու տվյալ կազմակերպության միջև տեղի է ունենում լիազորությունների բաժանում, ինչի հետևանքով պետություններն իրենց ինքնիշխանության մի մասն ինքնաբար փոխանցում են այդ միջազգային կազմակերպությանը՝ վերջինիս իրավաստեղծ գործունեությանն ակտիվորեն մասնակցելու նպատակով [6, 71]:

Պրոֆեսոր Ա.Ա. Մոխսեևի կարծիքով՝ միջազգային կազմակերպությունների վերապետականությանը բնորոշ են որոշակի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են՝ 1) անդամ պետությունների շահերի ընդհանրության ճանաչու-

մը, 2) այդ պետությունների մեծամասնությամբ որոշումների ընդունումը, 3) ծառայողների գործունեության անկախությունը, 4) ֆինանսական անկախությունը, 5) որոշումների պարտադիր կատարման պայմանն անդամ պետությունների կողմից և անդամ պետությունների տարածքում, 6) վերապետական կազմակերպության կազմից միակողմանի դուրս գալու արգելքը, 7) այդ կազմակերպության լիազորությունների գերակայությունն անդամ պետությունների լիազորությունների նկատմամբ, 8) անդամ պետությունների ինքնիշխան լիազորությունների մի մասի փոխանցումը վերապետական կազմակերպությանը [7, 362-363]:

Անշուշտ, այս ձևակերպումներում խնդրահարույց շատ հարցեր կան, որպիսիք են ֆինանսական ինքնուրույնության երաշխավորումը, միջազգային անկախ ծառայողների կողմից կազմակերպության կառավարումը, միջազգային կազմակերպություններից պետությունների դուրս գալու ազատության սահմանափակումը և այլն:

Այնուամենայնիվ, անդրադառնալով Հայաստանի Հանրապետությունում 2015 թվականի սահմանադրական նոր կարգավորումներով «վերապետական միջազգային կազմակերպություն» եզրույթը շրջանառության մեջ դնելու սահմանադրական պահանջին, հայ իրավագետներն իրենց գիտական հետազոտություններում նույնպես ներկայացրել են որոշակի մտեցումներ:

Այսպես՝ իրավագետների մի խումբ համարում է, թե՛ ա) յուրաքանչյուր միջազգային կազմակերպության միանալն այս կամ այն չափով հանգեցնում է պետության ինքնիշխանության սահմանափակմանը, ընդ որում՝ տվյալ դեպքում վճռորոշն ինչպես ինքնիշխանության բովանդակային կորստի չափն է, այնպես էլ դրա ամրագրման եղանակները, բ) առաջարկվող կարգավորման համատեքստում «ինքնիշխանության սահմանափակում» եզրույթը կարող է ընկալվել բացառապես այն կտրվածքով, որի դեպքում հարկ կլինի վերանայելու իշխանությունը կրող սուբյեկտների լիազորությունների շրջանակը՝ սահմանադրական գործառույթների իրացման տեսանկյունից, և գ) իշխանությունները նախապես եզրակացություն են տալիս հանրաքվեի դրված հարցի էության, դրա

իրավաչափության ու նպատակահարմարության կապակցությամբ [8, 204]:

Արդարացի է մեկ այլ հայ իրավագետի այն պնդումը, ըստ որի՝ վերաբերականությունը պետք է ընկալել որպես միջազգային կազմակերպության իրավական այնպիսի հատկություն, որն ինքնիշխան անդամ-պետություններին հնարավորություն է ընձեռում ազգային օրենսդրությամբ իրենց իրավունքների մի մասը փոխանցելու միջազգային կազմակերպությանը՝ վերջինիս հիմնադիր պայմանագրով նախատեսված նպատակների ու խնդիրների իրագործմանը [9, 108-109]:

Այնուամենայնիվ, ներկայացված տեսակետների համակարգային վերլուծությունից անհրաժեշտ է նկատել, որ միջազգային կազմակերպությունների վերաբերականության և պետության ինքնիշխանության հարաբերակցության հիմնախնդրի վերաբերյալ առկա սահմանադրաիրավական հետազոտություններն արդիական են յուրաքանչյուր երկրի սահմանադրական կարգավորումների տեսանկյունից: Ակնհայտ է, որ՝ ի տարբերություն ՀՀ Սահմանադրության, որի ամբողջ տեքստում այդպես էլ որևէ խոսք չկա ինքնիշխանության օտարման կամ սահմանափակման հնարավորությունների մասին:

Թերևս՝ անհրաժեշտ է նկատել, որ Հայաստանի Հանրապետությունը չի կարող մասնակիորեն իր ինքնիշխանությունը փոխանցել միջազգային որևէ կազմակերպությանը, այդ թվում նաև՝ Եվրասիական տնտեսական միությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է հենց միայն պետությունը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական ինտեգրման նպատակով պետության լիազորությունների ծավալը ժամանակի հետ ավելի է մեծանում, ուստի Հայաստանի Հանրապետությունը միասնական մաքսային կարգավորումների և տնտեսական ընդհանուր տարածքի ձևավորման նպատակով լիազորությունների որևէ մասը կարող է փոխանցել Եվրասիական տնտեսական միությանը, ինչը չի նշանակում պետության ինքնիշխանության իրավունքի զիջում:

Այդուհանդերձ՝ հետազոտության առարկայի համեմատական իրավական վերլուծության արդյունքներով պայմանավորված՝ հարկ

է նշել, որ վերաբերական միջազգային կազմակերպություններին պետության ինքնիշխանության տարրերի փոխանցման հնարավորություն ամրագրող նորմեր առկա են հատկապես առանձին երկրների սահմանադրություններում [10]:

Այնուամենայնիվ, տարբեր երկրների սահմանադրական նորմերի վերլուծությունը և մասնագիտական գրականության մեջ առկա տեսակետների համընդհանրությունը ցույց են տալիս վերաբերական միջազգային կազմակերպության հասկացության ու իրավաբանական բովանդակության վերաբերյալ միասնական կարծիքի բացակայության առկայությունը: Սակայն, համադրելով ներկայացված տեսակետների բովանդակային նշանակությունը, անհրաժեշտ է նկատել, որ վերաբերական միջազգային կազմակերպության հիմնարար հատկանիշների սահմանման առումով առկա է որոշակի միասնություն:

Անհրաժեշտ է նաև ընդգծել, որ 2015 թվականի սահմանադրական կարգավորումներին համապատասխան վերաբերական միջազգային կազմակերպություններին Հայաստանի Հանրապետության անդամակցությունը նույնպես դիտարկվեց հանրաքվեի միջոցով լուծվող հարց (հոդվ. 205, մաս 1) [11]:

Այս կապակցությամբ՝ ողջամիտ է վերաբերական միջազգային կազմակերպության իրավական բնութագրման համար առանձնացնել նաև այնպիսի էական հատկանիշ, որը նույնպես հիմնարար նշանակություն ունի հենց այդ եզրույթի սահմանման համատեքստում: Խոսքն այն մասին է, որ վերաբերական միջազգային կազմակերպությունների ստեղծման (մասնակցության) կամ այդ կազմակերպություններին անդամակցության հարցերում պետության ինքնիշխան իրավունքը կարող է իրականացվել միայն ժողովրդի անմիջական կամարտահայտման (հանրաքվեի) արդյունքով:

Անշուշտ, Սահմանադրությունը չի նախատեսում միջազգային իրավունքի սուբյեկտներին Հայաստանի Հանրապետության լիազորությունների փոխանցման այլ հնարավորություններ, քան «անդամակցությունը վերաբերական միջազգային կազմակերպություններին», ինչը կարող է իրականացվել Ազգային ժողովի կողմից այդ անդամակցությունը նախատեսող

միջազգային պայմանագրի պարտադիր վավերացման, ինչպես նաև անդամակցության հարցը հանրաքվեով լուծելու միջոցով:

Այսպիսով, ընդհանրացնելով Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության և Եվրասիական տնտեսական միության վերաբերականության հարաբերակցության հիմնախնդիրների հետազոտության արդյունքները, կարելի է ներկայացնել հետևյալ եզրահանգումները.

1) Այդ հարաբերակցության շրջանակում Հայաստանի Հանրապետության որևէ լիազորությունների փոխանցում չի կարող դիտարկվել որպես պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում, ինչը պայմանավորված է այն հիմնավորմամբ, որ նման լիազորությունների փոխանցումը պայմանավորված է միջազգային ինտեգրման նոր բնույթով գործընթացներ իրականացնող Եվրասիական տնտեսական միության այնպիսի խնդիրների իրականացմամբ, որոնք ուղղված են ինչպես տվյալ միջազգային կազմակերպության պայմանագրային, այնպես էլ մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը:

2) Հայաստանի Հանրապետությունը չի կարող մասնակիորեն իր ինքնիշխանությունը փոխանցել Եվրասիական տնտեսական միությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է հենց միայն պետությունը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսական ինտեգրման նպատակով պետության լիազորությունների ծավալը ժամանակի հետ ավելի է մեծանում, ուստի Հայաստանի Հանրապետությունը միասնական մաքսային կարգավորում-

ների և տնտեսական ընդհանուր տարածքի ձևավորման նպատակով լիազորությունների որևէ մասը փոխանցում է Եվրասիական տնտեսական միությանը, ինչը չի նշանակում պետության ինքնիշխանության իրավունքի զիջում:

3) Հայաստանի Հանրապետության միջազգային ինտեգրացիայի ժամանակակից գործընթացների և նոր սահմանադրական կարգավորումների համատեքստում Եվրասիական տնտեսական միությունը՝ որպես վերաբերական միջազգային կազմակերպություն, բնութագրվում է հետևյալ հատկանիշների ամբողջությամբ և նշանակությամբ՝ ա) նոր միջազգային իրավակարգ է՝ ինքնուրույն իրավական համակարգով և առանձնահատուկ իրավասության շրջանակով, բ) այդ կազմակերպությանը մասնակից պետությունները փոխանցում են որոշակի ոլորտի իրենց լիազորությունները տվյալ միջազգային կազմակերպության կանոնադրային և մասնակից պետությունների նպատակների ու խնդիրների իրագործմանը, գ) պետությունների կամարտահայտությունից անկախ՝ կազմակերպությունը կարող է ձայների մեծամասնությամբ ընդունել որոշումներ, որոնք պարտադիր են կատարման նույն մասնակից պետությունների կողմից, դ) այդ որոշումները պետք է հանդիսանան պարտադիր կատարման ենթակա բոլոր այն անձանց կողմից, ովքեր գտնվում են այս կամ այն անդամ պետության իրավազորության ներքո, ե) այդ կազմակերպություններն ստեղծվում են միայն ժողովրդի անմիջական կամարտահայտման (հանրաքվեի) արդյունքով:



ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ» ԲՆՈՒՅԹԻ ՄՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Ազգային անվտանգության տեսության հիմնարար հասկացություններն են սպառնալիքը և վտանգները, որոնք կարող են ելնել լոկալ հասարակության և արտաքին, և ներքին միջավայրից, այսինքն՝ սպառնալիքներն իրենց բնույթով կարող են լինել ներհամակարգային և արտահամակարգային: Ներհամակարգային, ներհասարակական, ինքնաստեղծ սպառնալիքներն օբյեկտիվորեն գոյություն կունենային, եթե նույնիսկ երկրագնդի վրա լինեք մեկ հասարակություն և պետություն: Հասարակությանը և պետությանը սպառնացող վտանգները կարող են լինել ինքնաստեղծ և արտաքին: Միաժամանակ, հասարակական համակարգի երեք տարրից՝ անհատ, հասարակություն, պետություն, ամեն մեկը մյուսների համար կարող է վերածվել սպառնալիքի աղբյուրի: Հետևաբար՝ ազգային անվտանգության սուբյեկտ և օբյեկտ համարվող պետությանը սպառնացող վտանգները կարող են լինել ներպետական-կառուցակարգային, արտապետական: Այս բաժանման չափանիշը սպառնալիքի աղբյուրի տեղակայումն է՝ պետության համակարգում և դրանից դուրս: Սպառնալիքները կարող են ուղղված լինել պետությանը, բայց միաժամանակ նաև պետությունից այլ տարրերին՝ անհատներին, հասարակությանը, ազգին, սոցիալական խմբերին, հարևան պետությանը, ընդհուպ մինչև միջազգային հանրությանը:

Պետության (և ոչ միայն նրա) դերակատարությունն ազգային անվտանգության համակարգում գնահատվում է որպես երկմիասնություն՝ օբյեկտ-սուբյեկտ: Որպես ազգային անվտանգություն սուբյեկտ՝ պետությունն ազգային անվտանգության համակարգում դրա ապահովման գլխավոր դերակատարն է. պետությունն իր այլ գործառույթների հետ լուծում է նաև ազգային անվտանգություն ապահովման խնդիրը: Այդ գործառույթի իրականացումը երաշխիք է ազգային անվտանգության երեք օբ-

յեկտին սպառնացող վտանգների կանխման, վերացման, չեզոքացման համար: Սակայն իրականության մեջ հնարավոր է, որ սուբյեկտը, կրելով ազգային անվտանգության ապահովման պարտավորությունը, չկատարի կամ ոչ պատշաճ կատարի իրեն վերագրված գործառույթը: Որպես արդյունք առաջացող ազգային անվտանգության սպառնալիքները կարելի է անվանել գործառնական, որոնց աղբյուրը պետությունն է: Հետևաբար՝ պետությունից ելնող սպառնալիքներն իրենց բնույթով կարող են լինել ոչ միայն կազմակերպական-կառուցվածքային, այլև՝ գործառույթային:

Ասվածը հիմք է տալիս առաջ քաշելու պետության՝ որպես ազգային անվտանգության սուբյեկտ-օբյեկտ երկմիասնական կացությունից բխող ազգային անվտանգության սպառնալիքների ու վտանգների հետևյալ տեսակները՝ պետությանը սպառնացող վտանգներ, պետությունից ելնող կամ դրա հետ կապված սպառնալիքներ, որոնք պայմանավորված են պետության կազմակերպակառուցվածքային, էական (բովանդակային) և գործառույթային թերություններով: Համակարգակառուցվածքային այս մեթոդը չափանիշ է ազգային անվտանգության ամեն մի տեսաբանի հայեցակարգի՝ պետությանը վերաբերող մասն ամբողջության, համալիրության, հետևողական գիտամեթոդաբանական մոտեցումների տեսանկյունից գնահատելու համար:

Տեսաբաններից մեկը՝ Ն. Լեոնովը, տարածքը, բնակչությունը, նյութատեխնիկական հարստությունը, քաղաքակրթությունը համարում է ազգային անվտանգության հիմնական սյուները, որոնց քայքայումն սպառնում է պետության ու դրանում ապրող ժողովրդի կործանմամբ¹: Ն. Լեոնովի մոտեցման մեջ մեզ հետաքրքրում է այն, որ այս տեսաբանն ազգային անվտանգության չորս սյունի քայքայման պատճառներից է համարում, առաջին հերթին, քա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

ղաքական-պետական գործոնը: «Մեր քաղաքական հարթության վրա դեռևս չկան այն դերակատարները, ովքեր կարող են, պատկերավոր ասած, վերցնել բահը, պատրաստել շաղախ և սկսել նորից ցեմենտել ազգային անվտանգության այն սյուները, որոնք մենք էականորեն քայքայել ենք»: Այս գնահատականից բխում է, որ ազգային անվտանգություն ապահովման խնդրում պետության անգործությունը կամ քայքայիչ գործունեությունը կարող է վերածվել ազգային անվտանգության սպառնալիքի: Այսինքն՝ պետությունը, լինելով ազգային անվտանգություն ապահովման հիմնական սուբյեկտ, որը և՛ այն դեպքում, երբ պատշաճ չի իրականացնում իր գործառույթը, և՛ այն դեպքում, երբ ունենում է քայքայիչ ազդեցություն ազգային անվտանգություն «սյուների» վրա, վերածվում է ազգային անվտանգության սպառնալիքի, որը կարող է վտանգել, քայքայել ազգային անվտանգության հիմքերը, դրանով կործանման տանել ժողովրդին: Հետևաբար՝ ազգային անվտանգության համակարգն առաջին հերթին ենթադրում է դրա երաշխավոր, առողջ պետություն, այլ ոչ թե՛ իր գոյության հիմքերը կործանող սուբյեկտ:

Ազգային անվտանգություն իրավական կողմերի հետազոտողներից մեկը՝ Ս.Ա. Ֆոմինը ազգային անվտանգության միջազգային, ռազմական (պաշտպանական), տնտեսական, սոցիալական (հասարակական), տեղեկատվական, էկոլոգիական և այլ տեսակների կողքին առանձնացնում է ներքաղաքական (սահմանադրական) անվտանգությունը²: Գրականության մեջ սահմանադրական անվտանգությունը բնորոշվում է որպես «սահմանադրական կարգի հիմքերի պաշտպանության ապահովում՝ ներառյալ իրավունքի համակարգի ելակետային հիմունքները, սահմանադրական-իրավական հարաբերությունների սուբյեկտների կարգավիճակի և գործունեության կարևոր

սկզբունքները կարգավորող սահմանադրական նորմերը, որոնք թույլ են տալիս նախորոշել և զարգացնել սահմանադրական օրենսդրության ինստիտուտների ուղղությունները»³: Սահմանադրական կարգերի սպառնալիքները Ս.Ա. Ֆոմինը դասակարգում է երկու խմբի՝ ա) ծայրահեղական ուժերի քաղաքական գործունեությունը, որոնք ձգտում են իշխանության կամ դրա պահպանելուն՝ առանց օրինական ձևերի ու մեթոդների (զինված ապստամբություն, ահաբեկչություն, արտաքուստ ոչ բռնի հեղաշրջում), բ) սահմանադրական իրավախախտումներ, օրինակ՝ անջատողականություն, հակասահմանադրական ակտերի ընդունում⁴: Ս.Ա. Ֆոմինի գրքում պետության հետ կապված անվտանգության հարցերի շրջանակը և՛ տեսականորեն, և՛ գործնականորեն նեղացված է, ունի «սահմանադրական անվտանգություն» անվանումը և ներառում է միայն պետությանն սպառնացող վտանգները: Այդ անվտանգության սպառնալիքների շարքում չկան պետությունից ելնողները:

Վ.Ա. Կոլոկոյցևի կարծիքով՝ ազգային անվտանգությունը սինթեզում է պետական և հասարակական անվտանգությունները: Պետական անվտանգությունը միջոց է, իսկ հասարակականը՝ նպատակ՝ սոցիումի կենսականորեն կարևոր շահերի ու դրանց չհակասող առանձին անհատների շահերի որոշման ու պաշտպանության համար: Այս մոտեցումն իր անորոշությամբ, այնուամենայնիվ, ունի առավելություն, քանի որ, օբյեկտներից կախված՝ անվտանգության տեսակներ է ճանաչում անհատի, հասարակության և պետության անվտանգությունները: Հետևաբար՝ նա առաջարկում է, սպառնալիքների ուղղվածությունից կախված, առանձնացնել արտաքին ու ներքին անվտանգությունը, իսկ ըստ հասարակության կենսագործունեության ոլորտների՝ տարբերակել ան-

¹ Стів Николай Леонов Основы национальной безопасности /http://www.radonezh.orthodoxy.ru/oboz/n19-20/ob.htm - электронная версия газеты “Радонеж”.

² Стів Фомин С.А. Обеспечение национальной безопасности: курс лекций. М., Флита: МПСИ, 2007. էջ 156: Ս.Ա. Ֆոմինն անվտանգության այլ տեսակներից նշում է էներգետիկը, հրդեհայինը, ճանապարհային երթևեկությունը (տես նույն տեղը, էջ 211):

³ Стів Шуберт Т.Э. Конституционная безопасность России //Журнал российского права. 1998, №4-5, с. 57:

⁴ ՌԴ-ում սահմանադրական անվտանգությունն ապահովող մարմինների համակարգում կորդինատորի դերը կատարում է Անվտանգության խորհուրդը, որն ունի միջգերատեսչական հատուկ հանձնաժողով (այդ մասին մանրամասն տես Фомин С.А. Обеспечение национальной безопасности: курс лекций. М., Флита: МПСИ, 2007, էջ 150-163):

վտանգության քաղաքական, տնտեսական, սոցիալական տեսակները:

Այսպիսով՝ Վ.Ա. Կոլոկոլցևն ազգային անվտանգության տեսակ է համարում պետական անվտանգությունը՝ ըստ օբյեկտի, իսկ հասարակության կենսագործունեության ոլորտներից ելնելով՝ առանձնացնում է քաղաքական անվտանգությունը: Ներքին անվտանգության այդ տեսակում նա քննարկում է մշակութային-պատմական առումները, որոնք ձևավորում են պետաիրավական կարգավորման ոլորտում որոշումների մշակման ու ընդունման հատուկ ֆոնը՝ արդի ռուսական հասարակության կյանքի քաղաքական ոլորտը համարելով ճգնաժամային, ինչը դրսևորվում է, այսպես կոչված, նույնականացման, լեգիտիմության, մասնակցության, ներթափանցման ու բաշխման ճգնաժամերով⁵: Այդ վերլուծությունները բավականին հետաքրքիր են, քանի որ մասամբ վերաբերում են Հայաստանին, սակայն դրանց վրա մենք կանգ չենք առնի, քանի որ հիմնական մասը դուրս է սույն հոդվածի թեմայի շրջանակից: Իսնդիրն այն է, որ, ըստ օբյեկտի առանձնացնելով պետական կամ պետության անվտանգությունը, Վ.Ա. Կոլոկոլցևն անվտանգության այդ ոլորտը ներառել է ըստ հասարակության կենսագործունեության ոլորտներից մեկի՝ քաղաքական անվտանգության տեսակում, հետևաբար՝ նրա՝ այդ ոլորտում առանձնացրած ազգային անվտանգության ներքին քաղաքական սպառնալիքների մեծ մասը վերաբերում են քաղաքական-կուսակցական համակարգին, քաղաքական-մշակութային գործոններին, որոնք ավելի շատ հասարակությանն ու անհատին, քան պետությանը վերաբերող ներքին անվտանգության սպառնալիքներ են: Օրինակ՝ որպես արդի ՌԴ ներքաղաքական ոլորտի հիմնական սպառնալիքներ, նա առանձնացնում է՝ ա) իշխանության և հասարակության բևեռացումը, քաղաքացիների՝ «մեղավորության կանխավարկածի» լայն ներդրմամբ, բ) պետական կառույցների գործունեության առանձին ոլորտների անլեգալությունը, գ) պետա-

կան իշխանության լեգիտիմացման ընթացակարգի խեղաթյուրումը, դ) իշխանությունների իրական բաժանման բացակայությունը, ե) քաղաքական համակարգի մենիշխանությունը, զ) ծայրահեղական գործունեությունը, է) դաշնային կենտրոնի և տարածքների անհավասարակշռությունը⁶: Այս սպառնալիքների մի մասը չի վերաբերում պետությանը կամ հասարակական անվտանգության ոլորտ է, իսկ մնացածների հարցում Վ.Ա. Կոլոկոլցևն ուղղակի չի նշում, որ դրանց աղբյուրը պետությունն է:

Ռ.Ֆ. Իդրիսովն իր դոկտորական ատենախոսության մեջ հիմնավորում է, որ «Պետության առաջնահերթությունն անվտանգության ապահովման» ոլորտում արդիականացնում է պետության անվտանգության և պետական անվտանգության հարաբերակցության խնդիրը, որը շատ հետազոտողներ հաճախ և անիրավաչափ նույնացնում են: Այս կապակցությամբ պետք է մշտապես նկատի ունենալ, որ իր օբյեկտիվ բնույթի ուժով պետությունը սեփական գործառույթավորման ընթացքում կարող է ծնել անվտանգության սպառնալիքներ: Այս պլանով պետական անվտանգությունն իր արդի հասկացմամբ պետք է մեկնաբանվի որպես պետության կացություն, որի դեպքում դրանում ծագող ազգային անվտանգության սպառնալիքները չեն գերազանցում որոշակի շեմային նշանակությունը: Պետական անվտանգության ապահովումը պահանջում է հատուկ պետական ինստիտուտների ու կառուցակարգերի ձևավորում և արդյունավետ գործառույթավորում, ինչպես նաև պետական կառույցների գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն⁷: Այս դատողությունների մեջ արժեքավոր է այն, որ առկա է պետության անվտանգություն և պետական անվտանգություն հասկացությունների տարբերակում, ինչպես նաև «պետության ծնած անվտանգության սպառնալիքների» առանձնացումը՝ սպառնալիքների ողջ ֆոնի վրա:

Ռ.Ֆ.Իդրիսովն առաջ է քաշում պետության ներսում ծագող ու գործնական արտահայտու-

⁵ Տե՛ս Колокольцев В.А. Обеспечение государственных интересов России в контексте национальной безопасности. Дисс. док. юр. наук. Санкт-Петербург, 2005, էջ 182-203:
⁶ Տե՛ս Колокольцев В.А. Обеспечение государственных интересов России в контексте национальной безопасности. Дисс. док. юр. наук. Санкт-Петербург, 2005, էջ 203:
⁷ Տե՛ս Идрисов Р.Ф. Теоретические и правовые проблемы обеспечения национальной безопасности Российской Федерации. Дисс. док. юр. наук. М., 2002, էջ 12:

թյուն ստացող վտանգները հենց իր՝ պետության համար, որոնք պետական անվտանգության ուղղակի և անմիջական վտանգներ են: Դրա դրսևորման օրինակներից է իշխանական լիազորությունների մասնավորեցումը, օրինակ՝ կոռուպցիան կամ պետական շահերի դավաճանության այլ ձևերը⁸: Այս մոտեցման մեջ նվաճվում է պետության կառույցի և ներքին գործառույթավորման՝ որպես ազգային անվտանգության վտանգի վերածման տեսական հնարավորության կանխատեսումը, ինչը պայման է դրա դեմ գործնական, իրավական քայլեր ձեռնարկելու համար: Այստեղ հույսը միայն հասարակական վերահսկողության հետ կապելը չի կարող լինել խնդրի լուծման միջոց, որովհետև ինքը՝ հասարակությունը, կարող է կոնկրետ իրավիճակում լինել քաղաքական-իրավական գործընթացներից օտարված, պասիվ: Հետևաբար՝ պետության ներսում պետք է լինեն ազգային անվտանգության և դրա մասի՝ պետական անվտանգության ապահովման, ներհամակարգային կառուցակարգեր, որոնք ընդունակ են լրիվ չեզոքացնելու այդ բնույթի վտանգները:

Այսպիսով՝ ըստ Ռ.Ֆ. Իդրիսովի՝ **առաջին** պետությունն ազգային անվտանգության ապահովման գործիք է, **երկրորդ**. այդ գործիքն ինքը կարիք ունի սեփական անվտանգության ապահովման, **երրորդ**. միևնույն ժամանակ՝ պետությունն իրենում պարունակում է անվտանգության յուրահատուկ սպառնալիքներ, որոնք ծագում են պետության բնույթից ու դրա գործառույթավորման յուրահատկություններից⁹, **չորրորդ**. պետությունից բխող վտանգները չեն ծնվում հանկարծակի: Ի սկզբանե դրանք գոյություն ունեն ցանկացած պետության մեջ, սակայն իրենց զգացնել չեն տալիս՝ դրանց հակազդող իրավական ու կազմակերպական կառուցակարգերի, ինչպես նաև պետական հա-

մակարգում գործող հատուկ մարմինների ու կառույցների շնորհիվ:

Ընդգծելով այս հեղինակի ներդրումն սպառնալիքների այդ երեք տեսակի առանձնացման գործում՝ անհրաժեշտ է, սակայն, նշել, որ դրանում կան նաև որոշակի անորոշություններ, օրինակ՝ «պետության բնույթ» ձևակերպումը: Տեսականորեն անբացատրելի է մնում այն հանգամանքը, թե ինչն է «պետությունից բխող վտանգներն» ի սկզբանե բնութագրական իրեն: Այս տեսական անորոշություններն ու տարակուսանքները կարիք ունեն գիտական իմաստավորման, բացահայտման, մեկնաբանման: Բայց Ռ.Ֆ. Իդրիսովը, վեր չհանելով պետությունից ելնող ազգային անվտանգության սպառնալիքների հաղթահարման համապատասխան տեսական հիմքերը, փորձել է, այնուամենայնիվ, թվարկել դրանցից ամենից նշանակալիները ՌԴ-ի համար: Այդ սպառնալիքներից ամենասրվածները, նրա կարծիքով, համարվում են համակարգայինները: Պետությունից ելնող սպառնալիքների շարքում այս տեսաբանը տեղ է հատկացնում՝ ա) կայացող քաղաքացիական հասարակության (ներառյալ տեղական ինքնակառավարման) նկատմամբ արդի պետության էքսպանսիոնիստական ձգտումները, բ) պետության կառույցների գործունեության հետևանքով ՌԴ դաշնային կառուցվածքին սպառնացող վտանգները, գ) պետության մեղքով գործուն, հեղինակավոր, արդյունավետ կերպով չձևավորված դատական իշխանությունը, դ) գործադիր իշխանության գերիշխանությունը երկրի իշխանական կառույցում, ե) բոլոր տեսակի օրենսդիր մարմիններում կուսակցական ներկայացուցչության խնդիրը, զ) պետական կառավարման կոնկրետ կառուցմամբ, իսկ ավելի ճիշտ՝ համակարգերի ու կառուցակարգերի կառուցվածքակերտությամբ պայմանավորված սպառնալիքները¹⁰, է) պետու-

⁸ Տե՛ս Идрисов Р.Ф. Теоретические и правовые проблемы обеспечения национальной безопасности Российской Федерации. Дисс. док. юр. наук. М., 2002, էջ 57:

⁹ Ռ.Ֆ. Իդրիսովի գնահատմամբ՝ Ռուսաստանի նորագույն շրջանի պատմությանը հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ հենց պետությունը և դրա համակարգային տարրերը վերածվել են ազգային անվտանգության սպառնալիքի: Օրինակ՝ պետական հեղաշրջումները, պուտչերը, որոնք կազմակերպվում են կառավարող էլիտայի կողմից՝ պետության ապարտի և ուժային կառույցների միջոցով (տե՛ս Идрисов Р.Ф. Теоретические и правовые проблемы обеспечения национальной безопасности Российской Федерации. Дисс. док. юр. наук. М., 2002, էջ 60):

¹⁰ Այդ սպառնալիքները պայմանավորում են պետական ու հասարակական կյանքի ապակայունացում մինչև այն մակարդակ, որ առաջանում են համապատասխան վտանգներ: Դրանք ամենից շատ են գործադիր իշխանության ոլորտում (տե՛ս Идрисов Р.Ф. Теоретические и правовые проблемы обеспечения национальной безопасности Российской Федерации. Дисс. док. юр. наук. М., 2002, էջ 64-66):

թյան առաջացրած գործառնությանին սպառնալիքները¹¹, ը) կադրային սպառնալիքները, այսինքն՝ սպառնալիքները, որոնք բխում են պետական իշխանության մարմիններում պետական պաշտոններ զբաղեցնող անձանցից¹²:

Ավարտելով Ռ.Ֆ. Իդրիսովի՝ ազգային անվտանգության հայեցակարգի վերլուծությունը՝ կարող ենք եզրակացնել, որ նրա ներդրումն ազգային անվտանգություն տեսության մեջ պետությունից ելնող ազգային անվտանգության սպառնալիքների գաղափարի և դրա դրսևորման ձևերի մշակման մեջ է¹³: Մյուս ներդրումն այդ սպառնալիքները պետության կառուցվածքային և գործառնությանին կողմերին վերագրելն է: Տեսական այս մշակումները համարել վերջնական ու ամբողջական, երևի թե, հնարավոր չէ, որովհետև առաջին իսկ հայացքից սպառնալիքների շարքում բացակայում է պետության էության կողմին վերաբերող սպառնալիքների խումբը: Ինքը՝ Ռ.Ֆ. Իդրիսովը, իր առաջադրածը համարում է ընդամենը խնդրի վերհանում, բարձրացում, խնդիր, որ առաջնային նշանակություն ունի արդի պետականակերտության համար: Նրա կարծիքով՝ այդ խնդիրը կարիք ունի մանրագնին իմաստավորման՝ արագացված կերպով անվտանգության ապահովման գլխավոր գործիքի՝ պետության ամրապնդմանն ուղղված միջոցառումների լայն համալիրի մշակման համար: Համալիր միջոցառումներից մեկն էլ հիմնախնդրի համակարգային վերլուծության հիմքերով գիտական իմաստավորումն է, որովհետև, ինչպես նկատեցինք, բոլոր վերը քննարկված տեսաբանների մոտեցումների վերլուծության ընթացքում պետություն – ազգային անվտանգություն – օբյեկտ – սուբյեկտ հիմնահարցի իմաստավորումներին բնորոշ են մի շարք թերություններ, այն է՝ անհամակարգու-

թյունը, ինչի պատճառով տարբեր տեսաբաններ առաջ են քաշում պետությանը վերաբերող ու պետությունից ելնող սպառնալիքների տարբերությամբ շրջանակ՝ դրանում երբեմն ներառելով նաև քաղաքական, սոցիալական կամ սոցիոլոգիական բնույթի գործոնները: Մյուս թերությունը, որ բնորոշ է անվտանգաբանության տեսաբանների հայեցակարգերին, կարելի է անվանել դրվագայնությունը, երբ վեր են հանում հարցերի ու սպառնալիքների ոչ ամբողջ համալիրը, ինչի հետևանքով հայեցակարգերը կորցնում են իրենց բազմակողմանիությունը և համալիրությունը: Այս թերությունների պատճառի հիմքում ընկած է տեսամեթոդաբանական հետևողականության պակասը: Կարելի է ասել՝ ազգային անվտանգաբանության տեսությունը չի կարողանում լուծել բարձրացված հիմնախնդիրն իր գիտական մեթոդաբանության հիման վրա (եթե ինքը, իհարկե, ունի այդ ինքնուրույն մեթոդաբանությունը): Այս հակասության լուծման ուղին ավելի ընդհանրացված տեսությանը դիմելն է, որն ունակ կլինի լուծելու առաջադրված գիտական խնդիրը՝ իր մեթոդաբանական ու ճանաչողական ներուժի օգտագործմամբ: Քանի որ խոսքը պետության մասին է, ուրեմն՝ այդպիսի գիտություն կարող է հանդիսանալ պետության և իրավունքի տեսությունը և, հատկապես, նրա՝ պետականագիտություն կոչվող մասը: Պետության տեսության կողմից արդեն ճանաչված՝ պետության ծագման, գործողության ու զարգացման հիմնական ու ընդհանուր օրինաչափությունները և կատեգորիաները հնարավորություն կտան ազգային անվտանգություն – պետություն հարաբերակցության խնդիրը գիտական տեսանկյունից դարձնելու հետևողական, ամբողջական, համալիր, համակարգային:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

¹¹ Գործառնությանին բնույթի սպառնալիքներն ապակայունացնում են պետական կառավարման համակարգը, նվազեցնում նրա մարմինների գործառնությանին արդյունավետությունը մինչև այն աստիճան, որ հանգեցնում են պետության՝ որևէ կարևոր պարտականության չկատարմանը, իսկ դա արդեն ազգային անվտանգության վտանգ է (տես Идрисов Р.Ф. Теоретические и правовые проблемы обеспечения национальной безопасности Российской Федерации. Дисс. док. юр. наук. М., 2002, էջ 66)

¹² Սպառնալիքների այդ խումբը ճանաչում է նաև Ա.Ա. Պրոխոջև (տես Прохожев А.А. Национальная безопасность – новая актуальная дисциплина //Государственная служба России. Ежегодник, М., 1997, էջ 127-135):

¹³ Նրան այս հարցում հարում են նաև այլ հեղինակներ (այդ մասին տես Дмитриев Ю., Петров С., Идрисов Р. Государство как субъект обеспечения национальной безопасности // Политика и право. 2001, №11):

ՆԵՐՍԵՍ ԶԵՅՆԱԼՅԱՆ

Ստրասբուրգի համալսարանի իրավունքի, քաղաքական գիտությունների և կառավարման ֆակուլտետի «Քրեական իրավունք և քրեական գիտություններ» մագիստրատուրայի ուսանող

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՏԱՊԱԼԵԼԸ»՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն. «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել (...)»:¹ *Nullum crimen sine lege (այսուհետ՝ NCSL)* սկզբունքը, իր առաջացման ժամանակաշրջանից սկսած, հիմնարար նշանակություն է ձեռք բերել պետությունների իրավական համակարգերի ձևավորման համար, ինչպես նաև կազմել է անձին քրեական պատասխանատվության ենթարկելու ուղենիշը: Որոշ գիտնականներ պնդում են սկզբունքի բրիտանական ծագումը²՝ հղում անելով «Ազատությունների մեծ խարտիային», որում ամրագրվել էր, որ անձը կարող է պատժվել բացառապես իր հավասարների դատի կամ օրենքի հիման վրա:³ Հետագայում սկզբունքն ուղղակիորեն և հստակ ձևակերպմամբ ամրապնդվեց նապոլեոնյան Ֆրանսիայի քրեական օրենսգրքում, ըստ որի՝ քրեական իրավախախտումը կարող էր պատժվել միայն մինչ արարքը հրապարակված օրենքի հիման վրա:⁴ Իսկ դարավերջին հարևան Բելգիայում ուղղակիորեն նշում էին, որ իրավախախտման համար կարող են պատժվել կատարումից առաջ ընդունված օրենքի հիման վրա: Հատկանշական է, որ քրեական օրենսգրքի այս դրույթի ձևակերպումն անփոփոխ է ընդունման պահից սկսած՝ ավելի քան 150 տարի:⁵

Քրեական դատավարության ընթացքում ձևավորվող իրավահարաբերությունների շրջանակներում պետության կողմից անձի նկատմամբ կարող են կիրառվել դատավարական հարկադրանքի կամ խափանման միջոցներ,

ինչպես նաև եզրափակիչ փուլում նրա նկատմամբ նշանակվել այնպիսի պատիժ, որի հետևանքով լրջագույն կերպով սահմանափակվում են վերջինիս իրավունքները և հիմնարար ազատությունները: Այս համատեքստում անհերքելի է, որ քրեական վարույթն անձի և պետության միջև ծագող իրավահարաբերությունների այն հարթությունն է, որտեղ անձանց սահմանադրական իրավունքների ոչ իրավաչափ սահմանափակումների ռիսկը հասնում է առավելագույնի: Քննարկվող սկզբունքը, ըստ էության, ամուր երաշխիք է և իրականացնում է նախականիսիզ գործառույթ պետության ոչ իրավաչափ միջամտության ու հնարավոր ոտնձգությունների նկատմամբ:

NCSL սկզբունքի էությունն ու բովանդակությունը լիովին պատկերացնելու համար անհրաժեշտ է դիտարկել այդ սկզբունքն իր կառուցվածքային տարրերի հետ: Ըստ որում՝ դա իր մեջ ամբողջացնում է՝ 1) *հետադարձ ուժի արգելքը*, 2) *անալոգիայի արգելքը*, 3) *իրավական որոշակիությունը*, 4) *«չգրված» քրեաիրավական դրույթների կիրառման արգելքը*:⁶

Վերը նշված տարրերը, ըստ երևույթին, պարզաբանվում են քրեական իրավունքի ընդհանուր մասի դասընթացի շրջանակներում, իրենց նշանակությամբ հիմնարար են ու դասագրքային, քանզի կազմում են քրեական իրավունքի հատուկ մասի, ինչպես նաև քրեական օրենքի կիրառման հիմնասյուները:

Հետադարձ ուժի արգելքը թույլ չի տալիս, որ հանցավոր արարքի կատարումից հետո ստեղծված նորմի հիման վրա անձը ենթարկվի

¹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 72, 2015 թվականի փոփոխություններով:
² «Nullum crimen sine lege», Stefan Glaser, Journal of Comparative Legislation and International Law, Vol.24, No.1 (1942): Cambridge University Press, p. 29.
³ Ազատությունների մեծ խարտիա, 1215թ., հոդված 39:
⁴ Code Pénal de l'Empire Français, 1810, Article 1, alinéa 4.
⁵ Code Pénal de Royaume Belgique du 09 Juin 1867, 1867-06-08/01, Article 2.
⁶ «Nulla poena nullum crimen sine lege», Claus Kieß: Max Planck Encyclopedia of Public International Law, 2010.

քրեական պատասխանատվության, իսկ *անալոգիայի արգելքը*, իր հերթին, թույլ չի տալիս կարգավորման *բացակայության* պայմաններում նման իրավիճակներում մեկ այլ նորմի կիրառելիությունը: *Իրավական որոշակիությունը* պահանջ է պետությանը, որպեսզի քրեական օրենքի բովանդակությունը լինի հնարավորինս պարզ և թույլ տա անձանց հստակորեն կանխատեսել իրենց արարքների իրավական հետևանքները, արարքի հանցավոր լինելը: Վերջին կետն իմպերատիվ պահանջ է անմիջական իրավակիրառողներին, որի նպատակն է ապահովել նախորդ երեքի կենսագործումը:

Հանցավոր արարքի՝ քրեական օրենքով նախատեսված լինելը

Քննարկման առարկա հանդիսացող սկզբունքը ներկայումս թե՛ ներպետական, թե՛ միջազգային նշանակություն ունեցող իրավական փաստաթղթերի անբակտելի մաս է:

«Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: (...)»⁷

«Ոչ ոք չի կարող պատասխանատվության ենթարկվել հանցանքի կամ դելիկտի համար, որի բովանդակային տարրերը սահմանված չեն օրենքով (...)»⁸

«Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով: (...)»⁹

Ակհայտ է, որ ամբողջ աշխարհում հաստատված և չլիճարկվող հանգամանք է արարքի հանցավորության՝ օրենքով սահմանված լինելը: Միևնույն ժամանակ՝ պետք է նշել, որ բազմաթիվ քննարկումներ և տարակարծություններ է առաջացնում ձևակերպման բովանդակությունը, այսինքն՝ այն, թե ի՞նչ է պետք հասկա-

նալ՝ «քրեական օրենքով նախատեսված լինել» ասելով: Խնդիրը հստակ պարզաբանելու համար անհրաժեշտ է բնորոշել «հանցավոր արարքը», դրա տարրերի սահմանված լինելը, ինչպես նաև օրենքի կիրառելիության հնարավորությունը կոնկրետ արարքի կատարման փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակներում: Այսինքն՝ պարզաբանման ենթակա իրավական խնդիրը հետևյալն է՝ արարքի հանցավոր լինելու քրեաիրավական ձևակերպումը կարող է տրված լինել առերևույթ մեկ այլ հանցագործության սահմանման մեջ՝ նկարագրելով դա օբյեկտիվ կողմից արտահայտման ձևով, թե՛ ոչ:

Պետության պոզիտիվ պարտականություններից է իրավական որոշակիության ապահովումը, ինչը ենթադրում է այնպիսի իրավանորմերի առկայություն, որոնք իրենց բնույթով կլինեն կանխատեսելի, թույլ կտան պետության իրավասության շրջանակներում գործող անձանց հստակ կանխատեսել ու իմանալ իրենց արարքների իրավական հետևանքները: Նշվածը, ի թիվս այլոց, պայմանավորում է երկրում իրավական անվտանգության մթնոլորտը, ինչը «անձի, հասարակության և պետության սահմանադրական և օրինական շահերի պաշտպանվածությունն է՝ իրավական կարգավորման միջոցով»¹⁰: Միևնույն ժամանակ՝ պետք է համաձայնել այն մոտեցման հետ, որ իրավական անվտանգության խնդիրն է ոչ միայն պաշտպանել սուբյեկտի շահերը, նվազեցնել, փոքրացնել, կանխարգելել, վերացնել վտանգներն ու սպառնալիքները, այլ նաև երաշխավորել առաջընթաց զարգացումը:¹¹ Սույն դրույթները հատկապես պարտադիր նշանակություն ունեն քրեական իրավունքի տեսության, ինչպես նաև պետության քրեաիրավական օրենսդրության համար՝ արդեն իսկ նշված պատճառաբանություններով առ այն, որ այս ոլորտում հաստատվող իրավահարաբերությունները հիմնովին տարբերվում են իրենց բովանդակությամբ:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

⁷ Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, as amended and supplemented by additional protocols, 1950, Article 7, p. 1.
⁸ Code Pénal de la République française de 22 juillet 1992, version en vigueur 7 aout 2018, Article 113-1, alinéa 1
⁹ ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, 2003թ., հոդված 12 մաս 1:
¹⁰ Шабуров А.С. Правовая безопасность в системе национальной безопасности. Вестник Южно-Уральского государственного университета. Серия: Право 15, N3, 2015, с. 24.
¹¹ Գ. Հարությունյան, «Երկրի իրավական անվտանգության երաշխավորումը որպես սահմանադրական ժողովրդավարության հաստատման կարևոր գրավական», 2017թ.

Քրեական օրենսգրքում հատուկ մասի ցանկացած հոդվածի դիսպոզիցիա պետք է շարադրված լինի առավելագույն հստակությամբ և կոնկրետ հանցակազմի տարրերի ճշգրիտ նկարագրությամբ: Նման որոշակիության շնորհիվ՝ արարքի քրեաիրավական որակման միջոցով հնարավոր կլինի անձին մեղադրանքի առաջադրման փուլում իրականացնել անհրաժեշտ համադրումները վերջինիս արարքի և հոդվածում նկարագրված հանցակազմի տարրերի հետ, որպես արդյունք՝ կատարել իրավական եզրահանգումները՝ վերջնականապես ձևակերպելով մեղադրանքը:

Ըստ էության՝ քննարկվող հասկացության՝ «հանցավոր արարքի» բնորոշումը լավագույնս նկարագրելու համար արդյունավետ միջոց է մարդու իրավունքների պաշտպանության տարածաշրջանային գործուն համակարգի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումների համատեքստում դիտարկելը, որից հետո հնարավոր կլինի համադրել ՀՀ քրեական օրենսգրքում առկա կարգավորումների հետ:

Ստրասբուրգի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝ «քրեական իրավախախտումը» գնահատելու համար պետք է նկատի ունենալ էնգելյան երեք չափորոշիչ, որոնք են.

- ներպատական օրենսդրության մեջ առկայությունը,
- հանցավոր արարքի բուն էությունը,
- հավանական պատժի խստության աստիճանը:¹²

Համակարգային վերլուծության ենթարկելով խնդրի առարկայի շուրջ պարզաբանման ենթակա հարցը՝ եզրակացնում ենք, որ վերը նշված չափորոշիչների առկայության պայմաններում էլ գնահատման է ենթակա այն, թե առ-

կա կարգավորումը և արարքի նկարագրությունը բավարարում են որակական չափանիշների, մասնավորապես՝ որքանով են հասանելի և կանխատեսելի:¹³

Միաժամանակ՝ արձանագրում ենք, որ ժամանակի ընթացքում քրեական օրենքի գործողությունը քաղաքացիների վարքագծի վրա ազդելու պետության իրավասության ապահովումն է, ինչպես նաև օրենսդրի կողմից սահմանված ժամանակահատվածում¹⁴ հանցագործության կատարման հետևանքով ծագած իրավահարաբերությունների կարգավորումը դրա սուբյեկտների միջև:¹⁵

Քրեական իրավունքի տեսության մեջ առկա դիրքորոշման համաձայն՝ քրեական օրենքի գործողության կարևոր հատկանիշ է ոչ միայն իրավաբանական ուժ ունենալը, այլ նաև որոշակի դեպքում կիրառման հնարավորությունը՝ կոնկրետ քրեական գործի լուծման նպատակով:¹⁶ Այսինքն, քրեաիրավական արգելքների խախտման փաստի առթիվ իրավապահ մարմինները պետք է հնարավորություն ունենան կիրառելու տվյալ քրեական օրենքի նորմերը:¹⁷

Իրավակիրառման եռափուլ համակարգում հատկապես պետք է ընգծել երկրորդ՝ իրավական նորմի ընտրության և վերլուծության փուլը, որի ընթացքում տեղի է ունենում արարքի իրավաբանական որակում, ինչը մտահանգում է, երբ իրավակիրառ մարմինը որոշում է իրավունքի համապատասխան ճյուղը, դրա շրջանակներում բացահայտում անհրաժեշտ իրավական ինստիտուտը և կիրառման ենթակա իրավական նորմը, ինչից հետո ստուգվում է կիրառման ենթակա նորմի գործողությունը ժամանակի ընթացքում, տարածության մեջ և, ի վերջո՝ մեկնաբանման միջոցով պարզաբանվում է նորմի բովանդակությունը:¹⁸

¹² Engel and Others v. the Netherlands, 8 June 1976, Series A no. 22.

¹³ S.W. v. the United Kingdom, 22 November 1995, Series A no. 335-B, Cantoni v. France, 15 November 1996, Reports of Judgments and Decisions 1996-V; Kafkaris v. Cyprus [GC], no. 21906/04, ECHR 2008; Del Río Prada v. Spain [GC], no. 42750/09, ECHR 2013; Perinçek v. Switzerland [GC], no. 27510/08, ECHR 2015.

¹⁴ Օրենքը ուժի մեջ մտնելուց՝ մինչև ուժը կորցրած ճանաչելը:

¹⁵ Энциклопедия уголовного права. Т. 2. Уголовный закон.- Издание профессора Малинина, Санкт-Петербург, 2005г., с. 78.

¹⁶ Уголовный закон и его применение, Брайнин Я.М., Монография.- Москва: Юридическая литература, 1967. 240 с., с. 130.

¹⁷ Теория права, Алексеев С. С.- Москва: Издательство БЕК, 1995.- 320 с., с. 178.

¹⁸ «Պետության և իրավունքի տեսություն: Ուսումնական ձեռնարկ» / Հեղ. խումբ: Գիտ. խմբ՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան – 2-րդ լրամշակված հրատ.- Երևան: Լուսարաց հրատ., 2016թ.- 628 էջ: էջ 469:

Ելնելով վերոգրյալից՝ ցանկացած դեպքում կոնկրետ իրավական նորմի կիրառելիության հարցը որոշելու համար անհրաժեշտ է պարզել, թե քննարկվող ժամանակահատվածում տրամաբանական սիլոգիզմի նման հաջորդականության դեպքում հնարավոր կլինե՞ր կատարված արարքը որակել որպես հանցավոր և դրա հատկանիշները նույնացնել քրեական օրենսգրքի հատուկ մասի որևէ հոդվածով բնութագրված հանցագործության հետ:

**Սահմանադրական կարգը տապալելը.
300.1-րդ հոդվածի կիրառելիությունը**

Սույն աշխատության հիմնական նպատակն է նախորդիվ կատարված վերլուծությունները և տեսակետները համադրել վերջերս ՀՀ իրավակիրառ պրակտիկայում տեղի ունեցած դեպքերի, դրանցում տեղ գտած իրավական լուծումների և տեսակետների հետ:

2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությունը նշում է, որ. «(...) Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: (...)»¹⁹:

Նկատի ունենալով սահմանադրական նշված ձևակերպումները, ինչպես նաև նախորդիվ մեջբերված իրավաբան-գիտնականների տեսակետները, այլ երկրների փորձը և վերպետական դատական աստանի դիրքորոշումները՝ հաջորդիվ դիտարկման ենթակա են քննարկվող հանցագործության տարբեր ձևակերպումները, տարբեր ժամանակներում ՀՀ քրեական օրենսգրքում:

ՀՀ քրեական օրենսգիրքը 2008 թվականին սահմանադրական կարգի տապալումը նույնպես ենթադրում էր հանցավոր արարք, սակայն դիտվում էր որպես պետական իշխանության յուրացման ձև: Հանցավոր էին սահմանվում «պետական իշխանությունը յուրաց-

նելը՝ (...), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն կամ (...) ուղղված գործողությունները»: Հանցագործության համար նախատեսված էր պատիժ ազատազրկման ձևով՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:²⁰ Իր տեսակով դա առանձնապես ծանր հանցագործություն էր:

Սահմանադրական կարգի հիմունքներն առաջին հերթին ամրագրում են, թե ում է պատկանում իշխանությունը, ինչպես է իրականացվում այդ իշխանությունը, և ինչ մարմիններ են կոչված իրականացնելու: ՀՀ Սահմանադրության առաջին երեք անփոփոխ հոդվածներում ամրագրված են ժողովրդավարական, իրավական պետության սկզբունքները, ժողովրդի ինքնիշխանությունը և մարդու ճանաչումը՝ որպես բարձրագույն արժեք:²¹ Այս սկզբունքներն ուղենիշ են հանդիսացել ՀՀ Սահմանադրության ողջ տեքստում և հիմնարար նշանակություն ունեն սահմանադրական ինստիտուտների ձևակերպման համար:

Որպես սահմանադրական ամրագրում ունեցող հիմնարար սկզբունքներ՝ հանրապետությունը, ինքնիշխանությունը, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության սկզբունքներն առավել ընդհանուր ու ելակետային են, որոշում են պետության կազմակերպման ու գործունեության մյուս սկզբունքները, ինչպես նաև պետության սոցիալական էությունը և առաքելությունը, պետության կազմակերպման և գործունեության ելակետային, հիմնական հարցերը (գործառույթները, կառուցվածքը, լիազորությունները և այլն):²²

Այսպիսով՝ մի շարք սահմանադրագետներ բնորոշում են սահմանադրական կարգը որպես պետության կազմակերպման կարգն ամրագրող իրավահարաբերությունների այնպիսի համակարգ, որի պայմաններում ճանաչվում և երաշխավորվում են մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, իսկ պետությունը

¹⁹ ՀՀ Սահմանադրություն, հոդված 22, պարբ. 4, 2005 թվականի փոփոխություններով:
²⁰ ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, 2003թ., ինկորպորացիան ըստ 28.11.2007թ. ՀՕ-275-Ն օրենքով փոփոխությունների, հոդված 300 մաս 1:
²¹ Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Սահմանադրությունը.– Վ. Պողոսյան, Ն. Սարգսյան.– Երևան: Տիգրան Մեծ, 2016թ.– 448 էջ: էջ 24-25:
²² Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / ընդհանուր խմբագրությամբ՝ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի.– Երևան: «Իրավունք», 2010թ.– 1086 էջ: էջ 40:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

ենթարկվում է իրավունքին և ամենից առաջ՝ ժողովրդավարական Սահմանադրությանը:²³

Մեջբերված հասկացության համատեքստում անհրաժեշտություն է առաջանում սահմանազատել, թե քննարկվող հոդվածով սահմանված հանցակազմի առկայության մասին խոսք կարող է լինել վերը նշված արժեքներին և կարգերին ցանկացած դեպքում ոտնձգելու պայմաններում, թե՛ Սահմանադրության կոնկրետ հոդվածով ձևակերպված ինստիտուտների նկատմամբ նպատակուղղված ոտնձգության դեպքում: Ինչպես արդեն նշվեց՝ սահմանադրական կարգը սահմանող պետականաստեղծ նշանակություն ունեցող սկզբունքները հիմնարար են սահմանադրական բոլոր ինստիտուտների համար և վերջին հաշվով ձևավորում են դրանք: Այդ իսկ պատճառով կարծում ենք, թե սահմանադրական կարգի տապալումը՝ որպես հանցավոր արարք, կատարված պետք է համարել բոլոր այն դեպքերում, երբ անձը նպատակադրված հանցավոր ոտնձգություն է կատարում ժողովրդի և պետականության համար հիմնարար ու կենսական նշանակություն ունեցող արժեքների և սկզբունքների նկատմամբ: Վերջիններիս սահմանափակումն առանձին ինստիտուտներով կամ Սահմանադրության հոդվածների միջոցով սահմանների մեջ դնելով միայն սահմանափակում է հանցավոր արարքին համաչափ հարկադրանքի միջոցով պատասխանելու պետության հնարավորությունը:

Համեմատականներ անցկացնելով Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքում տեղ գտած կարգավորումների հետ՝ նշենք, որ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի մի ամբողջ գլուխ նվիրված է սահմանադրական ինստիտուտների և տարածքային ամբողջականության դեմ ուղղված հանցագործություններին՝ «Այլ ոտնձգություններ Հանրապետության հանրային կարգի և տարածքային ամբողջականության նկատմամբ»:

Ֆրանսիայի Հանրապետության քրեական օրենսգրքի 412-1-րդ հոդվածով քրեորեն պատժելի է համարվում այն *ոտնձգությունը, որն արտահայտվում է մեկ կամ մի քանի բռնի գործողություններով, որոնք իրենց բնույթով վրանգի տակ են դնում Հանրապետության հանրային կարգը կամ ոտնձգում են Հանրապետության տարածքային ամբողջականությանը: Հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 30 տարի ժամկետով, և տուգանքով՝ մինչև 450000 եվրո գումարի չափով:*²⁴

Հանրապետության հանրային կարգը կազմում են Հինգերորդ հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված բոլոր ինստիտուտները:²⁵ Բացի այդ՝ քրեորեն պատժելի է ոչ թե կարգերի տապալումը՝ ինչպես Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ձևակերպման դեպքում, այլ անգամ՝ դրանք հանցավոր ոտնձգությունների միջոցով վտանգի տակ դնելը:

Այդուհանդերձ՝ պետք է նշել, որ հայրենական քրեական իրավունքում, իրավաբան-գիտնականների մեկնաբանությունների համաձայն՝ քննարկվող հոդվածով սահմանված հանցակազմի շրջանակներում այդպիսի գործողություններ կարող էին համարվել պետական իշխանության կառուցվածքի փոփոխությունները, *իշխանության առանձին ինստիտուտների վերացումը և դրանց փոխարեն նոր ինստիտուտների սահմանումը, կառավարման ժողովրդավարական սկզբունքների վերացումը, մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակումը* և այլն:²⁶

Ըստ էության՝ այս հանցագործության անմիջական օբյեկտը սահմանադրական կարգի հիմունքներն են, այն հիմնարար արժեքները, որոնք միավորում են հասարակությանը անկախ պետականություն ձևավորելիս, որտեղ ցանկացած անձ պետք է պաշտպանված լինի իր ֆիզի-

²³ Конституционное право Российской Федерации: учеб. для вузов / М. В. Баглай.– 6-е изд., изм. и доп.– Москва: Норма, 2007.– 784 с; стр. 115.

Конституционное право России: Учебное пособие / Катков Д.Б., Корчиги Е.В. / Отв. ред. академик РАЕН Ю.А. Веденеев.– Москва: Юриспруденция, 2001.– 288с.; с. 38.

²⁴ Code Pénal de la République française de 22 juillet 1992, version en vigueur 7 aout 2018, Article 412-1 alinéa 1, 2.

²⁵ Constitution de la République française du 4 octobre 1958, version consolidée au 07 août 2018.

²⁶ «Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ Մաս (երկրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով)»./Ս. Առաքելյան, Ա. Գաբրույան, Հ. Խաչիկյան, Գ. Ղազինյան, Ն. Մաղաքյան, Ա. Մարգարյան, Ս. Սիմոնյան, Վ. Քոչարյան.– Երևանի պետ. Համալս.– Երևան: ԵՊՀ հրատ. 2006թ.– 968 էջ: էջ 770:

կական անձեռնմխելիության և հիմնարար իրավունքների նկատմամբ ոտնձգություններից: Անձինք իրենց պաշտպանված պետք է զգան հասարակության այլ անդամներից, սակայն առաջին հերթին պետք է ապահովագրված լինեն այն անձանց ոտնձգություններից, *ուլքեր հենց կոչված են ապահովելու իրավակարգը և դրա երաշխավորն են*: Հանցագործության օբյեկտիվ կողմը, *inter alia*, կարող է դրսևորվել՝ հասարակության անվտանգության և նրա բնականոն կյանքի ապահովման նշանակություն ունեցող ինստիտուտները խաթարելով, դրանք վերացնելով կամ վերափոխելով, ինչի հետևանքով այդ ինստիտուտները կդառնան «գործիք» հանցավորի համար՝ վերացնելու ժողովրդավարական հասարակարգում ընդունված կառավարման սկզբունքները և կոպտորեն խախտելու անձանց հիմնարար ազատությունները և իրավունքները: Ընդ որում՝ նման գործողություններն առերևույթ կարող են արտահայտվել Սահմանադրությամբ կամ օրենքներով վերապահված լիազորությունների շրջանակներում գործելով, ինչպես նաև որոշակի կարգավիճակից բխող լիազորություններն իրականացնելով, որոնք, թեև ձևականորեն կարող են համապատասխան լինել սահմանադրական կամ օրենսդրական պահանջներին, այդուհանդերձ՝ բովանդակային դիտարկմամբ ակնհայտ կդառնա դրանց հանցավոր՝ *սահմանադրական կարգի հիմունքների հետ լիովին անհամապատասխան, դրանց դեմ և դրանց հակադրվող, այսինքն՝ հակասահմանադրական*²⁷ լինելը:

Առանձնահատուկ հետաքրքրության է արժանի այն հանգամանքը, որ ֆրանսիական քրեաիրավական օրենսդրությամբ իշխանության ներկայացուցչի՝ քննարկվող հանցակազմի սուբյեկտ հանդիսանալը ոչ միայն կասկածի տակ չի դրվում, այլ մեջբերված *հանցավոր արարքը հանրային կառավարման գործառույթներ ունեցող անձի կողմից կատարվելու դեպքում պատրվվում է ընդհուպ մինչև ցմահ ազատազրկմամբ և*

տուգանքով՝ մինչև 750000 եվրո գումարի չափով:²⁸ Ընդ որում՝ այդ դեպքում քրեական օրենսգրքով սահմանված կարգով նախատեսված են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվելու ավելի ծանր պայմաններ:²⁹

«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2009 թվականի մարտի 18-ի ՀՀ օրենքով մի շարք կառուցվածքային փոփոխությունների ենթարկվեցին քրեական օրենքով նախատեսված որոշ հոդվածներ, այդ թվում՝ 300-րդ հոդվածը, որը, ըստ էության՝ տրոհվեց երեք առանձին հոդվածի:³⁰ Օրենսգիրքը զուտ տեխնիկապես լրացվեց 300.1-րդ հոդվածով, որն իր բովանդակությամբ և կառուցվածքային տարրերով ամբողջովին համընկնում է նախորդ պարբերության մեջ ներկայացված «Սահմանադրական կարգը տապալելը» հանցագործության հատկանիշներին: Լրացված հոդվածը որպես հանցագործություն է սահմանում «Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմը փաստացի վերացնելը, որն արտահայտվում է իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ»:³¹ Այսպիսով՝ համադրելով մեջբերված ձևակերպումը մինչ փոփոխությունն առկա կարգավորման հետ, ինչպես նաև դիտարկելով դրանք ինչպես 2005թ., այնպես էլ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության համապատասխան դրույթների հետ՝ անխուսափելիորեն հանգում ենք այն եզրահանգման, որ լրացված 300.1-րդ հոդվածով կոնկրետացվել են, թե ինչպիսի ինստիտուտներ պետք է նկատի ունենալ սահմանադրական կարգը տապալելու մասին խոսելիս, երբ քննարկման առարկա դառնա դրանցից որևէ մեկը կամ դրանք ամբողջությամբ վերացնելը: Ընդ որում՝ արարքում քննարկվող հոդվածով նախատեսված հանցակազմն առկա է, երբ գործողությունների հետևանքով փաստացի վերացվում է թվարկված նորմերից ցանկացած մեկի գործողություն:

²⁷ «Հակասահմանադրական», «Արդի հայերենի բացատրական բառարան», Հատոր 1, Է. Բ. Աղայան: «Հայաստան» իրատ., Երևան 1976թ., էջ 794:

²⁸ Code Pénal de la République française de 22 juillet 1992, version en vigueur 7 aout 2018, Article 412-1 alinéa 3:

²⁹ Ibid., Article 132-23, alinéa 1, 2.

³⁰ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք, ՀՕ-53-Ն, 18 մարտի 2009թ., հոդված 7 և 8:

³¹ ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, 2003թ., հոդված 300.1-րդ մաս 1:

նը, ոչ թե նորմերի ամբողջ համակարգը՝ միասին վերցված: Այս կապակցությամբ պետք է նշել փաստաբան Արամ Վարդևանյանի հակափաստարկը, որով տեսակետ է ներկայացվում այն մասին, թե Սահմանադրական դատարանի կողմից 2018 թվականի մարտի 8-ի ՍԴՈ-736 որոշմամբ իր լիազորությունների կատարման պայմաններում խոսք չի կարող լինել սահմանադրական նորմի գործողության դադարեցման մասին, քանի որ նույն կերպ Նախագահի հրամանագիրը կարող էր վիճարկվել իր սահմանադրականության մասով: Մինչդեռ մեղադրանքում նշված հրամանագրում սահմանադրական կարգի տապալման մասին խոսվում է՝ ոչ թե սահմանադրական արդարադատության իրականացման մեխանիզմները փաստացի վերացնելով, այլ՝ նույն հրամանագիրն իր բովանդակային դրույթներով դիտարկելով դրա ստեղծած փաստացի դրության մասին, ինչն էլ հենց սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն է հանգեցրել: Ուշադրություն է պետք դարձնել, որ 300.1-րդ հոդվածով բռնությամբ սահմանադրական կարգը տապալելու մեղադրանք առաջադրելը կարող է իրավաչափ համարվել, քանզի նախկին 300-րդ հոդվածի շրջանակներում լիովին տեղավորվում է:

Այս ամենի հետ մեկտեղ՝ պետք է աչքաթող չանել նորմի մեկնաբանման կանոնները, որոնց համաձայն՝ «*նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս դա ընդունող մարմնի նպատակը*» (...):³² Եթե ընդհանուր դիտարկման առարկա ենք դարձնում 2009 թվականի մարտի 18-ի ՀՕ-53-Ն օրենքը, ապա պարզ է դառնում, որ դրանով քրեական օրենսգրքում պարզաբանվել են նաև մի շարք այլ հասկացություններ, որոնք մինչ այդ պարզապես ձևակերպված չեն եղել քրեական օրենսգրքում, սակայն դրանց առկայությունը կամ բացակայությունը ոչ մի կերպ չի պայմանավորում արարքի հանցավոր լինել կամ չլինելը: Այսինքն՝ վերլուծության շնորհիվ եզրակացնում ենք, որ օրենքի ընդունմամբ օրենսդրի կամքն ուղղված է եղել իրավական որոշակիության ամրապնդմանը:

Ավելին՝ եթե ևս մեկ անգամ էնգեյան սկզբունքների լույսի ներքո դիտարկենք ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի նախկին և ներկայիս ձևակերպումները, ինչպես նաև 300.1-րդ և 300.2-րդ հոդվածները և, դրանք միմյանց հետ համադրելով, կրկին համոզվում ենք դրանց կիրառելիության իրավաչափության հարցում, քանզի այն հանգամանքը, որ բաժանունը պարզ, տեխնիկապես տարբեր հոդվածների միջև բաժանումն է, ակնհայտ է դառնում նաև այն փաստից, որ երեք հոդվածով նախատեսված հանցագործությունները օրենսդիրը դիտել է հավասարապես հանրորեն վտանգավոր, երեքն առանձնապես ծանր հանցագործություններ են և, ինչպես մինչև 2009 թվականը 300-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը, այնպես էլ դրանից հետո երեք հոդվածով նախատեսված հանցագործությունները պատժվում են ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:

Նկարագրված ելակետային դրույթների պայմաններում ակնհայտ է ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի կիրառելիության իրավաչափությունը, ինչպես նաև իշխանության ներկայացուցչի կողմից նման հանցավոր արարքի կատարման որակումն այդ հոդվածով: Ավելին՝ նկատի ունենալով մի շարք հրապարակային հայտարարություններ, կոչեր կամ իրավապահ համակարգի աշխատանքին տրված որակումներ՝ ուղղված վարույթն իրականացնող մարմնին և դատավարական ղեկավարում իրականացնող պաշտոնատար անձանց, եզրակացնում ենք, որ գնահատականները, որոնք թեև առերևույթ միահյուսված են հիմնավոր իրավական փաստարկումների հետ, իրականում ոչ այլ ինչ են, քան իրավական դեմագոգիայի դրսևորում, որն իրականացվում է՝ օգտվելով հասարակության առանձին շերտերի մեջ վարույթն իրականացնող մարմինների նկատմամբ անվստահությունից, ինչպես նաև իրավագիտակցության ընդհանուր աստիճանից, ինչը, անկասկած, կարող է ազդել իրավակիրառ տարբեր երևույթների իրավաչափությունը գնահատելիս:

³² «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, ՀՕ-180-Ն, 2018թ., հոդված 41:

ՀԱՅԿ ՄԿՐՏՉԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱՆՁԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածում հանգամանորեն վերլուծության է ենթարկվում անձի անվտանգության ապահովման հիմնախնդիրը՝ քրեական իրավունքի տեսության և պրակտիկայի տեսանկյունից: Հոդվածում հատկապես ընդգծվում է, որ անձի անվտանգության քրեաիրավական պաշտպանությունն իր բացառիկ կարևորությամբ պետք է ներառվի ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության բովանդակության մեջ:

Բանալի բառեր. անձի անվտանգություն, քրեական իրավունք, քրեաիրավական պաշտպանություն, ազգային անվտանգության ռազմավարություն, մարդու իրավունքներ և ազատություններ:

АЙК МКРТЧЯН

Аспирант Института философии, социологии и права НАН РА

ОБЕСПЕЧЕНИЕ ЗАЩИТЫ ЛИЧНОСТИ С ТОЧКИ ЗРЕНИЯ ТЕОРИИ УГОЛОВНОГО ПРАВА И ПРИОРИТЕТА ПРАКТИКИ

В научной статье детально проанализирована основная проблема обеспечения безопасности личности с точки зрения теории уголовного права и практики. В статье особо подчеркнута то, что уголовно-правовая защита безопасности личности в своей исключительной важности должна быть включена в содержание стратегии национальной безопасности РА.

Ключевые слова: безопасность личности, уголовное право, уголовно-правовая защита, стратегия национальной безопасности, права и свободы человека.

НАԿ ՄԿՐՏԿԻԱՆ

Post-graduate student in the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

THE PROVISION OF PERSON'S SECURITY AS A PRIORITY IN CRIMINAL LAW THEORY AND PRACTICE

The article profoundly analysis the issue of person's security provision from the point of view of criminal law theory and practice. The article especially highlights that the criminal-legal protection of person's security should be included in the content of national security strategy of the RA.

Keywords: person's security, criminal law, criminal-legal protection, national security strategy, human rights and freedoms.

* * *

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

ԶԱՐՈՒՎ ԿՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պայմանագրային դասախոս

ԱՆՁԻ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՌ

Հոդվածում հեղինակի կողմից առաջ քաշված խնդիրներից և դրանց վերլուծության արդյունքներից, ինչպես նաև հեղինակի իրականացրած հետազոտություններից պարզվել է, որ անձի հոգեկանի պաշտպանական մեխանիզմները, մասնավորապես՝ արտամղումը, պրոյեկցիան, ինտելեկտուալիզացիան, տեղակալումը, բացասումը, հետադիմությունը, սուբլիմացիան, կարող են դառնալ կոռուպցիոն վարքագծի պատճառներ: Միաժամանակ նաև ներկայացվել է, որ պաշտպանական մեխանիզմներից որոշները համապատասխան իրավիճակում, կարող են դառնալ նաև հակակոռուպցիոն վարքագծի խթան:

Բանալի բառեր. կոռուպցիա, կաշառակեր, կոռուպցիոներ, արտամղում, պրոյեկցիա, ինտելեկտուալիզացիա, տեղակալում, բացասում, ինքնաարդարացում, հետադիմություն, սուբլիմացիա, կոռուպցիոն վարքագիծ, հակակոռուպցիոն վարքագիծ:

ЗРУИ АРУТЮНЯН

Преподаватель Академии Управления РА

ЗАЩИТНЫЕ МЕХАНИЗМЫ ЛИЧНОСТИ КАК ПРИЧИНА КОРРУПЦИОННОГО ПОВЕДЕНИЯ

Задачи, поднятые автором статьи, и результаты их анализа, а также исследования, осуществленные им, выявили, что защитные механизмы психики личности, в частности, вытеснение, проекция, интеллектуализация, замещение, отторжение, регресс, сублимация, могут стать причинами коррупционного поведения. В то же время также представлено, что в соответствующей ситуации некоторые из защитных механизмов могут стать стимулом антикоррупционного поведения.

Ключевые слова: коррупция, взяточник, коррупционер, вытеснение, проекция, интеллектуализация, замещение, отторжение, регресс, сублимация, коррупционное поведение, антикоррупционное поведение.

ZARUHI HARUTYUNYAN

Lecturer on contract basis at the Faculty of Trainings,
Qualification and Research Activities at Public Administration
Academy of the Republic of Armenia

PERSONAL PROTECTIVE MECHANISMS AS A CAUSE OF CORRUPTION BEHAVIOR

The tasks raised by the author of the article and the results of their analysis as well as the research carried out by the latter revealed that the protective mechanisms of the personality psyche, in particular, displacement, projection, intellectualization, substitution, rejection, regression, sublimation, can become the causes for corrupt behavior. At the same time, it is also presented that in an appropriate situation some of the protective mechanisms can become an incentive for anti-corruption behavior.

Keywords: corruption, bribe taker, corruptor, displacement, projection, intellectualization, substitution, rejection, regression, sublimation, corruption behavior, anti-corruption behavior.

* * *

ԵՐԵՄԻԱ ԱՍՏՏՐՅԱԼ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի
քրեաբան

ԱՐՄԵՆ ԴՈՒԿԱՍՅԱԼ

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո»
ՊՈԱԿ-ին կից Քրեաբանության կիրառական
հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի
գիտական խորհրդատու, ՀՀ ոստիկանության շտաբի պետ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԿԱՆԱՆՑ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ, ՄԱԿԱՐԴԱԿԸ, ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ)

Հանցավորության տարածվածության, հանրային վտանգավորության աստիճանի գնահատման համար անհրաժեշտ է իրականացնել հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության տվյալների վերլուծություն: Դա թույլ է տալիս գնահատել հանցավորության և դրա առանձին տեսակների վիճակը, մակարդակը, կառուցվածքը, զարգացման միտումները տեղի և ժամանակի կոնկրետ պայմաններում, հանցավորության դեմ պայքարի և դրա կանխարգելման գործում իրականացվող միջոցառումների արդյունավետությունը, հարաբերականորեն ճշմարտացի պատկերացում կազմել հանցավորության ապագա վիճակի մասին և դրա հիման վրա հանցավորության կանխման արդյունավետ միջոցներ մշակել:

Հոդվածում ներկայացվում է ՀՀ-ում կանանց հանցավորության վերաբերյալ պաշտոնական վիճակագրության մանրամասն վերլուծություն, ինչը թույլ է տալիս բացահայտել այդ հանցավորության մակարդակը, կառուցվածքը, շարժընթացը, զարգացման միտումները, ինչպես նաև հանցանք կատարած կանանց անձնային և սոցիալ-ժողովրդագրական որոշ առանձնահատկություններ:

Բանալի բառեր. հանցանք կատարած կանայք, հանցավորություն, պաշտոնական վիճակագրություն, կանանց հանցավորություն, քրեաբանություն:

ЕРЕМИЯ АСАТРЯН

Криминолог Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА

АРМЕН ГУКАСЯН

Научный советник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии при ГНКО “Национальное бюро экспертиз” НАН РА, начальник штаба Полиции РА, кандидат юридических наук, доцент

СОСТОЯНИЕ, УРОВЕНЬ, ДИНАМИКА И СТРУКТУРА ЖЕНСКОЙ ПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (НА ОСНОВЕ ОФИЦИАЛЬНОЙ СТАТИСТИКИ)

Для определения уровня распространенности преступности и его общественной опасности необходимо произвести анализ официальной статистики. Подобный анализ позволяет оценить состояние, уровень, строение, тенденции развития преступности и ее отдельных видов в условиях определенного места и времени, а также эффективность различных мероприятий в борьбе с преступностью и ее предотвращении, составить сравнительно реалистичное и правдивое представление о будущем состоянии преступности и на основе этого разработать эффективные меры для предотвращения таких преступлений.

В статье представлено подробное описание официальной статистики женской преступности в Республике Армения, что позволяет выявить ее уровень, структуру, динамику и тенденции развития, а также некоторые особенности – личностные и социально-демографические женщин, совершивших преступление.

Ключевые слова: женщины совершившие преступление, преступность, официальная статистика, женская преступность, криминология.

YEREMIA ASATRYAN

criminologist of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS, RA

ARMEN GHUKASYAN

scientific adviser of the Scientific Research Center of Applied problems in Criminology adjacent to “National Bureau of Expertises” SNPO NAS RA, the head of Headquarters of the Police of RA, PHD (Doc. of legal science), associate professor

FEMALE CRIMINALITY STATE, RATE, DYNAMICS AND STRUCTURE IN THE REPUBLIC OF ARMENIA (ON THE BASIS OF THE OFFICIAL STATISTICS)

To determine the degree of prevalence of crime and its public danger it is necessary to analyze the official statistics. It will allow to assess the situation, rate, structure, development trends of crime and its individual types in conditions of a particular place and time, effectiveness of various interventions in the fight against crime and its prevention, to make relatively truthful vision of the future state of crime and on its basis to develop effective measures for their prevention.

This article aimed at providing a detailed view of the official statistics of female criminality in the RA, which allows to identify their rate, structure, dynamics and development trends, as well as personal and socio-demographic characteristics of the women who have committed crime.

Keywords: women who have committed crime, crime, official statistics, female criminality, criminology.

* * *

ՊԱՐԳԵՎ ՕՇԱՆՅԱՆ

իրավաբանական գիտությունների թեկնածու

ՊԱՏԻԺԸ ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն գիտական հոդվածում հեղինակը, վերլուծելով տեսությունում և պրակտիկայում առկա հիմնադրույթներն ու առկա խնդիրները, ներկայացրել է պատիժը պայմանականորեն չկիրառելու օրենսդրական և դատական հիմնախնդիրները, վերլուծության ենթարկել դրանք և հանդես եկել օրենսդրական լրացման առաջարկությամբ:

Հեղինակի կողմից հոդվածում ներկայացվել են պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ մի շարք գիտնականների մոտեցումներ, գիտական աշխատություններ, հեղինակավոր կարծիքներ ու ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից կայացված մի շարք նախադեպային որոշումներ:

Հոդվածում նկարագրվում է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի օրենսդրական բացը, այդ հոդվածի բացասական կողմերը, և առաջարկ է արվում դա կարգավորել: Մասնավորապես՝ հոդվածով արված վերլուծության արդյունքով՝ հեղինակը եզրահանգում է, որ դատարանը, որպես կանոն, չպետք է պատիժը պայմանականորեն չկիրառի, եթե առկա չեն հանցավորի անձը բնութագրող «դրական» տվյալներ և պատիժն ու պատասխանատվությունը մեղմացնող, զոնտ մեկ հանգամանք, չպետք է պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացվի, եթե առկա են հանցավորի անձը բնութագրող «բացասական» տվյալներ և (կամ), առավել ևս, պատիժը և պատասխանատվությունը:

վրայությունը ծանրացնող թեկուզ և մեկ հանգամանք: Ինչպես նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին որոշում կայացնելիս՝ դատարանը պետք է պարտադիր պարտականություն սահմանի, որն էլ զգալիորեն կբարձրացնի պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի արդյունավետությունը, հատկապես՝ տուժողին պատճառված վնասի հատուցման պարտականություն սահմանելու մասով, որպիսի պահանջը, ինչպես նաև՝ դատապարտյալի վրա դրված այլ պարտականությունը չկատարվելու դեպքում նշանակված պատիժը պետք է կիրառվի:

Բանալի բառեր. պատիժը պայմանականորեն չկիրառել, նախադեպ, հանցավորի անձը բնութագրող տվյալներ, մեղմացնող հանգամանք, ծանրացնող հանգամանք, վնասի հատուցում:

ПАРГЕВ ОГАНЯН

Кандидат правоведения

ОСНОВНЫЕ ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ И СУДЕБНЫЕ ПРОБЛЕМЫ УСЛОВНОГО НЕПРИМЕНЕНИЯ НАКАЗАНИЯ

Проанализировав имеющиеся в теории и практике основные положения и проблемы, в настоящей научной статье автор представил основные законодательные и судебные проблемы условного неприменения наказания, проанализировал их и выступил с предложением о законодательном дополнении.

В статье автор представил подходы ряда ученых относительно условного неприменения наказания, научные работы, авторитетные мнения, а также ряд прецедентных решений Кассационного суда Республики Армения.

В статье описывается законодательный пробел статьи 70 Уголовного кодекса РА, его отрицательные стороны и предлагается урегулировать его. В частности, в результате проведенного в статье анализа, автор приходит к заключению о том, что, как правило, суд не должен условно не применять наказание, если не имеются «положительные» данные, характеризующие личность преступника, и хотя бы одно обстоятельство, смягчающее наказание и ответственность; никакого решения об условном неприменении наказания не должно быть вынесено, если имеются «отрицательные» данные, характеризующие личность преступника, и/или, более того, хотя бы одно обстоятельство, отягчающее наказание и ответственность. А также при вынесении решения об условном неприменении наказания суд обязательно должен установить ответственность, что существенно повысит эффективность института условного неприменения наказания - в частности, по части установления ответственности возмещения ущерба, причиненного потерпевшему, а в случае неисполнения требования, а также другой обязанности, возложенной на осужденном, назначенное наказание должно быть применено.

Ключевые слова: условное неприменение наказания, прецедент, данные, характеризующие личность преступника, смягчающее наказание, отягчающее наказание, возмещение ущерба.

PARGEV OHANYAN

Candidate of Law

MAIN LEGISLATIVE AND JUDICIAL PROBLEMS OF CONVENTIONAL NON-APPLICATION OF PUNISHMENT

Having analyzed the main provisions and problems available in the theory and practice the author outlined the main legislative and judicial problems of conventional non-application of punishment in this article, analyzed them and suggested to make legislative addition.

The author presented approaches of number of scientists regarding conventional non-application of the punishment, academic papers, weighty opinions, as well as number of precedent decisions of the Court of Cassation of the Republic of Armenia.

Legislative vacuum of article 70 of the Criminal Code of the Republic of Armenia, its negative sides are described in the article and it is suggested to regulate it. In particular, as a result of the made analysis the author concludes that as a rule the court mustn't conventionally not apply the punishment, if there are "positive" data regarding personality of the criminal and even one extenuating circumstance and liability; no decision on conventional non-application of punishment must be made if there are "negative" data regarding personality of the criminal and/or even one aggravating circumstance and liability. As well, at making decision of conventional non-application of the punishment the court shall establish liability by all means, which essentially increases efficiency of institute of conventional non-application of the punishment, mainly on the part of establishment of liability for compensation of a damage caused to the victim, in case of non-execution of a demand and other liability imposed on the convicted, the imposed punishment must be applied.

Keywords: conventional non-application of the punishment, precedent, data regarding personality of the criminal, extenuating circumstance, aggravating circumstance, compensation of damage.

ՀՈՎԱՍԵՓ ՔՈՉԱՐՅԱՆ

Հայ-ռուսական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի երկրորդ կուրսի մագիստրանտ

ՁԵՆՔԲԵՐՄԱՆ ՎԱՂԵՄՈՒԹՅՈՒՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆՎԱՏՄԱՍԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Հոդվածում քննարկվում է ՀՀ քաղաքացիական իրավունքի արդի հիմնախնդիրներից մեկը՝ ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականության իրավունքի ձեռքբերման հարցը: Հեղինակի կողմից միջազգային պրակտիկայի հանգամանալից ուսումնասիրման հենքի վրա առաջարկվել են օրենսդրական որոշ փոփոխություններ, որոնք նպատակ ունեն դյուրինացնելու իրավակիրառ պրակտիկան:

Բանալի բառեր. վաղեմությամբ իրավունքի ձեռքբերում, անշարժ գույք, իրավունքների գրանցում, պետական համակարգ:

ОВСЕП КОЧАРЯН

Студент 2-ого курса магистратуры Юридического факультета
Российско-Армянского университета

ПРИБРЕТАТЕЛЬСКАЯ ДАВНОСТЬ В УСЛОВИЯХ СИСТЕМЫ ГОСУДАРСТВЕННОЙ РЕГИСТРАЦИИ ПРАВ НА НЕДВИЖИМОЕ ИМУЩЕСТВО

В статье рассматривается одна из актуальных проблем гражданского права РА – вопрос приобретения права собственности по приобретательской давности. Автор, основываясь на международной практике, предлагает проведение некоторых законодательных изменений, которые направлены на облегчение правоприменительной практики.

Ключевые слова: приобретательская давность, недвижимое имущество, регистрация прав, государственная система.

HOWSEP KOCHARYAN

Russian-Armenian university, Faculty of law LLM,
2-nd year student

ACQUISITIVE PRESCRIPTION IN THE CONTEXT OF REAL ESTATE RIGHTS UNDER STATE REGISTRATION SYSTEM

The article deals with one of the actual problems of the Civil law of the RA - the problem of acquisition of property rights by acquisitive prescription. The author, examining international practice, suggests making some legislative changes, which have the purpose of facilitating the law-enforcement practice.

Keywords: acquisitive prescription, real estate, registration of rights, state system.

* * *

ԱՐՄԻՆԵ ՉՈՐԱՆՅԱՆ

ՀՀ փաստաբան

ՄԵԴԻԱՅԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄԻՋՈՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հոդվածում քննության է առնված «Մեդիացիայի մասին» ՀՀ օրենքով կարգավորվող մեդիացիոն ընթացակարգի կիրառման հնարավորությունն անհատական աշխատանքային վեճերի առնչությամբ՝ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական դատավարության ու աշխատանքային օրենսգրքերով նախատեսված կոնկրետ անհատական աշխատանքային վեճերին:

Բանալի բառեր. հաշտարարություն, միջնորդություն, մեդիատոր, վեճ, աշխատանքային վեճեր, կոնֆլիկտ, այլընտրանքային եղանակ:

АРМИНЕ ЧОБАНЯН

Член Палаты адвокатов в РА

ПРИМЕНЕНИЕ ПОСРЕДНИЧЕСТВА КАК ПРИМИРИТЕЛЬНОЙ ПРОЦЕДУРЫ ПРИ РАЗРЕШЕНИИ ИНДИВИДУАЛЬНЫХ ТРУДОВЫХ СПОРОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

В статье анализируется возможность использования процедуры медиации, регулируемой Законом РА “О медиации” применительно к конкретным индивидуальным трудовым спорам, предусмотренным Трудовым и Гражданско-процессуальным кодексом РА.

Ключевые слова: примирительная процедура, посредничество, медиатор, спор, трудовые споры, конфликт, альтернативный метод.

ARMINE CHOBANYAN

Chamber of Advocates in RA

THE USE OF MEDIATION AS CONCILIATION PROCEDURE TO RESOLVE LABOR DISPUTES AND CONFLICTS IN THE REPUBLIC OF ARMENIA

This article analyzes the possibility of using mediation procedure in regulated by the RA Law “On Mediation” with reference to specific individual labor disputes provided by the Labor and Civil procedure Code of the Republic of Armenia.

Keywords: conciliation, mediation, mediator, dispute, labor disputes, conflict, alternative method.

* * *

ԱՐՐԱՀԱՄ ԱՐՐԱՀԱՄՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՆՔՆԻՉԻՍԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԵՐՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՐԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածը նվիրված է պետության ինքնիշխանության և միջազգային կազմակերպությունների վերպետականության հարաբերակցության հիմնախնդիրների տեսական-իրավական վերլուծությանը՝ Եվրասիական տնտեսական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության օրինակով: Հեղինակը հետազոտության շրջանակում բացահայտել է Եվրասիական տնտեսական միության՝ որպես վերպետական միջազգային կազմակերպության բնութագրիչները՝ Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության երաշխավորման համատեքստում:

Միաժամանակ՝ ուսումնասիրության արդյունքով, հեղինակը կատարել է հետևյալ եզրահանգումները, որ՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում Հայաստանի Հանրապետության որևէ լիազորությունների փոխանցում չի կարող դիտարկվել որպես պետության ինքնիշխանությունից կամ դրա մի մասից հրաժարում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունը չի կարող մասնակիորեն իր ինքնիշխանությունը փոխանցել Եվրասիական տնտեսական միությանը, քանի որ ինքնիշխանությամբ օժտված է հենց միայն պետությունը:

Բանալի բառեր. ՀՀ Սահմանադրություն, Եվրասիական տնտեսական միություն, վերպետական միջազգային կազմակերպություն, պետության ինքնիշխանություն, միջազգային կազմակերպությանը պետության անդամակցություն:

АБРААМ АБРААМЯН

Аспирант кафедры юриспруденции
Европейской региональной образовательной академии

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ СООТНОШЕНИЯ СУВЕРЕНИТЕТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ И НАДГОСУДАРСТВЕННОСТИ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА В КОНТЕКСТЕ НОВЫХ КОНСТИТУЦИОННЫХ ПОЛОЖЕНИЙ

Статья посвящена теоретико-правовому анализу проблем соотношения суверенитета государства и надгосударственности международных организаций на примере членства Армении в Евразийском экономическом союзе. В ходе исследования автор раскрыл характеристики Евразийского экономического союза в качестве надгосударственной международной организации в контексте гарантии суверенитета Республики Армения. Кроме того, в результате исследования автор пришел к выводу, что передача каких-либо полномочий Республики Армения в рамках Евразийского

экономического союза не может рассматриваться как полный или частичный отказ от государственного суверенитета, а также, что Республика Армения не может частично передать свой суверенитет Евразийскому экономическому союзу, поскольку именно и исключительно государство надделено суверенитетом.

Ключевые слова: Конституция РА, Евразийский экономический союз, надгосударственная международная организация, государственный суверенитет, членство государства в международной организации.

ABRAHAM ABRAHAMYAN

Postgraduate of Law Department of European Regional Academy

FUNDAMENTAL ISSUES OF CORRELATION BETWEEN REPUBLIC OF ARMENIA SOVEREIGNTY AND EURASIAN ECONOMIC UNION SUPRANATIONALITY IN THE CONTEXT OF NEW CONSTITUTIONAL REGULATIONS

The article features the theoretical and legal analysis of the issues related to the relationship between sovereignty of a state and supranationality of international organizations by the example of Armenia's membership to the Eurasian Economic Union. In his research, the author has revealed the descriptors of the Eurasian Economic Union as a supranational international organization in the context of guaranteeing sovereignty of the Republic of Armenia. Also, as a result of the research, the author arrived at the conclusions below: any transfer of any powers of the Republic of Armenia within the Eurasian Economic Union may not be viewed as withdrawal of sovereignty of a state or part thereof; as well as the Republic of Armenia may not partially transfer its sovereignty to the Eurasian Economic Union as it is only the state that is endowed with sovereignty.

Keywords: RA Constitution, Eurasian Economic Union, supranational international organization, state sovereignty, state's accession to an international organization.

* * *

ԱՆԴՐԱՆԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ «ՊԵՏԱԿԱՆ» ԲՆՈՒՅԹԻ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Համակարգակառուցվածքային վերլուծությունը հիմք է տալիս առաջ քաշելու պետության՝ որպես ազգային անվտանգության սուբյեկտ-օբյեկտ երկմիասնական կազմությունից բխող ազգային անվտանգության սպառնալիքների ու վտանգների հետևյալ տեսակները՝ պետությանն սպառնացող վտանգներ, պետությունից ելնող կամ դրանով պայմանավորված սպառնալիքներ, որոնց հիմքում ընկած են պետության ներսում կազմակերպակառուցվածքային, գործառույթային, էական (բովանդակային) թերությունները: Այս հիմնախնդրի իմաստավորման, դրան բնորոշ թերություններն ու անորոշությունները հաղթահարելու ուղին դիմելն է ավելի ընդհանրացված գիտությանը՝ պետության և իրավունքի տեսությանը, որի մեթոդաբանական ու ճանաչողական ներուժը հնարավորություն կտա ազգային անվտանգության ու պետության հարաբերակցության խնդիրը գիտական տեսանկյունից դարձնելու առավել հետևողական, համակարգային-ամբողջական, բազմակողմանի ու համալիր:

Բանալի բառեր. ազգային անվտանգություն, սպառնալիք, պետական սպառնալիք, պետությունից ելնող սպառնալիք, կազմակերպակառուցվածքային, գործառնական:

АНДРАНИК ГЕВОРГЯН

Аспирант Института философии, социологии и права НАН РА

ТЕОРЕТИЧЕСКИЕ ПРОБЛЕМЫ УГРОЗ ГОСУДАРСТВЕННОГО ХАРАКТЕРА В СИСТЕМЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

Системно-структурный анализ двуединого состояния государства как объекта и субъекта национальной безопасности дает основание для выделения следующих видов угроз и опасностей национальной безопасности: опасности угрожающие государству, угрозы национальной безопасности, исходящие от государства или обусловленные им, в основе которого лежат организационно-структурные, функциональные и существенно-содержательные недостатки внутри государства. Способ понять эту проблему, преодолеть характерные недостатки и неопределенности, заключается в применении более обобщенной науки – теории государства и права, чей методологический и когнитивный потенциал позволит решить проблему взаимосвязи национальной безопасности и государства более последовательным, систематическим, всеобъемлющим, многогранным путем с научной точки зрения.

Ключевые слова: национальная безопасность, угроза, государственные угрозы, угрозы, исходящие от государства, организационно-структурные, функциональные.

● ՕՐԻՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 108 2018

ANDRANIK GEVORGYAN

Ph.D. student at the Institute of Philosophy,
Sociology and Law of NAS RA

THEORETICAL KEY ISSUES OF STATE-RELATED THREATS IN NATIONAL SECURITY

Constructional analysis gives us grounds to pose following threats and dangers of the national security resulting from the subject-object, twin condition of the state: Threats menacing the state, Threats resultant from the state or conditioned upon the state, the basis of which are organizational-structural, functional, essential(content) defects in the state. The way to make a sense and understand key issues, it's imperfections and ambiguities is referring to the "Theory of state and law", which's methodological and cognitive potential gives us the opportunity to describe national security and state correlation problem in more consistent, complete, comprehensive and complex way from the scientific view.

Keywords: national security, threat, state-related threat, threats resultant from state, organizational-structural, functional.

* * *

ՆԵՐՍԵՍ ԶԵՅՆԱԼՅԱՆ

Ստրասբուրգի համալսարանի իրավունքի, քաղաքական գիտությունների և կառավարման ֆակուլտետի «Քրեական իրավունք և քրեական գիտություններ» մագիստրատուրայի ուսանող

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԸ ՏԱՊԱԼԵԼԸ»՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

Սույն հոդվածում քննարկման առարկա է դարձվում բացառապես քրեական օրենքի հիման վրա պատասխանատվության ենթարկվելու սկզբունքը, որի շրջանակներում բացահայտվում է «քրեական օրենքով նախատեսված լինել» հասկացությունը: Աշխատության առարկան հանդիսացող իրավական նշանակություն ունեցող եզրույթները մեկնաբանվում և վերլուծության են ենթարկվում ներպետական օրենսդրության, տարբեր երկրների քրեաիրավական օրենսդրության և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի հիման վրա: Կատարված եզրահանգումների լույսի ներքո քննարկման առարկա է դարձվում «սահմանադրական կարգը տապալելու» քրեաիրավական նկարագիրը և ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի կիրառելիությունը:

Բանալի բառեր. օրինականություն, սահմանադրական կարգ, սահմանադրականություն, ՄԻԵԴ:

НЕРСЕС ЗЕЙНАЛЯН

Студент Уголовного права и криминалистических наук
Факультета права, политических наук и управления
Страсбургского Университета

“СВЕРЖЕНИЕ КОНСТИТУЦИОННОГО СТРОЯ” В УГОЛОВНОМ КОДЕКСЕ РА

В настоящей статье изучается принцип уголовной ответственности исключительно уголовным законом, и в рамках принципа обсуждается понятие, предусмотренное уголовным законом. Все юридические термины в работе анализированы в рамках армянского и международного законодательства а также по отношению решения Европейского суда по правам человека. По итогам исследования была выявлена уголовно-правовая характеристика свержения конституционного строя и правомерность применения статьи 300.1 уголовного кодекса РА.

Ключевые слова: законность, конституционный строй, конституционность, ЕСПЧ.

NERSES ZEYNALYAN

Student of Criminal Law and Criminal Sciences
Faculty of Law, Political Science and Governance
University of Strasbourg

“DESTRUCTION OF THE CONSTITUTIONAL ORDER” IN THE RA CRIMINAL CODE

The article discusses the principle non bis idem and discovers the notion of “prescribed by the law” in the light of the principle. Legal terms have been presented in the scope of case-law of European Court of Human Rights. Based on the results of the study, the article summarizes a criminal characteristic of “overthrowing of the constitutional order” and the applicability of article 300.1 of Criminal Code of RA.

Keywords: legality, constitutional order, constitutionalism, ECHR.

ՀՀ ԳՍՏԱՆՏԱՅՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ԴԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջները բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանք չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել.

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարահրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունը՝ առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցվածը թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: